


ԱՐՓԻ ՎԱՆԵԱՆ

ԴԵՊԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՆՍՏԱՎԱՅՐ
ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ-ԵՐԵԽԱԿԱՅԱԿԱՆ ՎԻՊԱԿ



ԱՐԵՄՏԱՐԱՅԵՐԷՆԻ ՎԵՐԱԾԵՑ

ՆԱՅԻՐԻ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Դեպի Աստուծոյ Նստավայր Չայաստան

«Երբեմն պետք է շրջիլ ողջ աշխարհը, հասկնալու համար,
որ գանձը թաղուած է տունիդ բակին մէջ՝ քու հողիդ մէջ»

Փառլո Քոելլօ

Նախաբան

.....
Ա. մաս

Հանրակառքը թրթռաց ու յանկարծ կեցաւ ճամբուն մեջտեղը: Ուղեւորներէն շատեր, որոնք հասցուցած էին արեւու շողերուն տակ քնանալ, արթնցան՝ վախցած ու զարմացած նայելով իրենց շուրջը: Քարքարոտ, գառիվեր ճանապարհ է. շուրջը ո՛չ գիւղեր կան, ո՛չ մարդու հետքեր:



-Յէ՛յ, ինչո՞ւ կեցանք,-լուեցաւ ուղեւորներէն մէկուն՝ Աշոտին ձայնը:

-Չեմ գիտեր, մեքենան ինքնիրեն կեցաւ. կարծես գերբնական ուժ մը չի ձգեր, որ շարժիւնք,- պատասխանեց վարորդը,- իջէ՛ք, իջէ՛ք, այստեղէն քալելով պիտի երթանք:

Ուղեւորները դժգոհ դեմքերով իջան հանրակառքէն, կեցան Արագածէն փչող ցուրտ քամիին տակ ու շուարած նայեցան իրենց շուրջը:

Տասը ուղեւորները՝ տասներկու տարեկան Իշխանը, իր հայրիկի՝ Աշոտի հետ, տասներկու տարեկան Մերին, մայրիկի՝ Նուարդի հետ, տասնհինգ տարեկան Ժագը, մօր՝ Սիւզիի հետ, տասնվեց տարեկան Աննան, հօր՝ Մեսրոպի հետ, եւ տասնվեց տարեկան Մայքը, հօր՝ Սարգիսի հետ, պահ մը լուռ, մտախոհ ու զննող հայեացքներով սկսան այս ու այն կողմ նայիլ: Դիմացը քառագագաթ Արագածն է՝ իր ողջ վեհութեամբ. Լռութիւն է, կատարեալ անդորր:

Արագած անուան ծագումը կապուած է Յայկ Նահապետի որդիի՝ Արամանեակի հետ, իսկ այլ վարկածի մը համաձայն՝ հայոց դիցարանի չաստուած Արայի անուան հետ: Այսինքն՝ Արագած կրնայ նշանակել Արայի գահ: Լեռը ունի 4090 մետր բարձրութիւն եւ կը համարուի Յայաստանի Յանրապետութեան ամենաբարձր կետը: Անիկա կը գտնուի Շիրակի եւ Արագածոտնի մարզերու տարածքին մէջ: Չմոռնա՛ք...

-Այստեղ «ուայ-ֆայ» կա՛յ,- կարծես ինքնիրեն հարցուց Աննան եւ հանելով հեռաձայնը՝ Արագածի համայնապատկերով արագ քանի մը սելֆի ըրաւ,- օօօ՛հ... չկայ,- յուսահատ ձայնով ըսաւ ան եւ դառնալով հօրը՝ հարցուց,- պապա, ո՞ւր բերած ես զիս, այստեղ ուայ-ֆայ չկայ:

Մեսրոպը շոյեց աղջկան մազերը.

-Բարի գալուստ Յայաստան, աղջիկս: Դուն կը գտնուիս Արագածի փեշերուն, ի՛նչ ուայ-ֆայ, մոռցի՛ր:

Յեռուէն լուեցաւ Իշխանի վախցած, դողացող ձայնը.

-Վարորդը ո՞ւր է, այստեղ չէ... ես ամէն տեղ նայեցայ, մենք այստեղ միևնակ ենք՝ ուրիշ մարդ չկայ:

Մայքը ճարպիկօրէն թռաւ մեքենայի դէկին, բայց նոյն վայրկեանին ալ մէկ անգամէն վախցած ետ ցատկեց իր տեղը:

-Մեքենայի դէկն ալ չկայ...փրթած է,- վախցած ըսաւ ան:

-Ի՞նչ,- գրեթե միաժամանակ ըսին հաւաքուածները եւ զարմացած նայեցան իրարու:

Իշխանը լուրջ տեսքով նայեցաւ բոլորին, ապա մատնացոյց ըրաւ դէպի Արագածի փէշը.

-Կը տեսնե՞ք այն ամպը, ահա այնտեղ է Ամրոց-հիւրանոցը, ուր մենք պետք է երթանք: Պետք է արագ շարժինք, որովհետեւ արդէն մութ է:

Խուճբէն քիչ մը հեռու կեցած էր ժազը՝ հեռաձայնը գլուխէն վեր բռնած այս ու այն կողմ կ'ուղղէր.

-Չհասկցայ, այստեղ մենք անհասանելի՞ ենք... Հայրի՛կ, ժողովուրդ, այս ո՞ւր եկած ենք:

-Ես կ'առաջարկեմ երթանք հիւրանոց, այնտեղ ամէն ինչ ալ կ'ըլլայ. կը հանգստանանք, կը ճաշենք, կը հեռաձայնենք մեր հարազատներուն... տէ արագ,- ըսաւ Մերին՝ քաշելով մօր փէշէն:

Մայր ու աղջիկ նեղիկ ճամբով սկսան դանդաղ բարձրանալ: Անոնց ետեւէն բարձրացան միւսները:

Ամայի, անմարդաբնակ ամրոց յիշեցնող հիւրանոցը սարսափելի հայեացքով նայեցաւ ներս մտնողներուն, որոնք անմիջապէս գետին դրին իրենց պայուսակները ու պրպտուն, տազնապալից հայեացքներով գննեցին իրենց շուրջը: Տեղէ մը դուրս ելած չղջիկը խենդի պէս ճչալով ու շատ մօտէն անցաւ անոնց վրայէն:

-Օօօ՛, Աստուա՛ծ իմ.. այս ո՞ւր եկած ենք, աս ի՞նչ է , - չղջիկէն ոչ պակաս բարձր ճչալով՝ ըսաւ Աննան:

-Առու՛.... այստեղ մարդ կա՞յ,- ձայն տուաւ Մայքը:

- Կարծես մարդ չկայ, մենք կարծես սխալ տեղ եկած ենք: Ասիկա հիւրանոց չէ, այլ՝ լքուած ամրոց,- ըսաւ Ժագը:

-Բայց ես բնաւ չէի լսած, որ այս տարածքին մէջ նման ամրոց կայ,- հագիւ լսելի շնչաց Սիւզին:

-Իսկ հիւրանոց լսա՞ծ էիր , - Սիւզին դիմելով՝ ըսաւ բան մը կռահած Աշոտը:

-Մէկ վայրկեան... հանեցէ՛ք ձեր հրաւիրատոմսերը: Չիս այստեղ հրաւիրած է Յայկ Նահապետեանը, ահա գրուած է, իսկ ձե՛զ,- հարցուց Մայքի հայրը:

Բոլորը հանեցին իրենց հրաւիրատոմսերը եւ սկսան ուշադրութեամբ նայիլ:

-Մեզ ալ նոյն մարդը հրաւիրած է: Բայց, խօսքը մեր համադասարանցի Յայկի մասին չէ՞,- հարցուց Աշոտը:

-Այո՛, Յայկի մասին է, բայց ինքը ո՞ւր է, ինչո՞ւ հիմա մեզի հետ չէ,- հարցին հարցով պատասխանեց Մայքի հայրը:

Բոլորը շուարած նայեցան իրարու:

Այդ ընթացքին տասներկու տարեկան Իշխանը քիչ մը հեռացաւ անոնցմէ եւ սկսաւ շրջիլ ամրոցին մէջ: Յանկարծ լսուեցաւ վերջինիս ձայնը.

-Յայրի՛կ այստեղ սենեակներ կան, որոնց մէջ կարելի է ապրիլ:

Բոլորը վազեցին դէպի Իշխանի ցոյց տուած տարածքը: Անոնց առջեւ բացուեցաւ ընդարձակ սենեակ մը: Աջ կողմը հնադարեան կրակարան էր, որուն կրակը կը ճրթճրթար: Սենեակին մէջտեղը մեծ սեղան մը դրուած էր, վրան՝ քանի մը բանալի: Պատերուն երկայնքով պահարաններ կային՝ հին, հաստափոր գիրքերով ծանրաբեռնուած, անկիւնը՝ հնադարեան կուժ ու կաւէ աման:

-Նայեցա՞ք, իսկ հիմա արագ պիտի դառնանք Երեւան... առնենք տոմսերը եւ թռիկք դէպի մեր տունները,- լսուեցաւ բժշկուհի Սիւզիի տազնապալից ձայնը:

-Յանգստացեք, ընդամենը մեկ գիշեր պիտի մնանք այստեղ, իսկ վաղը առաւօտեան կը դառնանք...կը խոստանամ՝ ես գիշերը կը վերանորոգեմ հանրակառքը,- հանգիստ ձայնով յուսադրեց Աշոտը եւ դառնալով դէպի մահճակալները՝ զարմանքով ըսաւ,-

- Տեսէ՞ք, տասը հատ ալ մահճակալ կայ այստեղ:

-Փաստօրէն մեկը այստեղ մեզի կը սպասէր,- շուրջը զննելով՝ եզրակացուց Իշխանը,- եւ անիկա, վստահ, Յայկ Նահապետեանը չէ...

-Ի՞նչ գիտես,- հարցուցին անոր միաձայն:

-Որովհետեւ, յարգելիներս, ձեր դասարանի մէջ Յայկ Նահապետեան անուն-մականունով մարդ չկար,- հնչեց տղուն պատասխանը:

Ըսածին իբրեւ ապացոյց՝ Իշխանը հանեց իւր դասարանցիներուն հին խմբանկարը ու լայն բացած ցոյց տուաւ ներկաներուն՝ պարզաբանելով.

-Յայկ Յայրապետեան կայ, Նահապետեան չկայ:

Յանկարծ լռութիւնը խախտեց Աննայի վախճած, սարսափահար ճիչը.

-Յապա ո՞վ մեզ այստեղ հրաւիրած է եւ ինչո՞ւ ... ես կը վախնամ, ես այստեղ մեկ վայրկեան անգամ չեմ մնար:

Անիկա ըսելէն ետք՝ Աննան վազեց դէպի ամրոցի ելքը:

-Աննա՛, ո՞ւր կը վազես, սպասէ՛, վտանգաւոր է, սպասէ՛,- ետեւէն պռռաց անոր հայրը՝ Մեսրոպը:

-Աննա, ո՞ւր, մուտք է, ո՞ւր կ'երթաս,- փորձեց զինք կեցնել Մայքը:

-Ձգեցէ՛ք, ես այստեղ չեմ մնար, ես կ'ուզեմ Լոս Անճելըս դառնալ,- պնդեց Աննան ու շարունակեց վազել:

Աննան կը շարունակէր սայթաքելով վազել: Աղջկան վերադարձնելու համար բոլորը շնչակտուր վազեցին անոր ետեւէն: Ընդհանուր քառսին մէջ լսուեցան ասոր-անոր կցկտուր խօսքերը:

-Դուռը ո՞ւր է...

-Դուռ չկայ....

-Հապա ինչպե՞ս ներս մտած ենք....

-Հանգստացե՛ք... կեդրոնացե՛ք...

-Ես կը վախնամ...

- Չգուռո՞յշ...

Յանկարծ հզոր դդրդիլն մը լսուեցաւ ու ամէն ինչ կորսուեցաւ խաւարին մէջ:

* * *

«Օր առաջին,- մութին մէջ լսուեցաւ իշխանի գրիչին խզբզոցը,- Հայաստանը մեզ դիմաւորեց իւրովի...շահտ մութ ու ցուրտ հիւրանոց է, թերեւս աշխարհի ամենամութ ու ամենաանմարդաբնակ հիւրանոցը», - գրեց ան իր օրագրին մէջ:

-Յէ՛յ, մէկը թող բա՛ն մը վառէ,- լսուեցաւ Մերիի ձայնը:

-Հեռաձայնիս մարտկոցը պարպուած է,- եղաւ ընկերներէն մէկուն արձագանգը:

-Իմն ալ,- ըսաւ ընկերներէն մէկը:

-Իմն ալ,-հաստատեց միւսը:

-Հայրի՛կ, դուն հրահան ունիս, վառէ՛,- դիմեց Աննան հօրը:

Բայց Աննայի խօսքին արձագանգող չեղաւ:

-Հայրի՛կ, ո՞ւր ես, ձայն հանէ...հայրի՛կ,- բացագանչեց Աննան վախցած ձայնով, ապա դարձեալ դիմեց հօրը,- հայրի՛կ կը վախնամ, ձայն հանէ:

-Մա՛մ,- յանկարծ լսուեցաւ Մայքի անհանգիստ ձայնը:

Դարձեալ լռութիւն է:

-Տղա՛ք, կարծես մեր ծնողները այստեղ չեն, մեր կանչերը անարձագանգ կը մնան,- տիրող լռութեան մէջ ըսաւ Մայքը:

-Իսկ ես, Մա՛յք, կարծես մկնիկ մը բռնած եմ... ինչ փափուկ է...- մութին մէջ բան մը շոյելով ըսաւ Ժագը:

-Գլուխս ձգէ՛... խենդացա՛ր,- լսուեցաւ Իշխանին ձայնը:

-Դո՛ւն ես, փոքրի՛կ,- հարցուց Ժագը եւ մթութեան մէջ սկսաւ բարձր խնդալ:

-Ասոր հռհռալը... ի՛նչ ալ կատակելու սիրտ ունի,- մտահոգ ըսաւ Աննան եւ նորէն սկսաւ կանչել հորը,- հայրի՛կ, հայրի՛կ, ձայն հանէ հայրի՛կ:

Յանկարծ սենեակին լոյսերը վառեցան: Ընկերները նայեցան իրենց շուրջը ու բոլորի դէմքերուն մէկ անգամէն սարսափ յառաջացաւ: Ծնողները չկային, անյայտացած էին:

-Օ, Աստուա՛ծ իմ... ո՞ր ես մեր ծնողները,- զարմացած հարցուց Աննան միւսներուն:

Իշխանը սկսաւ զննող հայեացքով նայիլ շուրջը:

-Կ'երեւի գացած են այստեղէն ելք փնտռելո՞ւ,- իր տարբերակը առաջարկեց Իշխանը:

-Բոլորը միասի՞ն ու առա՞նց մեզի ըսելու,- Իշխանին հակադարձեց Մերին:

Այդ պահուն յանկարծ Մայքի ոտքերուն տակէն տարօրինակ ձայներ լսուեցան ու ան դղրդոցով ինկաւ գետին՝ կարծես մէկը դիտմամբ զինք հրէր ու գետին ձգէր:

Ոտքի կեցածները շուարած ու սարսափած մէկ քայլ ետեւ գացին:

-Ի՞նչ եղաւ քեզի Մայք,-հարցուցին անոր ընկերները:

-Օգնեցէք բարձրանամ, շու՛տ,-վախցած ըսաւ Մայքըլ:

Յանկարծ Մայքի մարմնին տակ գետնին մէջ ճեղք մը բացուեցաւ եւ կարծես հզօր ձգողական ուժ մը փորձեց զինք քաշել:

-Մա՛յք, ձեռքդ տուր, Մա՛յք,- պոռագին ընկերները եւ ձեռքերը պարզելով Մայքին՝ փորձեցին օգնել վերջինիս:

-Յեռու բռնորո՞ղ, հեռացէ՛ք...մարդ փրկող դարձած ես գլխուս,- պոռագ հաւաքուածներուն վրայ ժազը եւ իր ձեռքը պարզեց Մայքին:

Մայքը ճիգ թափելով փորձեց բռնել իրեն մեկնուած ձեռքը, բայց չկրցաւ. վարէն ուժ մը կը տանէր զինք:

-Եկէք փախի՛նք, արա՛գ,- վախցած ճչաց Մերին ու քաշեց Աննայի ձեռքը:

-Ժազ, բան մը նետե՛, որ Մայքը բռնէ,- ժազին յորդորեց Աննան:

Ժազը չկրցաւ բան մը ընել:

-Օգնեցէ՛ք... կ'իյնամ, օգնեցէ՛ք,- յուսահատած կը պոռար Մայքը:

Յանկարծ հզօր դղրդիւն մը եւս լսուեցաւ, գետինը մէկ անգամէն պատռուեցաւ եւ ընկերները միասին պոռալով, աղմուկ-աղաղակով ինկան խորունկ անդունդը... օդին մէջ լսուեցան ինկնողներուն խուլ ճիչերը, որոնք հետզհետեւ անհետացան եւ մէկ անգամէն տիրեց անհասկնալի լռութիւն մը...

* * *

Մուր Է. բան չ'երեւիր, ձայն չկայ... տեղէ մը լսուեցաւ մէկուն յուսահատ տնքոցը, ապա Իշխանի դողացող ձայնը.

-Ակնո՛ցս... ո՞ւր Է ակնոցս...

-Ո՞վ կրնայ ըսել, ո՞ւր ենք մենք,- տնքալով հարցուց Մայքը ընկերներուն:

-Աստուած իմ...հաստատ դժոխքի մէջ յայտնուած ենք... ո՞ր մեղքիս համար...գիտեմ, հիմա սատանան կը յայտնուի այստեղ,- սարսափած լսուեցաւ նաեւ ժագին ձայնը,- այո, կը խոստովանիմ ես մէկ անգամ մեծ մայրիկիս թեյին մէջ շաքարի փոխարէն աղ լեցուցած եմ...կը խոստովանիմ զիս դրախտ տարեք...

-Լռէ՛,- սաստեց Մերին:

-Սատանան, սատանան եկաւ- սարսափահար ճչաց ժագը:

-Այ տղայ ե՛ս եմ Մերին, ի՞նչ սատանայ:

-Մէկը թող բան մը վառէ, մութ է,- լսուեցաւ նաեւ Աննային ձայնը:

Մէյ մըն ալ անկիւնէն լոյս մը յայտնուեցաւ, իսկ լոյսին մէջ՝ մարդկային կերպարանք. ընկերները լարուեցան: Անոնց դիմաց՝ կայծկլտացող լոյսերուն մէջ, կեցած էր թաւ մօրուքով, խիտ յօնքերով ալեհեր ծերունի մը:

Ընկերները ծերունին տեսելով՝ սարսափահար ճչացին:



Յանկարծ լուեցաւ ծերունիին խորհրդաւոր ձայնը.- Մի՛ վախնաք, ես ձեզ չեմ վնասեր, ընդհակառակը՝ ես կ'ուզեմ օգնել ձեզի...լսեցէ՛ք. դուք հիմա կը գտնուիք հայը իր պատմութեան հետ կապող ճանապարհին. ասիկա շատ կարեւոր հատուած է ձեր կեանքին մէջ: Ձեր սերունդը շահտ հեռացած է իր պատմական արմատներէն եւ ատիկա մեծ ցաւ է մեր ազգին համար...

Ընկերները շունչերը պահած կը լսէին ծերունիին ըսածները:

-Դուք այստեղ էք, որովհետեւ ընտրեալ էք եւ պետք է անցնիք այն ճանապարհներէն, ուրկէ անցած են հայերը իրենց դարաւոր պատմութեան ընթացքին, եւ միայն ձեր գիտելիքներով պարզ կը դառնայ՝ կրնա՞ք արդեօք ազատել ձեր ծնողներն ու վերադառնալ ձեր տուները, թե՛ յաւերժ կը մնաք այստեղ բանտարկուած...

Եւ լոյսը, ինչպէս յանկարծակի վառած էր, նոյնքան ալ յանկարծակի մարեցաւ՝ իր հետ տանելով խորհրդաւոր ծերունին:

Ընկերները շփոթած ու խուճապահար նայեցան իրարու:

-Նայեցէ՛ք, այնտեղէն լոյսի բարակ շերտ մը կը տեսնեմ,- ընկերներուն լոյսի շերտը ցոյց տուաւ Ժագը:

-Ես ալ նկատեցի,- հաստատեց Իշխանը:

-Երթանք այդ ուղղութեամբ,- առաջարկեց Մերին:

Ընկերները սայթաքելով, ոտքերնին այստեղ-այնտեղ գարնելով, մութին մէջ խարխափելով՝ քալեցին դէպի նշմարուող լոյսը:

Մի քանի քայլ եւս ու...այդ պահուն Մայքը ձեռքով բան մը հրեց՝ հաւանաբար դուռ, եւ անոնց առջեւ բացուեցաւ տեսարան մը, որմէ ընկերները ուղղակի սարսափեցան: Աննան կտրուկ ետ դարձաւ, որ փախչի, բայց Ժագը բռնեց անոր ձեռքէն ու կամաց, խորհրդաւոր ձայնով շշնջաց.

-Հաւատա՛... պետք չէ, Աննա....

Մեծ ու լուսաւոր սենեակին մէջտեղը սեղան մը դրուած էր, վրան՝ տուտուկի նման երաժշտական գործիք մը, որմէ ծուխ կը բարձրանար:

Ընկերները սկսան դանդաղ ու զգոյշ յառաջանալ:

-Այս ի՞նչ ծուխ է, ինչո՞ւ գործիքէն ծուխ կ'ելլէ,- ընկերներուն զարմացած հարցուց Մերին:

Ժազը կամացուկ մօտեցաւ, ուզեց վերցնել գործիքը, բայց անիկա յանկարծ անսպասելի բոցկլտաց, որմէ ետք ընկերները վախցած ետ քաշուեցան:

-Ի՞նչ կ'ընես, ժազ,- հնչեց Աննայի սարսափահար ձայնը:

-Այս գործիքը խորհուրդ ունի. անիկա թոյլ չի տար, որ իրեն մօտենանք, որովհետեւ...,- միտքը կիսատ ձգելով՝ ըսաւ Իշխանը, եւ զննող հայեացքով դարձաւ սեղանին շուրջ՝ ուշադիր նայելով գործիքին:

-Որովհետեւ, ի՞նչ, ո՞ւր մնացին մտքերդ,- անհամբեր հարցուց Մերին:

-Չհասկցայ, այս գործիքը կախարդակա՞ն է: Անիկա հաւանաբար մեզի համար այստեղ բերուած է, ու եթէ այո, ուրեմն ինչո՞ւ թոյլ չի տար, որ իրեն մօտենանք,- ընկերներուն նայելով, բայց կարծես ինքնիրեն հարցուց Իշխանը:

-Մայք երաժշտ ես, ըսէ տեսնենք՝ ասիկա ի՞նչ երաժշտական գործիք է,- հարցուց Աննան:

-Կարծեմ տուտուկ է,- քիչ մը կասկածամտօրէն պատասխանեց Մայքը:

Գործիքը կը շարունակէր ծուխ ու կայծ արձակել:

- Թերեւս զուռնա՞ է,- մէկ վայրկեան անց միտքը փոխելով՝ ըսաւ Մայքը:

-Ասիկա հայկական ազգային երաժշտական գործիք է: Եկեք ով ինչ գործիքի անուն գիտէ թող ըսէ, որուն անունին վրայ ծուխն ու կրակը դադրի՝ ուրեմն ասիկա այդ գործիքն է,- առաջարկեց Մերին,-ես կը կարծեմ, որ ասիկա պարկապզուկ է:

-Չդադրե՛ցաւ... հաւանաբար շուրի՞,- ըսաւ Աննան:

-Տիով է հաստատ,- ուրախ կանչեց ժազը, բայց ընկերներուն տարօրինակ հայեացքները տեսնելով լռեց:

Իշխանը յանկարծ կեցաւ, բան մը յիշածի պէս նայեցաւ ներկաներուն ու կամացուկ արտաբերեց.

-Երկու ծայրը բաց է, չունի լեզուակ... ասիկա... Եղեգան փո՛ղ է...

-Ի՞նչ է,- զարմացած Իշխանին հարցրուցին ընկերները:

-Եղեգան փո՛ղ,- բարձրաձայն գոչեց Իշխանը:

Գործիքը դադրեցաւ ծխալ:

Լռութիւնը խախտեց ծափահարութիւնը Աննայի, որ հիացած գոչեց.

-Ապրի՛ս, մեծ Իշխան... քու օգնութեամբ յաղթահարեցինք առաջին փուլը: Զիմա ի՞նչ պիտի ընենք:

-Կարծեմ պէտք է նուագենք այս եղէ... նորէն յիշեցուր... հա, Իշխանի եղեգան փողն ու տեսնենք, թէ ինչ պիտի ըլլայ: Կ'երեւի երբ նուագենք, տեղէ մը դուրս պիտի ելլեն մեր ծնողները, մենք ալ պիտի դառնանք մեր երկիրները,- ըսաւ Մայքը եւ ձեռքը առաւ գործիքը:

Մի քանի վայրկեան այս ու այն կողմ շրջելէն, զննելէն ետք՝ ժազը գործիքը մօտեցուց շրթուներին, փորձեց նուագել, սակայն գործիքէն ձայն չելաւ:

-Չարմանալի է, առաջին անգամ կը տեսնեմ չնուագող երաժշտական գործիք,- զարմացած ըսաւ Մայքը:

-Իսկ թերեւս ճիշտ մարդու ձեռքին չէ՞ յայտնուած եւ անոր համար ալ չի նուագեր,- ըսաւ ժազը,- ինձի տուէք տեսնեմ:

Բայց գործիքը ժազին չհասաւ:

- Ընդ եղեգան փող ծուխ ելաներ,

Ընդ եղեգան փող բոց ելաներ,

Եւ ի բոցոյն վազեր խարտեաշ պատանեկիկ.

Նա հուր հեր ուներ,

Բոց ուներ մօրուս,

Եւ աչկուկն էին արեգակուկնք...

Արտասանեց Մերին, որմէ ետք բոլորը հարցական նայեցան անոր:

-Ես յիշեցի այս տողերը... կիրակնօրեայ դպրոցի դասերուն սորված էինք,- ուրախ ըսաւ Մերին:

-Խարտեաշ պատանի՞, հուր հե՞ր,- հարցական ըսաւ Աննան եւ զարմացած նայելով Իշխանին կողմը՝ շարունակեց հարցադրումը,- խօսքը մեր Իշխանի մասի՞ն է:

Իշխանը մօտեցաւ, վերցուց փողը, դրաւ շրթուկներին եւ մէկ անգամէն սենեակին մէջ հնչեց հրաշալի հայկական մեղեդի մը: Ընկերները զարմացած նայեցան իրենց շուրջը: Մէջ մըն ալ օդը սկսաւ թանձրանալ, ապա թեթեւ փոթորիկ բարձրացաւ: Ընկերները վախցած ու սարսափահար ճչացին եւ կարծես ակընթարթի մը ընթացքին բոլորը միասին անհետացան:

Եղեգան փողը օդէն ինկաւ սեղանին: Սենեակին մէջ մարդ չկար:

* * *

Բ. մաս

Կապուտաչեայ ծովակէն լսուեցան ընկերներու տագնապալի ձայներ.

-Ա՛յ, ես լողալ չեմ գիտեր, հիմա կը խեղդուիմ, բռնեցէ՛ք,- լսուեցաւ Աննային ճիչը:

-Մի՛ վախնար, կը մօտենամ,- ըսաւ Ժագի, որ արագօրէն մօտեցաւ աղջկան:

Ժագը Մայքէն առաջ հասաւ Աննային, բռնեց անոր ձեռքն ու զինք քաշելով իր ետեւէն տարաւ դէպի ափ:

-Իշխա՞ն, ո՞ւր ես, հիմա կը մօտենամ քեզի, զգո՞յժ, այս կո՞ղմ լողայ,- լիճին մեջէն պոռաց Մերին՝
նայելով Իշխանի կողմը: Իշխանը հետեւեցաւ Մերիի հրահանգին:

Քիչ անց անոնք թրջուած, դողդողալով ու սրթսրթալով ելան լիճէն ու նստան ափին:

-Այս ի՞նչ տեղ է, մենք ո՞ւր ենք,- շուրջը նայելով՝ հարցուց Աննան,- ինչպե՞ս այստեղ յայտնուեցանք:

-Ասիկա Սեւա՞նն է,- լիճը դիտելով՝ ըսաւ Մայքը:

Իշխանը տերեւներով մաքրեց ակնոցն ու դողալով պատասխանեց.

-Ասիկա չի կրնար Սեւանայ լիճը ըլլալ, որովհետեւ այս լիճին ջուրը աղի է, իսկ Սեւանը քաղցրահամ
է:

-Սո՛ւս,- մատը շրթունքին դնելով լարուած ըսաւ Ժագը,- կը լսե՞ք ջուրին ձայնը. Կարծես նաւակ
մը կը մօտենայ:

-Եկէք թուփերուն ետեւ պահուըտիկնք, այնտեղ աւելի ապահով կ'ըլլայ,- յորդորեց Մայքը:

Անոնք անմիջապէս պահուըտեցան թուփերուն ետեւ եւ ուշադիր հետեւեցան մօտեցող
նաւակին: Շատ չանցած՝ նաւակը մօտեցաւ ափին եւ անկէ իջան տարօրինակ հագուստներով
երկու հսկայ տղամարդ, որոնք արագ-արագ հանեցին իրենց հագուստները, ուրիշ հագուստներ
հագուեցան՝ նմանելով բանուորներու: Ապա, օտար, անծանօթ լեզուով իրար հետ խօսելով
մօտեցան թուփերուն եւ իրենց հանած հագուստները պահելով՝ արագ հեռացան:

- Այդ ի՞նչ լեզուով կը խօսէին,- զարմացած շշնջաց Մայքը:

-Բնաւ նման լեզու չեմ լսած,- անկեղծացաւ Ժագը:

-Բայց անոնք կարծես մտահոգ էին. ինձի կը թուի, որ անոնք յանցագործներ էին կամ
մարդասպաններ,- ըսաւ Իշխանը եւ վերցնելով անոնց հագուստներն ու զննելով գրպանները՝
այնտեղէն քարի կտոր մը գտաւ.

-Ես չեմ հասկնար, ասոնք սեպագիր տառե՞ր են,- հարցուց Իշխանը:

-Սեպագի՞ր... այսի՞նքն,- փորձեց ճշդել ժագը:

-Բան չեմ հասկնար,- մտազբաղ ըսաւ Իշխանը:

Աննան բարձրաձայն խնդաց, յետոյ լարուեցաւ.

-Բայց...

Մէյ մըն ալ, այդ պահուն, յանկարծ կարգով անոնց հեռաձայները սկսան զնգալ՝ հաղորդագրութիւններ եկան:

Ընկերները իրար անցած սկսան ընթերցել.

Դո՛ւք կը գտնուիք հայոց պատուօթեան դրուագի մը մէջ: Ու միայն ձեր գիտելիքներուն շնորհիւ կրնաք հասկնալ, թէ ո՞ւր էք, ի՞նչ իրավիճակ է, կը կարենա՞ք արդեօք ճիշտ ու պատմական որոշումներ կայացնել, թէ՛ ոչ: Այդ բոլորին համար ձեզի տրուած է ընդամենը 3 ժամ, եթէ չհասցուցիք կատարել ձեր առաքելութիւնը՝ կը գոցուին ժամանակի միջանցքի դռներն ու դուք կը մնաք այնտե՛ղ:

-Ի՞նչ,- ճչաց Մերին եւ վախցած նայեցաւ ընկերներուն:

-Կը յիշե՞ք այդ ծերունիին խօսքերը: Ուրեմն մէկը, առաքելութեան մը համար ընտրած է մեզ,- ըսաւ Իշխանը,- ասիկա անհաւատալի է. մենք հրաշքով կրնանք տեղափոխուիլ ժամանակի մէջ, կրնանք ականատես ըլլալ հայոց պատմութեան այս կամ այն նշանաւոր իրադարձութեան, այսինքն կրնանք նաեւ որոշ ազդեցութիւն գործել անոնց վրայ:

-Բայց ինչո՞ւ մենք,- զարմացած հարցուց Մերին:

-Այդ հարցին պատասխանը յետոյ կը պարզենք, իսկ հիմա եկէք ժամանակ չկորսնցնենք, հասկնանք, թէ ինչո՞ւ համար յայտնուած ենք այստեղ, կատարենք մեր գործն ու հեռանանք,- արագ-արագ ըսաւ ժագը:

Անոնք յոգևած, անօթի, ոտքերը հազիւ շարժելով շարունակեցին քալել:

-Ո՛ւր է քաղաքը, ես ալ չեմ դիմանար,- տնքալով ըսաւ Աննան:

-Քիչ մնաց, Աննա, տես, արդէն փոշի ու ծուխ կ'երեւի,- յուսադրեց ժազը:

-Բայց այս ի՞նչ ձայներ են, կարծես քաղաքի ողջ ժողովուրդը մուրճով բան մը կը հարուածէ,- դառնալով ընկերներուն՝ ըսաւ Մերին,- չէ՞ք լսեր:

Ընկերները գլուխով նշան ըրին՝ հաստատելով, որ իրենք ալ կը լսեն տարօրինակ ձայները:

Մի քանի վայրկեան անց, անոնք մտան քաղաք ու զարմացած կանգ առին: Քաղաքին մէջ մեծ եռուզեռ էր. մարդիկ այս ու այն կողմ կը վազէին, կարծես կարեւոր արարողութեան մը պատրաստութիւն կը տեսնէին. ամենուր՝ ձիեր ու թամբած էշեր, քարեր ու փայտեր քարշ տուող մարդիկ:



Յանկարծ ժազը բան մը նկատելով՝ շնջաց.

-Տեսէ՞ք լիճի ափի այն երկուքը՝ նոր աննկատ մտան ձիւն կապուած քարշակին մէջ:

-Գողի նմա՞ն.... Ես կը զգայի, որ անոնք կասկածելի են, եկէք անոնց ետեւէն երթանք,- առաջարկեց Մերին:

Անոնք սկսան քալել ձիւն ետեւէն: Ձին, ինչպէս նաեւ հաւաքուած բոլոր մարդիկ, կ'երթային դէպի լիճի ափին գտնուող հսկայ ժայռը, որուն վրայ կը կառուցուէր բարձր պարիսպներով ու հզօր աշտարակներով անմատչելի ամրոց մը:

-Ասիկա ի՞նչ ամրոց է,- զարմացած հարցուց Աննան:

-Ես այսպիսի ամրոցի մը մասին լսած էի. անիկա կառուցուած էր Վանայ լիճի ափին՝ ժայռի վրայ,- յիշելով լսածը՝ ըսաւ ժազը:

-Այո՛, դուն ճիշդ ես, մենք կը գտնուինք Վանայ լիճի ափին՝ ահա եւ մեր հարցին պատասխանը:

Բայց մարդիկ ինչո՞ւ այսպէս իրար խառնուած են, ինչի՞ պատրաստութիւն կը տեսնեն,- կարծես ինքն իրեն հարցուց Իշխանը:

-Եկէք այստե՛ղ, շո՛ւտ,- ընկերները կանչեց Աննան:

Վերջիններս արագ մօտեցան Աննային:

-Նայեցէ՛ք, ամրոցի պատերուն անընդհատ կը կրկնուին այս փորագրութիւնները, ասոնք կ'երեւի բառեր են: Բայց ի՞նչ լեզուով են,- ընկերներուն փորագրութիւնները ցոյց տալով՝ հարցուց Աննան:

-Փորագրութիւններ են, շա՛տ հին փորագրութիւններ, Զրիստոսէն շատ դարեր առաջ մարդիկ այսպէս կը գրէին,- բացատրեց Մայքը:

-Մենք պետք է հասկնանք, թէ այստեղ ինչ գրուած է,- ըսաւ Իշխանը,- ատիկա կրնայ օգնել մեզի, որ գտնենք մեր հարցերուն պատասխանը:

Իշխանը հազիւ աւարտած էր խօսքը, երբ յանկարծ անոր հեռաձայնը զնգաց եւ պաստառին յայտնուեցաւ նոր հաղորդագրութիւն մը: Իշխանը սկսաւ բարձրաձայն կարդալ.

դուք ունիք ընդամենը մեկ յուշում եւ մի մոռնաք, ձեզի մնաց 2 ժամ:

-Բայց ի՞նչ յուշում, ըսաւ յուշում ու վե՞րջ, չըսաւ, թէ ինչ յուշում է,- գայրացած հարցուց Աննան:

-Մեկ վայրկեան, հեռաձայնիս պաստառին նոր ծրագիր մը յայտնուեցաւ,- ըսաւ Իշխանը,- ահա եւ յուշումը. ասով կրնանք վերձանել այս փորագրութիւնները:

Իշխանը հեռաձայնը բռնեց փորագրութիւններուն ուղղութեամբ, սեղմեց համապատասխան կոճակը եւ սկսաւ կարդալ.

-«Մեծ արքայ», «Տիեզերքի Արքայ», «Նայիրի երկիրներու Արքայ», «Բոլոր թագաւորներէն հարկեր ստացող Արքայ», «Ճակատամարտերէն չերկնչող զարմանահրաշ Բուրմ»:

-Ինչե՞ր կը խօսիս Իշխան,- հարցուց Ժագը:

-Այստեղ այսպէս գրուած է,- պատասխանեց Իշխանը:

-Ա՛յ քեզ հրա՛շք,- առջեւ գալով ըսաւ Ժագը,- ասոնք տիտղոսներ են, որոնք հին ժամանակ արքաներուն կը փոխանցուէին յաղթողի իրաւունքով:

-

Ուշադրութիւն ընկերներ, հիմա եկէք ի մի բերենք այն ամենը, ինչ որ այս պահուն հասկցանք: Մենք կը գտնուինք Քրիստոսէ առաջ անյայտ դարերու մէջ՝ Վանայ լիճի ափին: Այս պահուն կը կառուցուի բերդաքաղաք մը եւ այս թագաւորութեան արքան յաղթած է իր հակառակորդներուն,- ընկերներուն սկսաւ բացատրել Մայքը:

-Իսկ այս փորագրութիւնները կատարուած են աքքատերէն,- Մայքին ըսածը ամբողջացուց Մերին:

-Իշխան, այդ մարդոց գրպանէն գտածո քարը հանէ ան ալ վերձանենք,- դիմելով Իշխանին՝ ըսաւ Մայքը:

-Ծրագիրը անհետացաւ, Մայք,- ապշած եւ տխուր ձայնով ըսաւ Իշխանը:

-Չարց չէ՛,- յուսադրեց Մայքը,- մենք արդէն գիտենք, թէ բերդապարիսպին ինչ գրուած է ու կրնանք վերձանելով կարդալ նաեւ այս քարին գրուածը:

Իշխանը զգուշօրէն հանեց քարը եւ անոնք սկսան մեծ ջանքեր գործադրելով կարդալ քարին վրայ եղած գրութիւնը:

* * *

Այդ ընթացքին մեզի ծանօթ այն երկու օտարալեզու տղամարդիկ հասան ժայռի ամենաբարձր մասը ու կեցան: Չիրենք տեսնելուն պէս՝ աննկատ իր թաքստոցէն դուրս ելաւ ու վերջիններուն միացաւ ուրիշ՝ երրորդ անձնաւորութիւն մը, որմէ ետք երեքով իրարու ականջին բաներ մը շնչացին եւ երրորդը գլուխով ցոյց տուաւ դէպի մեծ, ահռելի չափերու հասնող քարին կողմը:

Այն երկուքը գլուխով դրական նշան տուին՝ իբր ամէն ինչ հասկցած են ու պատրաստ են:

* * *

- Բիայնիլի՛.... ահա, թէ ինչ է գրուած այստեղ,- ուրախացած բացականչեց Իշխանը:

- Իսկ ի՞նչ կը նշանակէ այդ բառը,- զարմացած հարցուց Մայքը:

- Չէք հաւատար, բայց...,- խորհրդաւոր հայեացքով անոնց նայելով՝ ըսաւ Իշխանը,- ատիկա Հայաստան, Նայիրի, Ուրարտու անունն է...:

- Ուրարտո՞ւ, ի՞նչ կ'ըսես ճստիկ,- հեզնանքով հարցուց ժագը:

-Այո՛, Բիայնիլին կապուած է «Վան» անունն հետ: Ատիկա է պատճառը, որ պատմագիտութեան մէջ այդ պետութիւնը յաճախ կը կոչուի Վանի թագաւորութիւն: Հին ժամանակ Վանի թագաւորութեան արքաները իրենց ձգած սեպագիր արձանագրութիւններուն մէջ յիշատակած են Բիայնիլի անունը, որն ալ կը նշանակէ «արեւի՛ երկիր», ինչպէս անուանած են Ուրարտուն: Իսկ ես գիտեմ, որ Ուրարտուն նոյն Արարատն է՝ Արարտուն, եւ բնաւ պատահական չէ, որ Աստուածաշունչի մէջ այս պետութիւնը կը յիշատակուի «Արարատեան թագաւորութիւն» անունով,- պարզաբանեց Իշխանը:

-Այսինքն, ըսել կ'ուզես, որ մենք կը գտնուինք Ուրարտու թագաւորութեան ժամանակներուն մէջ,- հարցուց Աննան ու սարսափահար նայեցաւ ընկերներուն:

-Այո՛... եւ ասիկա ք.ա. Թ-րդ դարն է: Բարի գալուստ, հայեր...,- հանդիսաւոր ձեւով ըսաւ ժագը:

Ընկերներու խօսակցութիւնը իսկոյն ընդհատեցաւ զինուած մարդոց պոռչտուքներու եւ հրամաններու ձայներով:

-Մէկ կո՛ղմ անցէք, բոլորդ մէկ կո՛ղմ քաշուեցէք, արքա՛ն կու գայ, մէկ կո՛ղմ...,- կը հրամայէին զինուած մարդիկ բարձրաձայն գոռում-գոչիւններով եւ ցրելով նաեւ հաւաքուածները:
Ընկերները յանկարծակիի եկած քանի մը քայլ ետ գացին:

-Սպասեցէք, իսկ ո՛ւր են այն երկուքը, մենք զիրենք մեր տեսադաշտէն կորսնցուինք,- տարակուսած ըսաւ Մերին:

-Յիմա անոր ժամանակը չէ, եկէք տեսնենք ո՛վ է արքան, մէյ մըն ալ ե՛րբ բախտ պիտի ունենաք արքայ տեսնելու,- ըսաւ Մայքը:

-Լսեցէ՛ք, կարծես արքան վտանգի մէջ է,- եզրակացուց Իշխանը:

-Ի՞նչ,- միաժամանակ հարցուցին ընկերները:

-Այս մարդիկ հայերէն կը խօսին չէ՛, իսկ այն երկուքը օտար լեզուով կը խօսէին, ճի՛շդ է,- ընկերներուն դիմեց Իշխանը:

-Այո՛, յետո՛յ,- հարցուցին ըկերները:

-Ըստ այս փորագրութիւններուն՝ արքան յաղթանակ տարած է, մե՛ծ յաղթանակ: Եւ շատ հնարաւոր է, որ այդ երկուքի երկրի թագաւորին դէմ յաղթանակ տարած է,- եզրակացուց Իշխանը:

-Ճի՛շդ ես Իշխան, ինչպէ՛ս շուտ չկռահեցինք: Տեսնես հիմա ո՛ւր են այդ մարդիկ. անոնք հաստատ դաւադրութիւն մը կը հիւսեն եւ կ'ուզեն սպաննել արքան,- ըսաւ Աննան:

Ընկերները մտահոգ սկսան ուշադիր նայիլ իրենց շուրջը:

Յանկարծ Մերին բան մը նկատելով՝ բարձր ճչաց.

-Այո՛... եւ ասիկա ք.ա. 9-րդ դարն է: Բարի գալուստ, հայէ՛ր...,- ժպտելով եւ հանդիսաւոր ձեւով ըսաւ Ժագը:

Ընկերներու խօսակցութիւնը իսկոյն ընդհատեցաւ զինուած մարդոց պոռչտուքներու եւ հրամաններու ձայներով:

-Մէկ կո՛ղմ անցէք, բոլորդ մէկ կո՛ղմ քաշուեցէք, արքա՛ն կու գայ, մէկ կո՛ղմ...,- կը հրամայէին զինուած մարդիկ բարձրաձայն գոռում-գոչիւններով եւ ցրելով նաեւ հաւաքուածները:

Ընկերները յանկարծակիի եկած քանի մը քայլ ետ գացին:

-Սպասեցէք, իսկ ո՛ւր են այն երկուքը, մենք զիրենք մեր տեսադաշտէն կորսնցուկիք,- տարակուսած ըսաւ Մերին:

-Հիմա անոր ժամանակը չէ, եկէք տեսնենք ո՛վ է արքան, մէյ մըն ալ ե՛րբ բախտ պիտի ունենաք արքայ տեսնելու,- ըսաւ Մայքը:

-Լսեցէ՛ք, կարծես արքան վտանգի մէջ է,- եզրակացուց Իշխանը:

-Ի՞նչ,- միաժամանակ հարցուցին ընկերները:

-Այս մարդիկ հայերէն կը խօսին չէ՞, իսկ այն երկուքը օտար լեզուով կը խօսէին, ճի՞շդ է,- ընկերներուն դիմեց Իշխանը:

-Այո՛, յետո՞յ,- հարցուցին ըկերները:

-Ըստ այս փորագրութիւններուն՝ արքան յաղթանակ տարած է, մե՛ծ յաղթանակ: Եւ շատ հնարաւոր է, որ այդ երկուքի երկրի թագաւորին դեմ յաղթանակ տարած է,- խելամտօրէն եզրակացուց Իշխանը:

Կ

-Ճի՛շդ ես Իշխան, ինչպէ՛ս շուտ չկռահեցիք: Տեսնես հիմա ո՛ւր են այդ մարդիկ. անոնք հաստատ դաւադրութիւն մը կը հիւսեն եւ կ'ուզեն սպաննել արքան,- ըսաւ Աննան:

Ընկերները մտահոգ սկսան ուշադիր նայիլ իրենց շուրջը:

Յանկարծ Մերին բան մը նկատելով՝ բարձր ճչաց.

-Ահա՛, նայեցե՛ք, անոնք այնտեղ են՝ ամենավերի մասը: Աստուած իմ, այն ի՛նչ մեծ ժայռաբեկոր մը բռնած կեցած են:

-Պետք է բան մը ընենք, անոնք կ'ուզեն այդ քարը գլորել արքայի ուղղութեամբ ու եթէ անիկա արքայի վրայ ինայ՝ ան կը մահանայ,- ըսաւ Մայքը:

Իսկ ժագը այդ պահուն վազելով գնաց հաւաքուածներէն մէկուն քով, որ մնացածներուն հրամաններ կու տար:

-Կը ներէք,- ձեռքով բարձունքը ցոյց տալով՝ ժագը դիմեց հրամաններ արձակող մարդուն,- հաճիք կ'ըսե՛ք այդ մարդիկ ովքե՛ր են եւ ինչո՞ւ կեցած են այդ մեծ քարին քով:

Տղամարդը նայեցաւ ժագի ցոյց տուած ուղղութեամբ: Բայց ի՛նչ գիտնային ժագն ու ընկերները, որ անիկա այն նոյն տղամարդն է, որ վերը հանդիպեցաւ եւ առաջադրանք տուաւ այդ երկուքին: Ընկերները, տեսնելով հեռուն կեցած ժագն ու անձանօթ տղամարդը՝ եկան ու կեցան անոնց քով:

-Իսկ դուք ո՞վ էք,- խռպոտ եւ ջղային ձայնով հարցուց տղամարդը:

-Ատիկա կարելոր չէ, հաստատ այն մարդիկ կ'ուզեն սպաննել Արքան,- փորձեց բացատրել ժագը:

-Ի՛նչ կ'ըսէք, շնորհակալութիւն, որ տեղեկացուցիք այդ մասին: Իսկ հիմա եկէք, եկէք ինձի հետ,- յորդորեց տղամարդը ընկերներուն եւ սկսաւ արագ քայլերով հեռանալ, իսկ ընկերներն ալ հետեւեցան անոր:

-Ո՞ւր կ'երթանք, պարո՞ն, - անհանգիստ հարցուց Մայքը:

-Եկէք, ներս մտէք, ես հիմա կու գամ,- կասկածելի ձայնով ըսաւ ան՝ ընկերները ախոռ մտնելով:

Տղամարդը մէկ անգամէն անոնց վրայ ամուր գոցեց դուռը եւ կղպեց:

Աղջիկները սկսան բռուկքներով հարուածել դուռը ու ճչալ.

-Բացե՛ք, բացե՛ք, ի՛նչ կ'ընէք ... բացե՛ք...

-Աղջիկներ հանդարտեցէ՛ք, հաճի՛ք, մենք հիմա բան մը կը մտածենք: Պոռալով բան չի փոխուիր, միեւնոյնն է՝ այստեղ մէկը մեզ չի լսեր, ոչ ալ կ'օգնէ,- խորհուրդ տուաւ ժագը:

-Բայց մենք ընդամենը մէկ ժամ ժամանակ ունինք եւ փակուած ենք այս անտանելի տեղը,- խուճապի մատնուած ըսաւ Աննան:

-Իսկ անոնք պիտի սպաննեն թագաւորը, եթէ մենք ժամանակին չհասնինք,- ըսաւ Մերին:

-Սպասեցէ՛ք, այդ մարդը, որ կը խօսեր, օգտագործեց «մախա՛թ» բառը: Ատիկա... որքան կը յիշեմ ասորերէն բառ է, այո՛ւ, ասորերէն: Ինչպէ՛ս չէի հասկցած,- կզակը շոյելով ըսաւ խումբի «գիտունիկը»:

-Ի՞նչը, տէ խօսի՛ր,- Իշխանի վրայ գրեթէ յարձակելով՝ պոռաց Մայքը:

-Գիտե՛ք ով է արքան,- հարցուց ընկերներուն Իշխանը եւ խորհրդաւոր ժպիտով նայեցաւ անոնց:

-Ո՛վ,- միաբերան հնչեց հարցը:

-Սարդուրի Ա. ... անոր զօրքերը ք.ա. 833 թուականին Հայկական Տաւրոսի հարաւային լանջերուն յաջողութեամբ պատերազմեցան Ասորեստանի արքայ Սալմանասար 3-րդի դէմ... Յետոյ ան կառուցեց Տուշպա մայրաքաղաքը,- բացագանչեց Իշխանը:

-Տուշպա՞, ատիկա ի՞նչ մայրաքաղաք է, բնաւ չեմ լսած,- զարմացած ըսաւ Մայքը:

-Յիշեցի՛, ատիկա նոյն Տոսպն է Մայք՝ Տոսպաւանը, մեր Վանը, որ եղած է Վանի թագաւորութեան մայրաքաղաքը եւ շա՛տ կարեւոր ռազմական յենակետ համարուած է: Մենք հիմա ներկայ կը գտնուինք Վանի բերդապարիսպի բացման արարողութեան եւ զայն կը բանայ յաղթանակած Սարդուրի առաջինը՝ քաջն Լուտիպրիի որդին, եւ ամենավատը այն է, որ հիմա կը ծրագրեն սպաննել զինք,- ըսաւ ժագը,- իսկ մենք անզօր փակուած ենք այս ախոռին մէջ ու եթէ մէկ ժամուան ընթացքին չկարենանք փրկել Արքան, հաւանաբար կը դառնանք առնետներու եւ...,- ժագը իր խօսքը ընդհատեց ու նայեցաւ շուրջը, որ տեսնէ՝ ուրիշ ինչ կենդանիներ կան ախոռին մէջ, յանկարծ ձիու խրիսինջ լսուեցաւ,- փաստօրէն այստեղ ձի ալ կայ ... այնքան մութ է, որ չնկատեցինք ալ...

-Չնկատեցինք, որովհետեւ չկար՝ նոր յայտնուեցաւ: Իսկ ատիկա կը նշանակէ, որ ձին կրնայ մեզի օգնել,- ըսաւ Մերին:

Ընկերները անմիջապէս մօտեցան յանկարծակի յայտնուած ձիուն, բայց վերջինս սկսաւ կատաղի շարժումներ ընել:

-Ասիկա հրեղէն, անսանձ ձի է,- վախցած մէկ կողմ քաշուելով՝ ըսաւ Աննան:

-Եկէք յիշենք՝ հայկական դիցաբանութեան մէջ ի՞նչ յայտնի ձիեր կային,- առաջարկեց Մերին:

-Յիշել պէտք չէ՝ բոլորս ալ գիտենք, որ ամենայայտնի ձին «Սասնայ ծռեր» դիւցազնավէպին մէջ յիշատակուող դժուարասան Քուռկիկ Ջալալին էր: Անկէ աւելի ի՞նչ յայտնի եւ հիմա ինքն է այստեղ,- ըսաւ Իշխանը:

-Ապրի՛ս գիտունիկ, բայց հիմա ինչպէ՛ս նստինք այս ձին,- ըսաւ Ժագը եւ ուզեց մօտենալ ու շոյել զայն, սակայն ձին բաշը անհնազանդ շարժեց,- չի ձգեր նստիմ, չէ՛, զիս չսիրեց... Աննան սկսաւ քիթին տակ արտասանել.

-«Թամբ սադափին վերան պատրաստ, Կեծական Թուր վերան կախած ...»:

-Ապրի՛ս Աննա,- ուրախացած գոչեց Մայքը եւ յորդորեց ընկերները,- մենք պէտք է գտնենք թամբն ու Թուր Կեծակին: Արա՛գ:

Ընկերները սկսան ախոռը տակնուվրայ ընել:

-Թուր Կեծակին շատ սուր էր, եթէ գտնենք ու ժամանակին հասնինք՝ անիկա կը կտրէ նաեւ մեր տեսած մեծ քարը,- փնտռելով ինքն իրեն կը խօսեր Իշխանը,- բայց այնքան մուփ է այստեղ, ինչպէ՛ս գտնենք:

-Յաստա՛տ կը կտրէ,- հարցուց Մերին:

-Այո՛, ըստ դիցաբանութեան՝ այդ սուրով Սասունցի Դաւիթը կը կտրէ քառասուն գոմէշի կաշի եւ նոյնքան ալ ջրաղացի քար,- բացատրեց Իշխանը:

- Այստեղ իրարու վրայ դրուած գոմէշի կաշիներ կան,- քիչ մը հեռուէն կանչեց Աննան:

Ձայնի վրայ բոլորը վազեցին այդ կողմ ու սկսան քանդել կաշիներու խուրճերը: Քիչ անց անոնց մէջէն գտնուեցաւ Թուր Կեծակին:

-Նայեցէ՛ք, այնտեղ բան մը կը փայլի սադափի նման,- փայլող կողմը ցոյց տալով ընկերներուն՝ ըսաւ Ժագը:

Ընկերները արագ մօտեցան եւ յայտնաբերեցին նաեւ թամբը:

-Արա՛գ, թամբէ՛նք ձին, չուշանանք,- կարգադրեց Մայքը:

Ընկերները հապճեպօրէն ձիուն վրայ դրին թամբը՝ կողքէն կախելով Թուր Կեծակին: Երբ ամէն ինչ պատրաստ էր, ձին յանկարծակի խոնարհաբար իջեցուց գլուխը՝ թոյլ տալով, որ հեծնին:

* * *

Իսկ այդ ընթացքին՝ Սարգիսի Առաջինը արդէն ըսած էր իր շնորհաւորանքի խօսքն ու կը շոջեր բերդապարիսպին մէջ: Ամենավերի կէտին, մահացու քարը պատրաստ պահած՝ կը սպասէին Ասորեստանէն եկած դաւադիրները: Վարը անոնց յանցակից ընկերը ամէն ինչ դասաւորած էր այնպէս, որ արքան, երբ կանգ առնէր «յարմար» տեղը, վերէն գլորուող քարը գար ճիշդ անոր ուղղութեամբ:

Մէյ մըն ալ այդ պահուն յանկարծ երկնքի մէջ լոյս ու կրակ յայտնուեցաւ: Ախոռին տանիքը պատռելով՝ դուրս թռավ Քուռկիկ Ջալալին՝ մեր հերոսները մէջքն առած:



Հրեղէն ձին թեթեւ ու անկաշկանդ քարերու վրայէն մագցելով եւ բարձրանալով ժայռերէն վեր՝ գրեթէ հասաւ արքան սպաննել փորձողներուն, իսկ այդ պահուն վերջիններս արդէն հրելով քարը կը փորձէին զայն գլորել արքայի ուղղութեամբ: Վարը աղմուկ է, երգ, երաժշտութիւն ու տօնախմբութիւն. Մարդ չի նկատեր մահացու «զէնքին» մօտենալը:

-Քարը կը գլորե՛ն... մենք չենք հասցներ, հիմա կը սպաննուի հայ արքան,- վախցած ըսաւ Աննան:

-Ոոո՛չ... Քուռկիկ Ջալալի, օգնէ՛,- բարձր բացագանչեց Մայքը:

Ձին օդի մէջ թափահարեց բաշը եւ ուղիղ թռաւ արդէն գլորուող քարին ուղղութեամբ:

-Տէ զա՛րկ, զա՛րկ ժագ,- գոչեցին ընկերները:

Ժագը վարպետօրէն ճօճեց Թուր Կեծակին եւ շեշտակի հարուածեց: Քարը քառասուն կտոր դարձաւ: Այդ դրդիւնէն վարը հաւաքուածները նայեցան վեր ու ապշեցան՝ երկինքին մէջ Հրեղէն ձի է, ընկերներ ու տեղացող քարէ անձրեւ:

-Հեռո՛ւ, Արքայ, հեռո՛ւ,- զգուշացուցին արքան:

Արքան ձիով ու շքախումբով արագ մէկ կողմ քաշուեցաւ, իսկ քարի փոքր կտորները ուժգնութեամբ թափեցան վար:

* * *

- Եկէք դանդաղ, աննկատ իջնենք, մի քանի վայրկեան ունինք,- ընկերներուն դիմեց Մայքը,- այս ի՛նչ հրաշք էր, ձին ալ անհետացաւ:

-Կեցէ՛ք, ո՞վ էք դուք,- յանկարծ ընկերներուն ետեւէն լսուեցաւ խռպոտ ու սարսափելի ձայն մը, որմէ ետք ընկերները վախցած կանգ առին:

Քանի մը հոգի անմիջապէս ընկերները շրջապատեցին. անոնց մէջ էին նաեւ մեզի ծանօթ այն երկու մարդասպանները:

-Դուք փճացուցի՛ք այն, ինչի համար մենք մեծ դժուարութեամբ հասած ենք այստեղ: Ուրեմն պիտի չապրի՛ք,- սպառնալից շեշտով ըսաւ շրջապատողներէն մէկը:

-Դուք կ'ուզեիք սպաննել Սարգուրի արքան,- համարձակօրէն ըսաւ Մայքը:

-Ձայնդ կտրէ՛, լակո՛ւտ,- ըսաւ յանցագործներէն մէկը՝ փորձելով սաստել Մայքը, ապա դիմեց քովը կեցած տղամարդուն,- շուտ պատժէ՛ ասոնց:

Յաղթանդամ տղամարդը թուրը ձեռքին մօտեցաւ ընկերներուն: Անոնք սարսափահար իրարու փաթթուելով կը դողային: Տղամարդը կտրուկ բարձրացուց թուրը, եւ երբ արդէն պիտի հարուածէր, նոյն պահուն յանկարծ լսուեցան մօտեցող ձիերու սմբակներուն դոփիւնները:

-Իջեցուցէ՛ք ձեր թուրերը, դաւաճաններ: Բռնեցէ՛ք բոլորը,- հնչեց հրամանատարի յորդորն ու կարգադրութիւնը:

Մի քանի զինուած մարդիկ արագօրէն կապկպեցին դաւաճաններուն ձեռքերն ու ընկերներն ալ անոնց հետ միասին տարին Արքայի քով:

* * *

Պալատին մէջ Սարգուրի արքան կարգով ձեռքը դրաւ ընկերներու գլուխներուն՝ ըսելով.

-Ես ամէն ինչ հասկցած եմ՝ դուք Խալդի Աստծոյ կողմէ ուղարկուած գերբնական էակներ էք, ովքեր պէտք է պահպանեն մեր թագաւորութիւնն ու զիս:

-Ոչ, արքայ, մենք հասարակ մարդիկ ենք ու այստեղ եկած ենք, որպէսզի...,- փորձեց բացատրել Աննան:

-Սո՛ւս... ինչե՞ր կը խօսիս,- շնչալով սաստեց Մայքը:

-Տարեք Աստուածները մեր բերդապարիսպը, տուէք ամենալուսաւոր ու բարձր սենեակը, ճիս ընթրիք կազմակերպեցէք, այսուհետեւ անոնք մեզի հետ պիտի ապրին,- հրամայեց Սարգուրին իր ենթականերուն:

-Ո՛չ, ո՛չ... ատիկա անհնար է, մենք պէտք է երթանք,- ըսին մեր հերոսները:

Բայց անոնց լսող չկար: Արքայի զինուած մարդիկ յարգանքով բռնեցին ընկերներուն ձեռքերէն ու տարին իրենց հետ:

Ընկերները ամեն ձեռով փորձեցին ազատիլ այդ ամուր ձեռքերեն, բայց զինուած մարդիկ ակելի ու ակելի զօրաւոր բռնեցին անոնց ձեռքերը:

-Մնաց ընդամենը հինգ վայրկեան,- մտահոգ շշնջաց Մերին,- եթէ չհասցնենք իրար ձեռք բռնել՝ կը մնանք այստեղ:

-Ի՞նչ ընենք, չեմ գիտեր,- շշուկով ըսաւ Աննան:

-Եկէք հանդարտ մնանք ու փորձենք մօտենալ իրարու եւ երբ նշան տամ՝ մէկ անգամէն իրարու ձեռք բռնենք,- յորդորեց Մայքը:

Ընկերները այդպէս ալ ըրին. հանգիստ քալեցին, յետոյ փորձեցին աննկատ իրարու մօտենալ, երբ բոլորը գրեթէ մօտեցան իրարու, բացի Իշխանէն, զոր տանող զինուորը շատ արագ կը քալեր եւ Իշխանը չէր կրնար դանդաղեցնել ընթացքը:

-Վե՛րջ, ալ ժամանակ չունիսք,- հնչեց Մերիի ձայնը,- հաշուելուս հետ միասին պէտք է իրարու ձեռք բռնենք եւ փորձենք ցատկել ու հասնիլ Իշխանին...հի՛նգ, չո՛րս, երե՛ք, երկո՛ւ, մէ՛կ... Իշխա՛ն, ձեռքդ տո՛ւր...

* * *

...Չօրաւոր քամի, փոթորիկ է, ընկերները յոգնած, ուժասպառ հասան ամրոց: Անոնք փռուեցան յատակին եւ իրենց հետ կատարուածէն դեռ չսթափած, պահ մը կը փորձէին հասկնալ, թէ ինչ իրականութեան մէջ են այս պահուն:

Ամրոցին լռութիւնը կը խախտեր միայն կրակարանին մէջ բոցկլտացող կրակը, որ մեծ լեզուակներով ազահօրէն կը կլաներ փայտը եւ իր ցոլքերը կը նետեր ամրոցին մէջ:

-Ուղղակի հետաքրքրական է՝ արդեօք ո՞վ այս կրակարանին մէջ միշտ փայտ կ'աւելցնէ-. կարծես անմար կրակ ըլլայ, անդադար կը վառի,- բարձրաձայն մտածեց Իշխանը ու տնքալով նստեցաւ գետին:

-Չիմա այն ինչ կը յիշեմ երա՛գ էր, թէ բոլորիս հետ կատարուած է,- նայելով ժագին կողմը՝ հարցուց Մերին:

-Ոչ, ատիկա իրականութիւն էր, որ դեռ երկար պիտի տեւէ: Ժազը բարձրացաւ գետնէն, մօտեցաւ կրակարանին,- ինքզինքս արկածային ֆիլմի հերոս կը զգայի. Տեսա՞ք ինչպէս ջարդեցի այդ հսկայ քարը:

- Անօթի՛ եմ, ուտե՛լ կ'ուզեմ, ստամոքսս կ'երգէ,- յանկարծ ճչաց Մերին,- գոնէ Վանայ տառեխ բերեիք մեզի հետ, ինչպէ՛ս կ'ուտեի. երթամ խոհանոց տեսնեմ ի՞նչ կը գտնեմ:

Խոհանոցէն լսուեցաւ Մերիի սուր ձայնը.

- Տառե՛խ, տառե՛խ գտած եմ, եկէ՛ք:

Ընկերները նետուեցան «խոհանոց» կոչուած փոքրիկ սենեակը եւ զարմանքէն քար կտրեցին. սեղանին դրուած էր ձկնեղէն՝ համեմուած ախորժաբեր համեմներով: Ընկերները յարձակեցան ձկնեղէնին վրայ եւ սկսան ախորժակով ուտել: Մէյ մըն ալ Իշխանը գլուխը դուրս հանեց «յարձակողներու» մէջէն եւ մատը վեր պարզելով՝ կատարեց իր եզրակացութիւնը.

-Փաստօրէն մենք մեր հայրենիքի որ հատուածի պատմութիւնը որ կ'ուսումնասիրենք, նոյն շրջանի բարիքներէն ալ մեզի կը մատուցեն իբրեւ ճաշատեսակ:

- Ի՞նչ համով է, փուշերն ալ կարծես բերնի մէջ կը հալին,- հիացած ըսաւ Աննան,- Ամերիկայի մէջ մեր ովկիանոսները բաւականին ձկնառատ են, հազար ու մէկ տեսակ ձուկ կայ, բայց այս տառեխին համը ուրիշ է, անհամեմատելի. ճիշդ կ'ըսեն՝ մեր հայկականը ուրիշ է:

- Մեր հայկական բոլոր ձկնատեսակներն ալ համով են,- հաստատեց Մայքը:

-Երթամ քնանամ, շատ յոգնած եմ,– ըսաւ Ժազը ու հեռացաւ:

Յանկարծ քանի մը վայրկեան անց լսուեցաւ Ժազի լեղապատառ ճիչը եւ հզօր դմփոցը. ընկերները իրար անցած վազեցին «ննջարան»:

-Օգնեցե՛է՛ք,- կը լսուեր Ժազին ձայնը, բայց ինքը չկայ ու չկայ:

-Չէ՛յ Ժազ, ո՞ւր ես,- պոռաց Մայքը:

Ընկերները այս ու այն կողմ նայեցան, փնտռեցին, բայց ձայնը կայ՝ ինքը չկայ:

-Այստեղ եմ մահճակալին տակ, շո՛ւտ, շո՛ւտ փրկեցե՛ք- մահճակալներեն մեկուն տակէն պոռաց ժագը:

Մահճակալներեն մեկը շրջուած էր եւ այնտեղէն կու գար ժագին ձայնը: Անոնք արագ վազեցին եւ բարձրացուցին ծանր մահճակալը, որուն տակէն վախցած ժագը ելլաւ ու ըսաւ.

-Չհասկցայ ինչ կատարուեցաւ. երբ պառկեցայ մահճակալին՝ մեկ անգամէն՝ դարձաւ հակառակ կողմը եւ տակը մնացի, տարօրինակ է, որ չեմ վնասուած:

-Բայց ինչպե՞ս կրնայ մահճակալը դառնալ,- հարցուց Մերին եւ ցատկեց մահճակալի մը վրայ, որ նոյնպէս դարձաւ՝ զինք իր տակ առնելով: Մերին սարսափահար ճչաց. ընկերները օգնեցին նաեւ Մարիին եւ զինք դուրս հանեցին:

-Բայց այս ի՞նչ հրաշք է,- զարմացած ըսաւ Մայքը:

- Օհ, երանի ինթըրնետ ըլլար եւ այս հրաշքը նկարէի ու Instagram դնէի, ինչքան հետեւորդ կ'ունենայի... երանութեամբ ըսաւ Աննան:

Իշխանը այդ պահուն աչքերը չորս բացած կ'ուսումնասիրէր մահճակալները եւ ինքն իրեն կը խօսէր: Յանկարծ կարծես ամէն ինչ հասկցած մարդու խորամանկ ժպիտով ըսաւ.

-Զունս կու գայ, կը ներէք, ես պէտք է հանգստանամ:

Այս ըսելով Իշխանը հանդարտ, առանց խուճապի քալեց դէպի մահճակալներէն մեկը, պառկեցաւ վրան եւ ակնոցը թափահարելով կանչեց.

- Բարի գիշեր, սիրելիներս...

Այդ պահուն բոլորը կը սպասէին, որ Իշխանը եւս մահճակալին տակ մնայ, բայց ի զարմանս բոլորին՝ փոքրիկ գիտունիկի մահճակալը մնաց տեղը, իսկ վերջինս ալ դեռ չպառկած՝ սկսաւ խռալ:

Ընկերները քար կտրած նայեցան իրարու:

-Ամէն ինչ անցա՞ւ,- ըսաւ Մայքը եւ նետուեցաւ մահճակալներէն մեկուն վրայ, որ անմիջապէս

դարձաւ եւ իր տակը առաւ Մայքը: Ընկերները զարմացած, վախցած, վերջին ուժերը հաւաքելով՝ Մայքը եւս դուրս հանեցին մահճակալին տակէն:

-Այս ի՞նչ հրաշք է, Աստուած իմ. իսկ այս գիտունիկին բան չեղաւ եւ դեռ հանգիստ կը խռայ,-Իշխանի կողմը ցոյց տալով՝ ըսաւ Աննան:

Ընկերները հաւաքուեցան Իշխանի շուրջ եւ «արթնցուցին» զինք:

-Գիտունիկ, շուտ բացատրէ՛, ի՞նչ է գաղտնիքը՝ մինչեւ չըսես չենք ձգեր քնանաս,- սպառնաց ժազը:

-Յա՛, քնացայ եւ մոռցայ ձեզի ըսելու,- յորանջելով հեզնեց գիտունիկը,- ես հիմա ամեն ինչ կը բացատրեմ. Թող անհամեստութիւն չըլլայ, բայց ես բոլորէդ փոքր, սակայն ձեզմէ աւելի խելացի եմ:

-Ե՛ւ,- պոռագին բոլորը միաժամանակ:

-Ուրեմն չէք ժխտեր: Ատիկա արդէն լաւ է: Յա՛, ուրեմն կայ տասը մահճակալ եւ դուք ալ համոզուեցաք, որ ամեն մահճակալի չէք կրնար պառկիլ: Ես մտածեցի, որ ասիկա կապուած է այս ամրոցէն ներս գործող որոշ կարգուկանոնի հետ եւ սկսայ աւելի ուշադիր ուսումնասիրել մահճակալները: Մահճակալներուն վրայ նկատեցի մեր անուան ակզբնատառերը եւ գտնելով իմ տառս՝ մօտեցայ ու հանգիստ պառկեցայ...այսքան բան... գտեք իւրաքանչիւրդ ձերը, եւ մահճակալները կ'ենթարկուին ձեզի: Վա՛յ, քունս կու գայ...

Ասիկա ըսելուն պէս Իշխանը դարձեալ լայնաբերան յորանջեց եւ գլուխը դրաւ բարձին: Բայց նոյն պահուն ալ յանկարծ անոնց առջեւ յայտնուեցաւ նոյն լոյսի ցոլքը, որուն մէջէն յայտնուեցաւ մեզի արդէն ծանօթ ծերունին. ընկերները սարսափով նայեցան անոր:

- Մի՛ վախնաք ընկերներ, եւ ընդհանրապէս ինձմէ պէտք չէ վախնալ: Ես ձեր բարեկամն եմ եւ այն ամենը, ինչ ձեզի հետ կը կատարուի, ձեր եւ ձեր տարեկիցներու շահին համար է. ասիկա պէտք է բոլորը գիտնան: Դուք այսօր Վասպուրական աշխարհի գացիք, ծանօթացաք եւ մասնակցեցաք այնտեղ տեղի ունեցած պատմական մեծ իրադարձութիւններուն: Ձեր միջոցով շա՛տ-շատերը կը գիտնան մեր չքնաղ Վանի մասին, կը ճանչնան երբեմնի հզօր Ուրարտուի պատմութիւնը, փառքը, անոր զօրեղ արքաներու քաջագործութիւնները: Անոր համար պէտք է քաջ գիտակցինք, կարելոր համարենք ու հասկնանք, որ հայ ազգը իր նախնիներուն ձգած հարուստ աւանդին հաւատարիմ, իր իւրայատուկ ծինի ուժով եւ արեան կանչի զօրութեամբ մեր օրերուն եւ բոլոր ժամանակներուն ալ պէտք է ըլլայ կարեւորագոյն, միշտ առաջին դիրքերուն գտնուող եւ հզօրագոյն երկիր, իսկ ասիկա հնարաւոր է, եթէ լաւ գիտնանք մեր պատմութիւնը, մեր ազգային բնաւորութիւնն ու խառնուածքը,

մեր արմատներն ու մեզի բաժին հասած ժառանգութեան արժէքը, ճանչնանք մեր ուժը եւ մենք մեզի: Սոսկալի է անտարբերութիւնը, օտարամոլութիւնն ու այլապաշտութիւնը մեր ազգային արժէքներուն հանդէպ, անիկա չարիքի պէս կը ջնջէ ազգային դիմագիծը, կը վերացնէ մեր ինքնութիւնն ու կը կործանէ մեր ազգը:

Շարունակեցէ՛ք պեղել հայոց գանձերը, դեռ երկա՛ր ճանապարհ ունիք անցնելու եւ ձեր ուսերուն դրուած մեծ խնդիրը կատարելու:

* * *

Գ.մաս

Նոր օրուայ արեւի առաջին շողերուն հետ՝ անոնք արդէն կախարդական սենակին մէջ էին: Իշխանը վերցուց ծիրանափողն ու փչեց:

Քամի, փոթորիկ ու ընկերները մէկէն անհետացան սենեակէն.

Անոնք օդապարիկին մէջ են՝ կը ճախրեն երկինքի մէջ: Օդապարիկը քամիի արագութեամբ զիրենք կը տանի անծայրածիր տարածքներու վրայէն: Վար կը նային ու կը զարմանան:

-Չեմ հասկնար ասոնք ի՞նչ տարածքներ են,- Մայքը տարակուսանքով նայեցաւ ընկերներուն:

-Հաստատ Հայաստանը չէ, որովհետեւ Հայաստանի մէջ ծովեր չկան, իսկ մենք տեսանք Կասպից ծովն ու Միջերկրական ծովը, Կովկասեան լեռներն ու Միջագետքի անապատները,- պատասխանեց ժազը:


-Իսկ բանակի կայազօրները նկատեցի՞ք, ամենուր կայազօրներ են,- Իշխանը զարմացած էր:

-Եթէ Հայաստանը չէ, ուրեմն ինչո՞ւ այստեղ ենք, սխալ տե՞ղ ենք,- վախցած ըսաւ Մերին:

Յանկարծ զօրաւոր, սարսափելի քամի բարձրացաւ: Օդապարիկը սկսաւ այս ու այն կողմ թեքուիլ, փոխել ուղղութիւնը, ընկերները սարսափահար աղմուկ-աղաղակ բարձրացուցին:

-Ա՛յ... այս ինչ քամի է, հիմա կ'իյնանք, ամուր բռնուեցէք,- Աննան վախէն կը ճչար:

-Օդապարիկը անկառավարելի դարձած է, պետք է բան մը մտածել,- Մայքը իրար անցաւ:



-Օ՛հ, կը վախնամ, օ, Աստուած իմ.... հիմա գետնին կը զարնուիիք,- կը ճչար Աննան անընդհատ:

Օդապարիկը, որ մեծ ուժգնութեամբ սկսաւ գահավիժիլ, յանկարծ յայտնուեցաւ ծառերու ճիւղերուն մէջ եւ պատռտուեցաւ: Ընկերները պոռալ կանչելով գետին ինկան:

Պահ մը քար լռութիւն տիրեց, յետոյ այստեղէն-այնտեղէն լսուեցան անոնց տնքոցները:

* * *

Որոշ ժամանակ անց, քալելէն ուժասպառ եղած Աննան՝ կանգ առաւ:

-Ես ալ չեմ դիմանար, ծարաւէն կը մեռնիմ, ջո՛ւր:

-Արդէն կը զգամ ջուրին հոտը, քիչ մըն ալ ու կը հասնիիք,- Իշխանը փորձեց յոյս տալ:

Մի քանի քայլ անց անոնք կանգ առին. Քիչ մը հեռուն փոքրիկ գետակ էր, որ սկիզբ կ'առնէր քչքչան աղբիւրէն: Աղբիւրին մօտ մի քանի մարդ կար: Ընկերները զգուշութեամբ պահուըտեցան եւ սկսան մտիկ ընել անոնց խօսակցութիւնը:

Քիչ անց ընկերները պարզեցին իրավիճակը. Աղբիւրին քով հաւաքուածներու խումբը կ'ուզէր երիտասարդ տղայ մը որպէս պատանդ յանձնել միւս խումբին: Պատանին կը փորձէր դիմադրել, սակայն երկու խումբի մարդիկ ալ անդրդուելի էին:

-Ես չեմ երթար,- կը պոռար պատանին,- չեմ երթար ու վերջ:

-Դուն չես կրնար չգալ մեր հետ, ատիկա թագաւորին որոշումն է, դուն մեր պատանդն ես:

-Թագաւորը չի կրնար իմ կեանքիս համար որոշում կայացնել, ազատ ձգեցէք զիս,- կը յամառէր պատանին:

-Բռնեցէք զինք, ...

-Մենք պետք է խանգարենք, որ այս պատանին տանին, կ'երելի անոր համար հոս յայտնուած ենք,- եզրակացուց ժազը:

-Բայց ո՞վ է այս պատանին,- հարցուց Մերին:

- Չեմ գիտեր, սակայն հաստատ պետք է զինք փրկենք: Գացինք:

Ընկերները վազելով, աղմուկ-աղաղակով մօտեցան հաւաքուածներուն:

-Սպասեցէք, ձգեցէք զինք, ատիկա մարդու իրաւունքներու խախտումն է, ո՞ր կը տանիք,- ըսաւ Իշխանը:

Սուրերով զինուած մարդիկ զարմացած նայեցան ընկերներուն.

-Դուք ովքե՞ր էք, ո՞վ զրկած է ձեզի, ասիկա ի՞նչ դաւադրութիւն է:

Մայքն ու ժազը գետնէն փայտի կտորներ բարձրացնելով՝ յարձակեցան զինուած մարդոց վրայ: Խառնաշփոթ սկսաւ: Օգտուելով առիթէն՝ աղջիկները փորձեցին պատանդ երիտասարդին ձեռքերը արձակել: Գրեթէ յաջողած էին, սակայն մի քանի վայրկեան անց՝ իրենց ուսերուն վրայ զգացին

Կապկպուած ձեռքերով, վախցած ու զայրացած՝ անոնք կէս ժամէն աւելի, ուրիշ պատանդներու հետ մէկտեղ, աղտոտ սայլի մը մէջ կքած՝ տեղ մը կ'երթային: Կիզիչ արեւը այնպէս կը վառէր...

-Ո՛ր կը տանին մեզի, ինչո՞ւ կը տանին,- հագիւ շշնջաց Աննան:

-Մենք ինչո՞ւ փորձեցինք ազատել այդ պատանին, սխալ միտք էր,- ըսաւ Մայքը:

-Վերջ, այլեւս երբեք չենք վերադառնար մեր տուները,- ըսաւ Մերին արցունքոտ աչքերով:

Իշխանը կապկպուած ձեռքերով՝ յամառօրէն կը փորփրէր հողոտ ու փոշոտ սայլակին յատակը:

-Բան մը ըսէ, գիտո՞ւն իշխան, ինչո՞ւ բերանդ ջուր կտրած է,- ըսաւ Մայքը:

Յանկարծ իշխանի ձեռքը կոշտ բանի մը դպաւ, ան մատներով զգուշութեամբ հանեց իր գտածը: Կէս մետաղադրամ էր, որուն վրայ մէկու մը գլխարկին վերի մասը կ'երեւէր:

-Մետաղադրամ է,- ըսաւ ան,- բայց կիսատ:

-Ինչպիսի՞ ուրախութիւն, եթէ կիսատ չըլլար՝ ի՞նչ պիտի փոխուէր,- հեզնեց Մայքը:

Իշխանը մատով փորձեց մաքրել մետաղադրամը եւ յանկարծ տարօրինակ բան մը կատարուեցաւ. ընկերները քամիի ուժգնութեամբ յայտնուեցան տարբեր անձանօթ վայրերու մէջ. Տեղ մը ամառ էր, տեղ մը՝ ձմեռ, տեղ մը պատերազմ էր, տեղ մը՝ հարսանիք:

Իշխանը վախցած մետաղադրամը նետեց ձեռքէն.

-Ասիկա ի՞նչ էր:

-Ասիկա բոլորի՞ս հետ կատարուեցաւ,- ժազ յանկարծակիի եկած՝ նայեցաւ շուրջը:

-Այո, մենք տեղաշարժուեցանք ժամանակին մէջ... ասիկա ինչպէ՞ս եղաւ,- զարմացած ըսաւ Մերին:

-Ես մաքրեցի մետաղադրամը, անոր վրայ աստղի նման նշան կար, երբ մատս դպաւ այդ նշանին, կատարուեցաւ մեր տեղափոխումը: Այ, այսպէ՛ս...

Իշխանը գետնեն վերցուց մետաղադրամը եւ կ'ուզէր նորէն ցոյց տալ, սակայն բոլորը միասին պռռացին.

-Մի՛ ընենէր, սպասէ՛: Ատիկա կախարդական մետաղադրամ է:

-Ըսիր ա՛ստղ է,- հարցուց Մայքը:

Բոլորը մօտեցան իշխանին:

-Ուրեմն այսպէս կ'ընենք,- շարունակեց Մայքը,- դուն այդ աստղը կը պտտցնես ժամացոյցի սլաքի ուղղութեամբ եւ ընդամենը մէկ անգամ:

Իշխանը համաձայնեցաւ.

-Լաւ... Պատրա՛ստ էք:

Ընկերները պատասխանեցին.

-Այո՛, այո՛, արագ ըրէ՛...

Իշխանը տեսնելով բոլորին սպասողական հայեացքները՝ աստղը պտտցուց ժամացոյցի սլաքի ուղղութեամբ:

* * *

Արքունական պալատ: Հաւաքուած էր մեծ բազմութիւն: Տօնախմբութիւն էր: Ընկերները իրենց հագուստներէն թափ տուին տարիներու փոշին ու յառաջացան, երբեմն կանգ առնելով ու զգուշութեամբ նայելով իրենց շուրջը: Վարագոյրներուն ետեւը մեծ ու լուսաւոր սենեակ նկատեցին. այնտեղ կարելոր արարողութիւն մը տեղի կ'ունենար: Անոնք լարեցին իրենց խողովակները: Մերին թերթեակի ետ քաշեց վարագոյրը. 40-45 տարեկան տղամարդ մը կը թագադրէին:

Նոր թագադրուածը նստեցաւ գահին. Երբ ընկերները կ'ուզէին յառաջանալ, որպէսզի տեսնէին թագաւորին դէմքը, յանկարծ քիչ մը հեռուէն լսուող զգուշ խօսակցութիւնը ստիպեց զիրենք պատսպարուիլ: Երկու հոգի շշուկով կը խօսէին:



-Սու՛ս... Նոր արքայի մասին կը խօսին...բայց ինչո՞ւ գաղտնի ու շշուկով,- Իշխանը մատը դրաւ շրթուկին:

Ընկերները լարեցին իրենց լսողութիւնը:

-Վերջ, ամէն ինչ բարեյաջող աւարտեցաւ. Հայոց 70 հովիտները մերն են, իսկ ամենամեծ յաջողութիւնը այն է, որ Հայոց գահին նստեցաւ մեր մարդը,- ըսաւ տարիքով անելի մեծը:

-Շահ տ համոզուած կը խօսիք: Ան հայ է, ուստի պետք է զգուշանալ,- ըսաւ անելի երիտասարդը:

-Ի՛նչ կ'ըսես, ան մեր քով մեծցած է՝ պարթեւական արքունիքին մէջ, իւրացուցած է մեր բարքերը, ամուսնացած է պարթեւ արքայադստեր հետ, իսկ ատիկա կը նշանակէ, որ Հայաստանը մեր գերիշխանութեան տակ պիտի ըլլայ:

-Այսինքն մենք մեր գործը ըրինք ու կրնանք վերադառնա՞լ,- հարցուց երիտասարդը:

-Այո՛, հիմա պիտի վերադառնանք մեր երկիր: Շուտով Հայաստանն ալ պիտի ըլլայ մերը. երթանք այս լաւ լուրը հաղորդենք մեր արքային. ան անհամբեր կը սպասէ,- խօսակցութիւնը եզրափակեց անագ գրուցակիցը:

Այդ մարդիկ արագ ու ինքնագոհ հեռացան: Իշխանը գրպանէն հանեց մետաղադրամը, սկսաւ ուշադիր զննել:

-Ես այս մետաղադրամը տեղ մը տեսած եմ. այս աստղը ինձի բան մը կը յիշեցնէ:

-Տուր նայիմ,- ըսաւ Ժագը ու Իշխանի ձեռքէն առաւ մետաղադրամը,- բայց ասիկա Յալլէյի գիսաւորն է, այո ինքն է:

-Յալլէյի գիսաւորն ի՞նչ է, լաւ կը բացատրե՞ս հասկնանք,- զայրացաւ Մայքը:

-Յալլէն 1720-էն Կրինուիչի աստղադիտարանի տնօրէնն էր: Ան 1676–78-ին կազմած էր Յարաւային երկնքի 341 աստղերու հեռադիտակային առաջին աստղացուցակը: Ան առաջինն էր, որ հաստատած էր գիսաւորի պտոյտի պարբերականութիւնը, որ կարծեմ 76 տարի է,- պարզաբանեց Ժագը:

Մայքը ընդհատեց.

-Մէկ վայրկեան, մէկ վայրկեան ... բայց մենք 18-րդ դարուն մէջ ենք...

-Գիտեմ ու բան չեմ հասկնար,- մտքերու մէջ ինկաւ Ժագը:

Յանկարծ Մերին ուրախութեամբ ճչաց.

-Ես յիշեցի՛, յիշեցի՛:

-Ի՞նչ յիշեցիր, Մերի՛, ըսէ՛,- ըսաւ Աննան:

Բոլորը սպասողական նայեցան անոր:

-Տեղ մը կարդացած էի, որ իր պատկերը կրող դրամներուն վրայ Տիգրան Մեծի թագին պատկերուած էր աստղ մը, որ ըստ ենթադրութիւններու, ուրիշ բան չէր, քան Յալլէյի գիսաւորը, որ երեւացած էր անոր գահակալութեան ընթացքին:

Մայքը ապշած հարցուց.

-Այսինքն, մեր դիմաց նստած է Տիգրան Մե՞ծը... քիչ առաջ ի՞նք թագադրուեցաւ:

-Այո՛, եւ ինքն էր այն պատանին, որուն հօրեղբայրը՝ Արտաւազդ Ա-ը, պատանդ տուած էր պարթեւներուն, իսկ հիմա զինք Յայոց 70 հովիտներուն դիմաց ազատած ու արքայ կարգած են,- ոգեւորուած շարունակեց Մերին,- ինչպէ՛ս չէի կռահեր:

-Այսինքն՝ երկինքէն մեր տեսածը ծովէ-ծով Յայաստանն էր... ու մենք հիմա կը գտնուինք հայոց պատմութեան ամենահզօր ժամանակներուն մէջ,- ըսաւ Աննան ոգեւորուած:

-Այո՛, ՔԱ 95 թուականն է... փշաքաղուեցա՛յ,- ըսաւ Մերին՝ յուզուած նայելով շուրջը:

-Բայց ինչո՞ւ պարթեւները վստահ են, որ Տիգրան Մեծը պիտի ծառայէ իրենց,- մտքերու մէջ ինկաւ Իշխանը:

Անոնք մտահոգ նայեցան իրարու:

-Աստղը պտտցնելու ժամանակն է,- ըսաւ Ժագը,- մենք դեռ շատ բաներ ունինք տեսնելու եւ հասկնալու:

Իշխանը դանդաղ ու պտտցուց աստղը եւ ժամանակի քամին մէկ անգամէն զիրենք առաւ իր թեւերուն մէջ:

* * *

-Չեմ կարծեր, որ ասիկա ճիշդ որոշում է,- զինուորականի ծանր զգեստը ձեւով մը իր վրայ քաշելով՝ բողոքեց Աննան,- ես այս հագուստներու մէջ պիտի մեռնիմ:

-Աննա՛, մեզի հնարաւորութիւն տրուած է Տիգրան Մեծի հետ պատերազմի դաշտ երթալ, իսկ դուն հագուստէն կը բողոքես,- սաստեց Իշխանը, որ իր այնքան ծալած զինուորական հագուստով ծիծաղելի տեսք ստացած էր:

-Իսկ դուք գիտե՞ք, որ պատերազմին նաեւ կը սպաննուին, իսկ եթէ սպաննե՞ն մեզ,- ըսաւ Աննան:

-Աննա՛, եթէ չերթանք, յաւերժ կը մնանք այստեղ,- բարկացաւ Մայքը,- մի՛ մոռնաք ժամանակի մասին. ընդամենը մէկ ժամ ունինք, իսկ մենք դեռ չենք գիտեր, ինչ առաքելութեամբ այստեղ յայտնուած ենք:

-Ահա՛ ան...աչքերուս չե՛մ հաւատար,- ժագ հիացած նայեցաւ Տիգրան Մեծին, որ խօսելով կը շոքէր զօրքին դիմաց. ընկերները յուզուած ու հիացած կը լսէին զինք:

-Պարթեւներու հաշիւները սխալ էին, հայե՛ր. ապացոյցը մեր վերակազմաւորուած հայոց բանակն է: Մենք պետք է վերականգնե՛նք հայոց հեղինակութիւնն ու հզօրացնե՛նք մեր պետութիւնը:

Չօրքը համաձայնութեան աղաղակներով ընդունեց արքայի խօսքերը:

* * *

...Եւ Տիգրան Մեծի հետ, անոր յաղթարշաւի մարտերով գացին մեր հինգ հերոսները: Տիգրանի զօրքերուն հետ արագ երթով մտան Ծոփքի թագաւորութիւն, գրաւեցին հայոց այդ հնամենի երկրամասը, տեսան, թէ ինչպէս գլխատուեցաւ Արտանես արքան եւ Ծոփքը միացուեցաւ Մեծ Ղայքի թագաւորութեան:

* * *

Երեկոյ էր...Անոնք նստած էին բաց երկնքի տակ, կրակի շուրջ. կը հանգստանային՝ կարելոր ճակատամարտէն առաջ: Տիգրանի զօրքը կ'ուտէր, կը խմէր, կ'ուրախանար: Մեր հերոսները հաւաքուած էին փոքրիկ խարոյկին շուրջ, կը զրուցէին:

-Չեմ հաւատար, որ հայոց արքաներէն ամենահզօրի կողքին եմ,- խանդավառուած էր Մայքը:

-Տիգրանի մասին մեզի հասած տեղեկութիւններուն մեծ մասը օտար պատմիչներէն հասած է, մինչդէռ մենք ամէն ինչ մեր աչքով կը տեսնենք:

-Ես գիտեմ, որ ան «Տիգրանակերտ» անունով **4 քաղաք հիմնադրած է եւ որ Ղայաստանը Տիգրանի օրերուն ունեցած է 3 միլիոն քառակուսի ք.մ. տարածք**,-հիացած յայտնեց Մերին:

-Կ'ըսեն նաեւ, որ ան **դաւաճանութեան համար մահապատիժի ենթարկած է իր որդին՝ Տիգրան Կրտսերը, եւ կրցած է ընդամենը մէկ արշաւանքով գրաւել Պարթեւներու երկիրը, մինչդէռ հռոմէացիները շուրջ 3-5 դար չէին կրնար գրաւել զայն: Մեր Տիգրանը իշխած է Ասորիքի, Պարթեւստանի, Պարսկաստանի, Փիւնիկի եւ Եգիպտոսի վրայ՝ ստեղծելով աշխարհակալ պետութիւն,-** ակեցուց ժագը:

-Իսկ ես գիտեմ, որ **Տիգրան Մեծի մասին շուրջ 22 յունարեն օփերայ պահպանուած է: Ի դէպ, Տիգրանը միշտ ինքզինք շրջապատած է գրասեր մարդոցմով: Անոր որդի Արտաւազդի գրած ողբերգութիւնները մեզի հասած են որոշ չափով. այդ գլուխ գործոցները հռոմեացի ընթերցասէրները կը կարդային անոր մահէն նոյնիսկ 150 տարի ետք: Իսկ Տիգրանի աներ՝ Միհրդատ Եւպատորը, կը խօսէր 22 լեզուներով,-ըսաւ Աննան ու յօրանջելով պառկեցաւ գետնին,- ...կ'ուզեմ քնանալ, յոգնած եմ:**

-Իսկ գիտեի՞ք, որ առաջին հայկական տառերը ստեղծուած են Տիգրան Մեծի օրով, սակայն անոնք կորսուած են հռոմեական արշաւանքի ժամանակ: Վկայութիւններ կան, որ ստեղծողը եղած է Նորայր անունով քուրմ մը, զոր սպաննած են հռոմեացի զինուորները եւ գողցած հայկական տառերով մագաղաթը՝ յետագային զայն բարձր գինով Տիգրանին վաճառելու նպատակով,- իր կարդացածը ընկերներուն պատմեց Իշխանը:

Սակայն, անոնց խօսակցութիւնը ընդհատեց զօրքերու հրամանատարին ձայնը.

-Լռութիւն... բոլորս պէտք է քնանանք... վաղը ծանր ու դժուար մարտ կը սպասուի: Մարեցէք կրակները...

* * *

Մինչդեռ հայոց երկրի հիւսիսային կողմը կը հզօրանար Պոնտոսի թագաւորութիւնը: Անոր հանճարեղ գահակալ Միհրդատ 2. Եւպատորը (ք.ա. 111-63), որ Հռոմի ոխերիմ թշնամին էր, ըլլալով հմուտ զօրավար եւ դիւանագէտ, անմիջապէս հասկցաւ Տիգրանի յաւակնութիւններն ու ուժը եւ անոր դաշինք առաջարկեց:

* * *

Պոնտոսի արքունիքին մէջ իսկական եռուզեռ էր: Կը պատրաստուէին երկու մեծ արարողութեան՝ հայ-պոնտական դաշինքի կնքման եւ Տիգրան Մեծի ու Պոնտոսի գահակալ Միհրդատ 2. Եւպատորի դստեր՝ Զլեոբարայի ամուսնութեան:

-Այստեղ բան մը կը կատարուի. ես տեսայ, թէ ինչպէս պալատի ետնամասէն մի քանի հոգի ներթափանցեցին պալատ,- շշնջաց Իշխանը,- անոնք հաստատ դաւադրութիւն մը կը կազմակերպեն:

Մայքը առաջարկեց.

-Եկեք փորձենք գտնել զիրենք. մեկ ժամ մնաց, իսկ մենք դեռ բան մը չենք ըրած:

Ընկերները զգուշութեամբ սկսան շրջիլ պալատին մէջ:

Յանկարծ Մերին կանգ առաւ.

-Սպասեցէ՛ք... Նայեցէ՛ք, ինծի կը թուի, թէ այս գեղեցկուհին Բլէրբադրան է՝ Տիգրան Մեծի ապագայ կինը:

Անոնք նայեցան մեկ մատ բացուած պատուհանէն ներս:

Մայքը հաստատեց.

-Իսկապէս շահտ գեղեցիկ է եւ շատ երիտասարդ: Կեցէ՛ք, մարդիկ մտան անոր սենեակը:

Դ.մաս

Ընկերները զգուշութեամբ մօտեցան իշխանի մահճակալին. տղան քնացած էր:

-Իշխա՛ն, իշխա՛ն, արթնցի՛ր,- կամաց մը ձայն տուաւ Աննան:

Իշխանը յանկարծ թռաւ տեղէն, ցատկեց մահճակալէն եւ սկսաւ խենթի պէս վազել ամրոցին մէջ ու պոռալ.

-Ուշացա՛նք, ուշացա՛նք, արագ ըրէ՛ք...

-Ասո՛ր նայիր,- յանդիմանեց ժազը,- ինք քնացած մնացեր է, բայց մեզի կ'ըսէ արագ ըրէք:

-Մենք պատրաստ ենք,- ըսաւ Մերին եւ այդ նոյն պահուն լսուեցաւ ծիրանափողի ձայնը, որուն ձայնէն ընկերները ամրոցէն դուրս նետուեցան անյայտ ուղղութեամբ:

Փոթորիկ սկսաւ...

Չօրքը յոգևած կը յառաջանար. յայտնի էր, որ անոնք ծանր ու յաղթանակած ճակատամարտէ մը կը վերադառնային, որովհետեւ զինուորներու տրամադրութիւնը բարձր էր:

Յանկարծ լսուեցաւ մէկուն հզօր ձայնը.

-Մի քանի ժամ հանգի՛ստ: Ես զոհաբերութիւն պիտի մատուցեմ մեր յաղթանակին համար:

Այս փոքրիկ աւանի շինութիւններէն մէկուն ետեւ պահուըտած՝ մեր հերոսները զարմացած նայեցան իրարու.

-Չոհաբերութի՛ւն,- ըսին բոլորը գրեթէ միաժամանակ:

-Եկէք մօտենանք ու տեսնեք ի՞նչ կը զոհաբերեն եւ որո՞ւն,- առաջարկեց ժազը:

Անոնք զգուշութեամբ յառաջացան եւ գրեթէ հասած էին զօրքի առաջին շարքերը, երբ կրկին լսուեցաւ նոյն թաւ ձայնը, բայց այս անգամ զայրացած.

-Ինչպէ՛ս թէ դուն չես մասնակցիր զոհաբերութեան: Դուն այդ իրաւունքը չունի՛ս, որովհետեւ ասիկա իմ կամքս է:

-Ասիկա ի՞նչ է, եկեղեցի չէ,- շուարած ըսաւ Մայքը:

-Չէ, ասիկա հեթանոսական տաճար կը յիշեցնէ,- ըսաւ Աննան:

-Բայց Հայաստանի մէջ ընդամենը երկու հեթանոսական կառոյց մնացած է՝ Գառնիի տաճարը եւ Նեմրուժ լեռան դիցապաշտարանը, իսկ ասիկա ուրիշ է,- միջամտեց ժազը:

-Ներսը կնոջ արձան կայ եւ զոհասեղան,- նկատեց Աննան եւ հարցուց ընկերներուն,- ի՞նչ չաստուածներ կ'երկրպագէին հայերը եւ ո՞վ է այս գեղեցիկ չաստուածուհին:

-Կարծեմ՝ Անահիտն է,- վարանելով ըսաւ Մերին:

-Այո՛, **Անահիտն է՝ հայոց դիցարանի պտղաբերութեան, ծննդաբերութեան չաստուածուհին**, - ոտքերու թաթերուն վրայ կենալով եւ արձանը տեսնելով՝ հիացած հաստատեց Իշխանը:



Չոհաբերուող ոչխարներուն արեան շիթերը հոսելով կու գային ու կը լեցունէին անոնց ոտքերուն տակ:

-Աստուած իմ, այս ի՞նչ կ'ընեն,- գայրացած մէկ կողմ քաշուեցաւ Աննան:

-Մէկ վայրկեան, ինչո՞ւ հրամանատարը այսքան գայրացած է,- մտախոհ հարցուց Մայքը:

Տղամարդը, որ չէր ուզեր մասնակցիլ զոհաբերութեան, հպարտ կեցուածքով կեցած էր հրաման տուողին առջեւ:

-Ես չեմ մասնակցիր այս զոհաբերութեան արարողութեան,- պռնաց տղամարդը:

-Ո՞վ է այս,- իր օգնականներուն հարցուց հրաման տուողը՝ նայելով հրամանը չկատարող տղամարդուն:

-Արքայ, ան... ան ձեր հայրը սպանած՝ Անակ իշխանի որդին է,- արքային զեկուցեց օգնականներէն մէկը:

-Ի՞նչ, դուն Անակի որդի՞ն ես եւ քաջութիւն ունիս ոչ միայն զօրքիս մէջ ըլլալու, այլեւ հակառակելո՞ւ ինծի,- կատաղութենէն բարձրաձայն պոռաց արքան:

Ընկերները վախէն կծկուեցան:

-Անակ իշխանը ո՞վ է,- շուկով հարցուց Մերին:

-Չեմ գիտեր,- շփոթած պատասխանեց Ժագը,- Իշխանին հարցուր, բայց յետոյ. հիմա մեր այստեղ մնալը կրնայ վտանգաւոր ըլլալ:

-Սուռու՛ս, սպասեցէք լսենք,- մատը շրթունքին դնելով՝ սաստեց Իշխանը:

Արքան վիրաւոր առիւծի հայեացքով նայեցաւ իր առջեւ կեցած մարդուն եւ հրամայեց.

-Անմիջապէս ասոր տարէ՛ք ու նետեցէ՛ք Արտաշատի ստորգետնեայ բանտը:

-Ան այնտեղ կը մահանայ, արքայ,- դիմեց արքային օգնականներէն մէկը՝ փորձելով մեղմել վերջինիս զայրոյթը:

-Անոր համար ալ տարէք այնտեղ նետեցէք... շո՛ւտ,- զայրացած գոչեց արքան:

Արքայի հրամանը լսելուն պէս՝ քանի մը զինուած մարդ յարձակեցան անհնազանդ տղամարդուն վրայ, կապկպեցին զինք ու քաշելով տարին:

-Ի՞նչ ընենք հիմա, երթանք այդ մարդուն ետեւէ՞ն, թե՛ արքային հետ շարունակենք մեր ճամբան,- տարակուսած հարցուց Մերին ընկերներուն:

-Կարծեմ՝ մենք պետք է երթանք այդ մարդուն ետեւէն եւ հասկնանք, թէ ով է ան եւ ինչու միայնակ դեմ եղաւ արքայի հրամանին,- առաջարկեց Մայքը:

-Ուրեմն արագ շարժեցէ՛ք, վազեցէ՛ք. Չինք կը նետեն սայլակին մէջ եւ հիմա ճամբայ պիտի ելլեն,- ըսաւ Անան՝ բոլորէն առաջ վազելով:

Ընկերները ճեղքելով զինուորներու հոծ շղթան՝ բաւական դժուարութեամբ՝ գրեթէ վերջին վայրկեանին հասան հեռացող սայլակին, որ կը տանէր այդ յանդուգն տղամարդը:

Ձիերը ուժասպառ հասան սարի գագաթին ու կանգ առին:

Գիշեր էր: Ընկերները արագ ու աննկատ դուրս թռան սայլակեն եւ պահուղտեցան:

Ապա, երկու զինեալ քանդեցին սայլակին մէջ գտնուող տղամարդու ձեռքի շղթաները ու զինք նետեցին խորունկ փոսի մը մէջ:

-Օձերու եւ թունաւոր միջատներու բաժին կը դառնայ,- մարդը փոսը նետելէն ետք ինքնագոհ ինդացին անոնք ու արագ հեռացան այդ վայրէն:

-Աստուած իմ, եկէք այս մարդը հանենք փոսէն: Չեմ հասկնար՝ ո՞վ էր այն թագաւորը, ինչո՞ւ այսպիսի բան ըրաւ,- ըսաւ Աննան:

Յանկարծ, այդ պահուն, ժագին հեռաձայնին հաղորդագրութիւն եկաւ եւ վերջինս սկսաւ բարձրաձայն կարդալ. «Մովսէս Խորենացին զինք բնորոշած է որպէս Յայոց վերջին հզօր թագաւոր»:

-Վերջին, հզօր,- մտքերու մէջ ինկած կրկնեց Մերին ու յիշողութիւնը լարելով՝ ըսաւ,- Տրդատ Մեծն էր՝ Տրդատ Արշակունիին...

-Հիմա արդէն ամէն ինչ պարզ է. այսպէս, բլուրի կողքը Արաքսն է, դիմացը՝ Արարատը, ինքն ալ՝ բլուրի վրայ: Ժողովուրդ, մենք Խոր Վիրապի մէջ ենք,- յուզուած գոչեց ժագը:

-Ինչպէ՛ս չէինք հասկցած. քիչ առաջ մեր աչքին առջեւ փոսը նետեցին մեր Գրիգոր Լուսաւորիչը՝ առաջին քրիստոնեայ հայը,- ըսաւ Աննան արցունքոտ աչքերով:

-Եկէ՛ք արագ երթանք թագաւորին քով, ինդրենք, աղաչենք, որ ազատ արձակէ Գրիգոր Լուսաւորիչը. չէ՞ որ մենք ապագայէն եկած ենք. կը բացատրենք անոր ամէն ինչ եւ ան հաստատ կը հասկնայ մեզ,- առաջարկեց Մերին:

-Ցաւօք սրտի որեւէ ձեւով չենք կրնար օգնել Լուսաւորիչին, Մերի՛, որովհետեւ ան տասնըներեք տարի պետք է ճգնի այստեղ,- խորհրդաւոր ձայնով ըսաւ Իշխանը:

Ընկերները տխուր ու յուսահատ նայեցան իրարու:

Մի քանի վայրկեան անց՝ Իշխանը գրպանէն հանեց նախորդ ճամբորդութենէն մնացած մետաղադրամը՝ ժամանակի մէջ տեղափոխող աստղով:

-Այդ մետաղադրամը քո՛վդ մնացեր է,- զարմացած հարցուցին ընկերները:

-Փաստորեն՝ այո: Եկեք աստղը անգամ մը առջեւ դարձնենք, որովհետեւ մենք չենք կրնար ետ տալ պատմութեան անիւղ ու տասնըրեք տարուան բանտարկութենէն ազատել Լուսաւորիչը,- դիմեց ընկերներուն Իշխանը եւ մատը դրաւ աստղին վրայ:

-Ո՛չ, մի՛ ըներ, Իշխան, մենք պետք է գոնէ փորձենք,- ճչաց Աննան:

Բայց արդէն ուշ էր. Իշխանը հասցուց պտտցնել աստղը, որմէ ետք ուժգին փոթորիկ բարձրացաւ եւ ընկերները փոթորիկի խելայեղ պտոյտին մէջ անյայտացանացան աստղազարդ գիշերային երկնքի մէջ:

* * *

Ամայի տարածք. կը լսուին խուլ հառաչանքներ, տնքոցներ, լացի ձայներ, կանացի ճիչեր:

Ընկերները քարացած կանգ առին մօտակայ բլուրին վրայ եւ զարմացած վար նայեցան:

-Ի՞նչ կը կատարուի այստեղ,- վախցած հարցուց Մայքը,- ինչո՞ւ այս կանանց կը քարկոծեն:

-Քացի՛նք, տղա՛ք,- դիմեց Ժագը Մայքին ու Իշխանին,- աղջիկներ, դուք մնացեք այստեղ, իսկ մենք տղաներով կ'իջնենք ու կը փրկենք զիրենք:

-Արդէն ո՛ւշ է, Ժա՛գ, անոնք մահացած են,- յուսահատ գոչեց Մերին:

Աննան բարձրաձայն լացաւ, որմէ ետք Մերին պինդ գրկեց զինք ու անոր հետ միասին սկսաւ դողալ:

-Չեմ հասկնար՝ ի՞նչ կը կատարուի. ասիկա Տրդատ Մեծի հրամանն է, ովքե՛ր են այս աղջիկները, ինչո՞ւ զիրենք քարկոծելով կը սպաննեն,- հեկեկալով հարցուց Մերին:

Տղաները քամիի արագութեամբ բլուրէն արագ վազեցին վար: Քարկոծողները իրենց գործը ըրած եւ հեռացած էին:

Տղաները, ոճրագործութեան վայրը հասնելուն պէս, սարսափէն քար կտրեցին՝ գեղեցիկ, երիտասարդ աղջիկներ արիւնաքամ դարձած էին:

-Մենք հիմա ձեզի կ'օգնենք... ջո՛ւր, մէկն ու մէկդ ջո՛ւր բերէք,- տեսարանէն խիստ շփոթած՝ պոռաց

Իշխանը եւ դիմեց արիւնաքամ գետին ինկած աղջիկներէն մէկուն,- ո՞վ էք դուք, բա՛ն մը ըսէք, մի՛ գոցէք ձեր աչքերը:

-Ես Յոնիփսիմէն եմ: Յիսուսը ձեզ պահապան, շնորհակալ եմ...,- շշնջաց վիրաւոր աղջիկը եւ փակեց աչքերը:

-Յոնիփսիմէ՛ն,- խորհրդաւոր ձայնով ըսաւ Իշխանը ու խենթացած նայելով շուրջը՝ գոչեց,- Յոնիփսիմէ՛ն է, միւսը՝ երեւի Շողակա՛րթը, ան ալ՝ Գայեանէ՛ն, կողքինը՝ Նունէ՛ն: Ասոնք այն քառասուն կոյսերն են, ովքեր...- յուզումէն խզուած ձայնով ըսաւ Իշխանը ընկերներուն եւ չկրցաւ խօսքը շարունակել:

-Ովքեր Մեծ Հայքի մէջ նպաստած էին քրիստոնէութեան տարածմա՛ն,- տխուր ձայնով Իշխանի կիսատ մնացած խօսքը շարունակեց ժազը:

-Ցաւօ՛ք մենք ուշացանք ու չկրցանք փրկել զիրենք,- ըսաւ յուսահատած Մայքը: Մերին ու Աննան, որոնք դեռ բլուրին վրայ էին, լալով կանչեցին տղաները:

-Տղա՛ք, եկէք բարձրանանք աղջիկներուն քով, անոնք շատ վախցած են,- ըսաւ Մայքը: Տղաները բարձրացան բլուրը եւ տխուր նստան փոքրիկ խարոյկին շուրջը:

-Եւ ասիկա սե՛ր կը կոչուի, թե՛ արքաներու սերը ուրիշ է,- վրդոված պոռթկաց Իշխանը,- Տրդատ թագաւորը ուզած է ամուսնանալ կոյս Յոնիփսիմէի հետ եւ մերժում ստանալով....

-Հրամայած է քարկոծե՛լ աղջիկները,- չարացած հարցուց Մերին՝ անելցնելով,-ինչպիսի՛ ստորութիւն:

-Ես կ'ուզեմ տեսնել զինք ու մի քանի խօսք ըսել անոր երեսին, եւ դուք չէ՛ք կրնար խանգարել զիս,- բարկացած ըսաւ Աննան՝ կտրուկ բարձրանալով նստած տեղէն:

* * *

Թագաւորական արքունիքին մէջ խառնաշփոթ կը տիրեր: Ներսէն կը լսուէին այնպիսի ձայներ, կարծես վանդակի մէջ փակուած գազան մռնչար, իսկ բակին մէջ պալատականները իրենք զիրենք կորսնցուցած՝ այս ու այն կողմ կը վազէին: Ընկերները դանդաղ յառաջացան եւ արագ տեղ մը պահուըտեցան:

-Ի՞նչ կը կատարուի այստեղ,- զարմացած հարցուց Մերին:

-Ես հիմա մէկն ու մէկուն կը հարցնեմ,- ըսաւ Իշխանը, եւ երբ կ'ուզէր թաքստոցէն ելլել, բակին մէջ յայտնուեցաւ Տրդատ թագաւորը, որ ինքզինք խենթի պէս կը պահէր:

-Թագաւորը դիւահարա՛ծ է,- զարմացած շշնջաց Աննան:

-Տեսէ՞ք, թագաւորը յարձակած է պալատականներուն վրայ. ի՞նչ ընենք, մօտենա՞նք, օգնե՞նք,- լարուած ընկերներուն դիմեց Մայքը:

Նոյն պահուն ընդհանուր թոհուբոհի մէջ լսուեցաւ երիտասարդ կնոջ մը ճիչը.

-Ես գիտե՛մ, թէ ո՛վ կրնայ փրկել եղբօրս: Երազ տեսած եմ, որ զինք կրնայ բուժել միայն խոր վիրապին մէջ գտնուող Գրիգորը:

-Ո՞վ է այս կինը,- հարցուց Մայքը Իշխանին:

-Խոսրովադուխտն է՝ Տրդատի քոյրը,- պատասխանեց Իշխանը:

-Փաստօրէն Տրդատ թագաւորը հիմա կը պատժուի Յռոմի կայսրի ձեռքէն փախած երեսուներեք հռիփսիմեանց կոյսերու սպաննութեան պատճառով, եւ պատիժը տեղին է,- եզրակացուց Աննան:

-Կարծես անոնք կ'ուզեն խոր վիրապ երթալ, հաւանաբար Գրիգոր Լուսաւորիչի հետքերով,- ենթադրեց Ժագը:

-Այո՛, զինք պիտի բերեն այստեղ՝ Վաղարշապատ: Այստեղ, ան հողին պիտի յանձնէ նահատակ կոյսերու աճիւնները, ապա քանի մը օր պահք պիտի սահմանէ եւ աղօթքով բուժէ արքան,- լրացուց Մերին,- այդպէս է պատմութիւնը:

Յանկարծ ձիերու սմբակներու հզօր դոփիւնը լսուեցաւ: Ընկերները վախցած անցան ախոռին ետնամասը:

-Իշխա՛ն, կարծեմ աստղը պտտցնելու ժամանակն է,- ըսաւ Աննան՝ շարունակելով,- մեզի քիչ ժամանակ մնացած է, իսկ մենք դեռ չենք հասկցած, թէ ինչ է այստեղ մեր ընելիքը:

-Մենք կը գտնուինք մեր ազգի պատմութեան ամենապատասխանատու ժամանակաշրջանին մէջ. շուտով քրիստոնէութիւնը պիտի հռչակուի որպէս պետական կրօն,- խորհրդաւոր ձայնով ըսաւ Իշխանը եւ պտտցուց աստղը:

* * *

Մուրճերու ձայներ, աշխատող մարդոց հեւոցներ, տարատեսակ ձիեր, ճռռացող սայլեր...

Ժագը կ'օգներ ընկերներուն, որոնք քարքարոտ ճամբայով դանդաղ կը յառաջանային:

-Այստեղ ի՞նչ կը կառուցուի, մենք ո՞ւր ենք,- հարցուց Մերին՝ նայելով շուրջը:

-Չեմ գիտեր, բայց սաստիկ տաք է, աղմուկ ու փոշի. Լաւ չեմ, թոյլ եմ,- ըսաւ Աննան եւ նստեցաւ փոքրիկ կոճղի մը վրայ:

Տղաները փորձեցին մօտենալ Աննային, բայց վերջինս ձեռքով նշան ըրաւ, որ չմօտենան:

Ու գրեթէ նոյն պահուն, շատ անսովոր բան մը եղաւ. յանկարծ ժամանակը կանգ առաւ: Ամէն մարդ, ով որ այդ պահուն կը զբաղէր որեւէ գործով, քարացաւ այդ վիճակին մէջ:

Ընկերները վախցած ու սարսափահար ճչացին, ապա, մօտեցան բանուորներուն, բայց անոնց մէջ շունչ չկար. Բոլորը կարծես քարէ յուշարձան ըլլային:

Աննան սկսաւ բարձրաձայն հեկեկալ ու ըսել.

-Մենք ընդամենը երեսուն վայրկեան ժամանակ ունինք, իսկ այս մարդիկ քարացած են: Վե՛րջացաւ, մենք պիտի մնանք այստեղ, մե՛նք ալ պիտի քարանանք. ես կը վախնամ, ես չեմ ուզեր մեռնիլ:

-Չանդարտի՛ր, Աննա՛, ամէն ինչ լաւ պիտի ըլլայ,- մեղմօրէն յուսադրեց ժագը՝ դառնալով ընկերներուն,- հիմա եկէք հասկնանք, թէ ասիկա ինչ կրնայ նշանակել: Մարդիկ ե՛րբ կը քարանան:

-Երբ կը վախնան,- մէկ անգամէն պատասխանեց Մերին՝ լրացնելով խօսքը,- «վախէն քարանալ» արտայայտութիւն կայ:

-Ուրի՛շ, ուրի՛շ,- արագ պահանջեց ժագը:

-Երբ կը սպասեն,- ակնուց Մայքը:

-Կը սպասեն, այո՛, կարծեմ ճիշդ ատիկա է: Անոնք կը սպասեն շատ կարելոր բանի մը եւ անիկա պէտք է մենք հասկնանք,- ըսաւ Իշխանը:

Յանկարծ, այդ պահուն, օդին մէջ յայտնուեցաւ առիծի կերպարանքով չտեսնուած, չլսուած թռչուն մը:

Ընկերները վախէն կծկուեցան: Թեւաւոր առիծը՝ թելերը թափահարելով՝ եկաւ ու նստեցաւ անոնցմէ քիչ մը հեռու եւ կատաղի մռնչոցով նայեցաւ ընկերներուն կողմը: Առիծի երախէն կրակ ու բոց կ'ելլէր:

-Ասիկա ի՞նչ է,- առիծին կողմը նայելով՝ հարցուց Աննան:

-Առիծ, որ եկած է մեր քովը...,- փորձեց բացատրել Մերին:

-Ես այս առիծին քանդակը տեղ մը տեսած եմ: Սպասեցէք յիշեմ: Այո՛, Վենետիկի Սան Մարքօ հրապարակի սիւնին կեցած առիծին կը նմանի, բայց անիկա ի՞նչ կապ ունի մեզի հետ, ըսաւ Մայքը:

-Եկէ՛ք հեծնիւք ու տեսնենք, թէ ո՞ւր կը տանի մեզ,- առաջարկեց Ժագը: Չի՛ ձգեր հեծնելք, մինչեւ չհասկնանք, թէ ինք ինչ կապ կրնայ ունենալ հայոց պատմութեան հետ,- ակնուց Մերին,- իսկ Վենետիկի մէջ այս կենդանիին հետ կապուած ի՞նչ յայտնի ծիսակատարութիւններ կան:

-Գոյութիւն ունի աշխարհահռչակ վենետիկեան դիմակահանդեսը, որուն բացումը կը կատարուի դուքսի նաւով ծով ելլելով, եւ կարծեմ, ան այդ ժամանակ մատանի կը նետէ ծովը, բայց չեմ գիտեր, թէ՛ ինչու,- ընկերներուն ըսաւ Աննան:

-Ես գիտե՛մ,- կտրուկ պատասխանեց Իշխանը,- հայոց վերջին թագաւորութեան՝ Կիլիկիոյ արքայական խորհրդանիշները պահուած էին Վենետիկի մէջ: Հաւանաբար այդ առիծը, որ կը խորհրդանշէ Վենետիկը, իրականութեան մէջ Կիլիկիոյ թագաւորութեան առիծն է:

-Կեցցե՛ս: Իսկ ես անընդհատ կ'ուզէի հասկնալ, թէ ինչու դուքսը մատանի կը նետէ ծովուն մէջ: Հիմա ամէն ինչ պարզ է:

-Եւ ինչո՞ւ, ես չհասկցայ,- Մայքին հարցուց Աննան՝ սրբելով արցունքները:

-Իբրեւ հայոց թագի եւ խորհրդանիշներու հետ փոխանակման պատասխան նուէրը ծովուն, քանի որ Կիլիկիան այլեւս չկայ,- բացատրեց Մայքը:

Այդ խօսքերուն ընթացքին թեւաւոր առիծը յանկարծ դադրեցուց մռնչալ եւ խոնարհաբար իջեցուց գլուխը: Ընկերները արագ ցատկեցին առիծի մէջքին եւ ան, լայն բանալով թեւերը, սկսաւ բարձրանալ:

Որքան առիծը կը բարձրանար, այնքան օդը կը ցրտէր. Ընկերները սկսան դողալ:

Այլեւս չդիմանալով՝ պաղ օդին, ժագը պոռաց.

-Ո՛ւր կը տանի մեզի այս բրդոտը, մէկը կ'ըսէ՞, թէ ուր ենք:

Իշխանը նայեցաւ ձեռքին կապած գործիքին եւ ինք ալ պոռալով պատասխանեց.

-Մենք կը գտնուինք իննգ հազար հարիւր վաթսուհինգ մեթր բարձրութեան վրայ: Հիմա կը հասկնամք, թէ ուր ենք:

Յանկարծ Մերին հիացած ճչաց.

-Ես կը նշմարեմ Նոյեան տապանի ուրուագիծե՛րը: Աստուա՛ծ իմ, մենք մեր սուրբ լեռան շուրջ կը դառնանք: Ասիկա Արարա՛տն է՝ Արարատը՛....

Ընկերները, տեսնելով սրբազան լեռը, բացականչեցին

-Ուռաաա՛յ, ուռաաա՛յ, մեր Արարատը՛...

Քիչ ետք, թռչող առիծը յանկարծ օդին մէջ կանգ առաւ, ապա սկսաւ դանդաղ իջնել:

-Բռնուեցէէ՛ք, մենք վայրէջք կը կատարենք,- կարգադրեց Մայքը:

Ընկերները ամուր բռնեցին զիրար եւ քիչ անց արդէն կը գլորուէին Արարատի լանջերէն: Ճչոցով, աղմուկ-աղաղակով անոնք որոշ ժամանակ գլորուեցան ու յանկարծ կանգ առին փոքրիկ աղբիւրի մը քով:

-Ջուռւ՛ր,- տեսնելով աղբիւրը՝ գոչեցին աղջիկներն ու արագ նետուեցան ջուր խմելու:

-Այս աղբիւրը մեզի ուժ կու տայ ու կ'օգնէ յաղթահարելու հերթական փորձութիւնը,- ժպտալով ըսաւ ժագը ու հարցուց միւսներուն,- իսկ գիտե՞ք ասիկա ինչ աղբիւր է:

Բոլորը հարցական հայեացքով նայեցան ժագին:

-Վաասայ, ես ինչքան բան գիտեմ, Աստուած իմ, ուղղակի տեղս չեն գիտեր,- իրեն յատուկ ոճով կատակեց ժագը ու մէկ անգամէն լրջանալով՝ շարունակեց,- Նոյեան Տապանը յայտնաբերելու համար՝ առաջին անգամ Արարատի գագաթ փորձած է բարձրանալ Յակոբ Մծբնեցի ճգնաւորը: Սակայն, ճամբու կիսուն յոգներ ու քնացեր է այստեղ: Եւ անոր քնացած տեղն ալ աղբիւր յառաջացած է, իսկ գիշերը, Աստուծոյ հրեշտակը ճգնաւոր Յակոբին Նոյեան տապանէն խաչածել փայտ մը ուղարկեր է: Հապար, սորվեցէ՛ք, սորվեցէ՛ք:

Աննան կռացաւ աղբիւրին վրայ, կուշտ մը ջուր խմեց, յետոյ գլուխը բարձրացուց ու ըսաւ.



-Երբեք այսքան զօրութիւն չեմ զգացած. սուրբ ջուր է, խմեցէ՛ք:

Ընկերները հերթով սկսան ջուրէն խմել ու գոհունակութիւն յայտնել: Շատ չանցած քիչ մը հեռուէն՝ խոլ տեղէ մը, տնքոց ու հեւոց լսուեցաւ: Ընկերները լարեցին իրենց լսողութիւնը:

-Ո՛վ կայ այստեղ,- հարցուց Ժագը՝ զննելով շուրջը,- ուրկէ՞ կու գայ այս ձայնը:

-Եկէք յառաջանանք,- առաջարկեց Մայքը:

Ընկերները ընդունեցին Մայքի առաջարկն ու իրարու ետեւէն, զգուշութեամբ յառաջացան, յետոյ՝ յանկարծակիի եկած կանգ առին: Անոնք ականատես եղան բաւական տարօրինակ տեսարանի մը. մեծ, վիթխարի քարերու մէջտեցը մէկը մնացած էր: Վերջինս կը փորձեր ազատիլ, բայց ուժը չէր ներեր: Տղաները անմիջապէս գործի անցան ու սկսան մէկ կողմ գլորել հսկայական քարերը:

-Ո՛վ է այս մարդը, ինչո՞ւ յայտնուած է Մասիսի լանջին,- կարծես ինքնիրեն հարցուց Աննան:

-Հաւանաբար յատուկ առաքելութեամբ մը եկած է այստեղ, բայց հսկայ քարաբեկորները վերէն թափած ու քարէ պարիսպի մէջ ձգած զինք,- ենթադրեց Մերին:

-Տղանէ՛ր, չեմ հասկնար, դուք որքան կը հեռացնէք քարերը, միեւնոյնն է, քարերը չեն քիչնար: Հիմա այս մարդը պիտի մեռնի, իսկ մենք ալ պիտի մնանք այստեղ,-տազնապած ըսաւ Աննան:

-Սպասեցէ՛ք, սպասեցէ՛ք,- յորդորեց Իշխանը,- պէտք է հասկնանք, թէ ով է ան եւ ինչո՞ւ կը գտնուի այստեղ:

Այդ պահուն յանկարծ քարերու արանքէն երեւցաւ Հին կտակարանը:

-Կտակարան: Մի՞թէ այս մարդը Գրիգոր Լուսաւորիչն է,- յուզուած ըսաւ Իշխանը՝ փորձելով տեսնել պայքարող մարդուն դէմքը:

-Ո՛չ, կարծեմ Տրդատ թագաւորն է, եւ քանի որ իր ոտքով եկած, հասած է սուրբ Մասիսի քով, ուրեմն եկած է իր մեղքերը քաւելու,- եզրակացուց Աննան:

-Ճի՛շդ է, համաձայն եմ Աննա: Բայց մէկ վայրկեան, կարծես վարը շինարարութիւն կ'ընէին: Ի՞նչ կրնային կառուցել Տրդատն ու Գրիգոր Լուսաւորիչը,- մտախոհ հարցուց Մայքը:

-Բնականաբար, եկեղեցի. դժուար չէ կռահել,- ըսաւ Մերին՝ լրացնելով,- չէ՞ որ Աստուած Գրիգոր Լուսաւորիչի երազին ցոյց տուած էր եկեղեցւոյ կառուցման տեղը եւ ասիկա....

-Էջմիածի՛նն է,- ըսին բոլորը միասին

-Յաւանաբար Տրդատ թագաւորը բարձրացած է Մասիսի լանջին, որպէսզի «մեղքերը քաւող» շինարարական քարեր իջեցնէ լեռէն ու դնէ կառուցուող եկեղեցւոյ պատերուն մէջ,- եզրայանգեց Իշխանը:

-Արա՛գ, եկէք արքան հանե՛նք քարերու արանքէն,- հրամայեց Մայքը:

Ընկերները միահամուռ ուժերով սկսան հանել ու մէկ կողմ նետել քարերը:

-Ես երթամ այն աղբիւրէն ջուր բերեմ,- ըսաւ Մերին ու վազեց դէպի աղբիւրը:

Քիչ ետք քարակոյտը տեղի տուաւ եւ անմիջապէս երեւաց վիրաւոր արքան՝ ամբողջ մարմինը արեամբ պատուած:

-Ո՞վ էք,- խուլ տնքոցով ընկերներուն դիմեց արքան:

-Մենք... մենք քրիստոնեայ հայեր ենք ու շնորհակալ ենք Ձեզի Ձեր կայացուցած որոշումին համար,- հպարտ ըսաւ Մայքը:

Տրդատ զարմացած հազիւ շշնչաց.

-Քրիստոնեա՛յ, բայց ես դեռ...

-Գիտենք... Դուք շատ շուտով պիտի ընէք ասիկա,- շատ վստահ ըսաւ Աննան՝ ընդհատելով արքայի խօսքը:

Այդ պահուն՝ վազելով անոնց մօտեցաւ Մերին, որ իր փոքրիկ բուռին մէջ եղած ջուրը պարզելով արքային՝ ըսաւ.

-Խմեցէ՛ք, ասիկա սուրբ ջուր է, կը բուժէ Ձեր բոլոր վերքերը:

Տրդատ թագաւոր աղջկայ բուռէն խմեց սուրբ ջուրը՝ երանութեամբ գոցելով աչքերը:

Մայքը անհանգիստ նայեցաւ ժամացոյցին ու հայեացքով հասկցուց ընկերներուն՝ բռնել իրարու ձեռքերը: Մի քանի վայրկեան անց Տրդատը բացաւ փակ աչքերը, մեղմ ժպտաց եւ նոյն պահուն ալ ժպիտը փոխակերպուեցաւ զարմանքի. զինք փրկած ընկերները անհետացան:

* * *

-Ի՞նչ կը կատարուի այստեղ,- զարմացած հարցուց Մերին:

-Ես հիմա մեկուն կը հարցնեմ,- ըսաւ Իշխանը, եւ երբ կ'ուզեր թաքստոցէն ելլել, բակին մէջ յայտնուեցաւ Տրդատ թագաւորը՝ բաւական տարօրինակ վարքագիծով. ան ինքզինք խենթի պէս կը պահէր:

-Թագաւորը դիւահարա՛ծ է,- զարմացած շնչաց Աննան:

-Տեսէ՞ք, թագաւորը յարձակած է պալատականներուն վրայ. ի՞նչ ընենք, մօտենա՞նք, օգնե՞նք,- լարուած ընկերներուն դիմեց Մայքը:

Նոյն պահուն ընդհանուր թոհուբոհի մէջ լսուեցաւ երիտասարդ կնոջ մը ճիչը.

-Ես գիտե՛մ, թէ ո՛վ կրնայ փրկել եղբօրս: Երազ տեսած եմ, որ զինք կրնայ բուժել միայն խոր վիրապին մէջ գտնուող Գրիգորը:

-Ո՞վ է այս կինը,- հարցուց Մայքը Իշխանին:

-Խոսրովադուխտն է՝ Տրդատի քոյրը,- պատասխանեց Իշխանը:

-Փաստօրէն Տրդատ թագաւորը հիմա կը պատժուի Յռոմի կայսրի ձեռքէն փախած երեսուներեք հռիփսիմեանց կոյսերու սպաննութեան պատճառով, եւ պատիժը տեղին է,- եզրակացուց Աննան:

-Կարծես անոնք կ'ուզեն խոր վիրապ երթալ, հաւանաբար Գրիգոր Լուսաւորիչի հետքերով,- ենթադրեց ժազը:

-Այո՛, զինք պիտի բերեն այստեղ՝ Վաղարշապատ: Այստեղ, ան հողին պիտի յանձնէ նահատակ կոյսերու աճիւնները, ապա քանի մը օր պահք պիտի սահմանէ եւ աղօթքով բուժէ արքան,- լրացուց Մերին,- այդպէս է պատմութիւնը:

Յանկարծ ձիերու սմբակներու հզօր դոփիւնը լսուեցաւ: Ընկերները վախցած անցան ախոռին ետնամասը:

-Իշխան, կարծեմ աստղը պտտցնելու ժամանակն է,- ըսաւ Աննան՝ շարունակելով,- մեզի քիչ ժամանակ մնացած է, իսկ մենք դեռ չենք հասկցած, թէ ինչ է այստեղ մեր ընելիքը:

-Մենք կը գտնուինք մեր ազգի պատմութեան ամենապատասխանատու ժամանակաշրջանին մէջ. շուտով քրիստոնեութիւնը պիտի հռչակուի որպէս պետական կրօն,- խորհրդաւոր ձայնով ըսաւ Իշխանը եւ պտտցուց աստղը:

* * *

Մուրճերու ձայներ, աշխատող մարդոց հեւոցներ, տարատեսակ ձիեր, ճռռացող սայլեր...

Ժագը կ'օգներ ընկերներուն, որոնք քարքարոտ ճամբայով դանդաղ կը յառաջանային:

-Այստեղ ի՞նչ կը կառուցուի, մենք ո՞ւր ենք,- հարցուց Մերին՝ նայելով շուրջը:

-Չեմ գիտեր, բայց սաստիկ տաք է, աղմուկ ու փոշի. Լաւ չեմ, թոյլ եմ,- ըսաւ Աննան եւ նստեցաւ փոքրիկ կոճղի մը վրայ:

Տղաները փորձեցին մօտենալ Աննային, բայց վերջինս ձեռքով նշան ըրաւ, որ չմօտենան:

Ու գրեթէ նոյն պահուն, շատ անսովոր բան մը եղաւ. յանկարծ ժամանակը կանգ առաւ: Ամէն մարդ, ով որ այդ պահուն կը զբաղէր որեւէ գործով, քարացաւ այդ վիճակին մէջ:

Ընկերները վախցած ու սարսափահար ճչացին, ապա՝ վազելով, սայթաքելով, ինալով՝ կարգով մօտեցան բանուորերուն, սակայն անոնց մէջ շունչ չկար. Բոլորը կարծես քարէ յուշարձան ըլլային:

Աննան սկսաւ բարձրաձայն հեկեկալ ու ըսել.

-Մենք ընդամենը երեսուն վայրկեան ժամանակ ունինք, իսկ այս մարդիկ քարացած են: Վերջացաւ, մենք պիտի մնանք այստեղ, մէ՛նք ալ պիտի քարանանք. ես կը վախնամ, ես չեմ ուզեր մեռնիլ:

-Յանդարտի՛ր, Աննա՛, ամեն ինչ լաւ պիտի ըլլայ,- մեղմօրէն յուսադրեց ժազը՝ դառնալով ընկերներուն,- հիմա եկեք հասկնանք, թէ ասիկա ինչ կրնայ նշանակել: Մարդիկ ե՛րբ կը քարանան: -Երբ կը վախնան,- մէկ անգամէն պատասխանեց Մերին՝ լրացնելով խօսքը,- «վախէն քարանալ» արտայայտութիւն կայ:

-Ուրի՛շ, ուրի՛շ,- արագ պահանջեց ժազը:

-Երբ կը սպասեն,- ակնցուց Մայքը:

-Կը սպասեն, այո՛, կարծեմ ճիշդ ատիկա է: Անոնք կը սպասեն շատ կարելոր բանի մը եւ անիկա պետք է մենք հասկնանք,- ըսաւ Իշխանը:

Յանկարծ, այդ պահուն, օդին մէջ յայտնուեցաւ առիծի կերպարանքով չտեսնուած, չլսուած թռչուն մը:

Ընկերները վախէն կծկուեցան: Թեւաւոր առիծը՝ թելերը թափահարելով՝ եկաւ ու նստեցաւ անոնցմէ քիչ մը հեռու եւ կատաղի մռնչոցով նայեցաւ ընկերներուն կողմը: Առիծի երախէն կրակ ու բոց կ'ելլէր:

-Ասիկա ի՞նչ է,- առիծին կողմը նայելով՝ հարցուց Աննան:

-Առիծ, որ եկած է մեր քովը...,- փորձեց բացատրել Մերին:

Մայքը ընդհատեց Մերիին.

-Ես այս առիծին քանդակը տեղ մը տեսած եմ: Սպասեցէք յիշեմ: Այո՛, Վենետիկի Սան Մարքօ հրապարակի սիւնին կեցած առիծին կը նմանի, բայց անիկա ի՞նչ կապ ունի մեզի հետ:

-Եկէ՛ք հեծնինք ու տեսնենք, թէ ո՞ւր կը տանի մեզ,- առաջարկեց ժազը: Չի՛ ձգեր հեծնենք, մինչեւ չհասկնանք, թէ ինք ինչ կապ կրնայ ունենալ հայոց պատմութեան հետ,- ակնցուց Մերին,- իսկ Վենետիկի մէջ այս կենդանիին հետ կապուած ի՞նչ յայտնի ծիսակատարութիւններ կան:

-Գոյութիւն ունի աշխարհահռչակ վենետիկեան դիմակահանդեսը, որուն բացումը կը կատարուի դուքսի նաւով ծով ելլելով, եւ կարծեմ, ան այդ ժամանակ մատանի կը նետէ ծովը, բայց չեմ գիտեր, թէ՛ ինչու,- ընկերներուն ըսաւ Աննան:

-Ես գիտեմ,- կտրուկ պատասխանեց Իշխանը,- հայոց վերջին թագաւորութեան՝ Կիլիկիոյ արքայական խորհրդանիշները պահուած էին Վենետիկի մէջ: Հաւանաբար այդ առիւծը, որ կը խորհրդանշէ Վենետիկը, իրականութեան մէջ Կիլիկիոյ թագաւորութեան առիւծն է:

-Կեցցե՛ս: Իսկ ես անընդհատ կ'ուզէի հասկնալ, թէ ինչու դուքսը մատանի կը նետէ ծովուն մէջ: Հիմա ամէն ինչ պարզ է:

-Եւ ինչո՞ւ, ես չհասկցայ,- Մայքին հարցուց Աննան՝ սրբելով արցունքները:

-Իբրեւ հայոց թագի եւ խորհրդանիշներու հետ փոխանակման պատասխան նուէրը ծովուն, քանի որ Կիլիկիան այլեւս չկայ,- բացատրեց Մայքը:

Այդ խօսքերուն ընթացքին թեւաւոր առիւծը յանկարծ դադրեցուց մռնչալ եւ խոնարհաբար իջեցուց գլուխը: Ընկերները արագ ցատկեցին առիւծի մէջքին եւ ան, լայն բանալով թեւերը, սկսաւ բարձրանալ:

Որքան առիւծը կը բարձրանար, այնքան օդը կը ցրտեր. Ընկերները սկսան դողալ: Այլեւս չդիմանալով՝ պաղ օդին, ժագը պոռաց.

-Ո՛ւր կը տանի մեզի այս բրդոտը, մէկը կ'ըսէ՞, թէ ուր ենք:

Իշխանը նայեցաւ ձեռքին կապած գործիքին եւ ինք ալ պոռալով պատասխանեց.

-Մենք կը գտնուինք հինգ հազար հարիւր վաթսուհինգ մէթր բարձրութեան վրայ: Հիմա կը հասկնամք, թէ ուր ենք:

Յանկարծ Մերին հիացած ճչաց.

-Ես կը նշմարեմ Նոյեան տապանի ուրուագիծերը: Աստուած իմ, մենք մեր սուրբ լեռան շուրջ կը դառնանք: Ասիկա Արարատն է՝ Արարատը՛....

Ընկերները, տեսնելով սրբազան լեռը, բացականչեցին

-Ուռաաա՛յ, ուռաաա՛յ, մեր Արարատը՛...

Քիչ ետք, թռչող առիւծը յանկարծ օդին մէջ կանգ առաւ, ապա սկսաւ դանդաղ իջնել:

-Բռնուեցէ՛ք, մենք վայրէջք կը կատարենք,- կարգադրեց Մայքը:

Ընկերները ամուր բռնեցին զիրար եւ քիչ անց արդէն կը գլորուէին Արարատի լանջերէն: Ճշոցով, աղմուկ-աղաղակով անոնք որոշ ժամանակ գլորուեցան ու յանկարծ կանգ առին փոքրիկ աղբիւրի մը քով:

-Ձուու՛ր,- տեսնելով աղբիւրը՝ գոչեցին աղջիկներն ու արագ նետուեցան ջուր խմելու:

-Այս աղբիւրը մեզի ուժ կու տայ ու կ'օգնէ յաղթահարելու հերթական փորձութիւնը,- ժպտալով ըսաւ ժագը ու հարցուց միւսներուն,- իսկ գիտե՞ք ասիկա ինչ աղբիւր է:

Բոլորը հարցական հայեացքով նայեցան ժագին:

-Վաաա՛յ, ես ինչքա՛ն բան գիտեմ, Աստուա՛ծ իմ, ուղղակի տեղս չեն գիտեր,- իրեն յատուկ ոճով կատակեց ժագը ու մէկ անգամէն լրջանալով՝ շարունակեց,- Նոյեան Տապանը յայտնաբերելու համար՝ առաջին անգամ Արարատի գագաթ փորձած է բարձրանալ Յակոբ Մծբնեցի ճգնաւորը: Սակայն, ճամբու կիսուն յոգներ ու քնացեր է այստեղ: Եւ անոր քնացած տեղն ալ աղբիւր յառաջացած է, իսկ գիշերը, Աստուծոյ հրեշտակը ճգնաւոր Յակոբին Նոյեան տապանէն խաչածել փայտ մը ուղարկեր է: Հապա՛, սորվեցէ՛ք, սորվեցէ՛ք:

Աննան կռացաւ աղբիւրին վրայ, կուշտ մը ջուր խմեց, յետոյ գլուխը բարձրացուց ու ըսաւ.

-Երբեք այսքան զօրութիւն չեմ զգացած. սուրբ ջուր է, խմեցէ՛ք:

Ընկերները հերթով սկսան ջուրէն խմել ու գոհունակութիւն յայտնել: Շատ չանցած քիչ մը հեռուէն՝ խուլ տեղէ մը, տնքոց ու հեւոց լսուեցաւ: Ընկերները լարեցին իրենց լսողութիւնը:

-Ո՛վ կայ այստեղ,- հարցուց ժագը՝ գննելով շուրջը,- ուրկե՞ կու գայ այս ձայնը:

-Եկէք յառաջանանք,- առաջարկեց Մայքը:

Ընկերները ընդունեցին Մայքի առաջարկն ու իրարու ետեւէն, զգուշութեամբ յառաջացան, յետոյ՝ յանկարծակիի եկած կանգ առին: Անոնք ականատես եղան բաւական տարօրինակ տեսարանի մը. մեծ, վիթխարի քարերու արանքին մէկը փակուած, մնացած էր: Վերջինս կը փորձեր ազատիլ, բայց ուժը չէր ներեր: Տղաները անմիջապէս գործի անցան ու սկսան մէկ կողմ գլորել հսկայական քարերը:



-Ո՞վ է այս մարդը, ինչո՞ւ յայտնուած է Մասիսի լանջին,- կարծես ինքնիրեն հարցուց Աննան:

-Հաւանաբար յատուկ առաքելութեամբ մը եկած է այստեղ, բայց հսկայ քարաբեկորները վերէն թափած ու քարէ պարիսպի մէջ ձգած զինք,- ենթադրեց Մերին:

-Տղանէր, չեմ հասկնար, դուք որքան կը հեռացնէք քարերը, միեւնոյնն է, քարերը չեն քիչնար: Հիմա այս մարդը պիտի մեռնի, իսկ մենք ալ պիտի մանք այստեղ,-տազնապած ըսաւ Աննան:

-Սպասեցէք, սպասեցէք,- յորդորեց Իշխանը,- պետք է հասկնանք, թէ ով է ան եւ ինչո՞ւ կը գտնուի այստեղ:

Այդ պահուն յանկարծ քարերու արանքէն երեւցաւ Հին կտակարանը:

-Կտակարան: Մի՞թէ այս մարդը Գրիգոր Լուսաւորիչն է,- յուզուած արտաբերեց Իշխանը՝ քարերու արանքէն փորձելով տեսնել պայքարող մարդուն դէմքը:

-Ո՛չ, կարծեմ Տրդատ թագաւորն է, եւ քանի որ իր ոտքով եկած, հասած է սուրբ Մասիսի քով, ուրեմն եկած է իր մեղքերը քաւելու,- եզրակացուց Աննան:

-Ճի՛շդ է, համաձայն եմ Աննա: Բայց մեկ վայրկեան, կարծես վարը շինարարութիւն կ'ընէին: Ի՞նչ կրնային կառուցել Տրդատն ու Գրիգոր Լուսաւորիչը,- մտախոհ հարցուց Մայքը:

-Բնականաբար, եկեղեցի. դժուար չէ կռահել,- ըսաւ Մերին՝ լրացնելով,- չէ՛ որ Աստուած Գրիգոր Լուսաւորիչի երազին ցոյց տուած էր եկեղեցւոյ կառուցման տեղը եւ ասիկա....

-Էջմիածի՛նն է,- հիացական գոչեցին բոլորը միասին

-Չաւանաբար Տրդատ թագաւորը բարձրացած է Մասիսի լանջին, որպէսզի «մեղքերը քաւող» շինարարական քարեր իջեցնէ լեռէն ու դնէ կառուցուող եկեղեցւոյ պատերուն մէջ,- եզրայանգեց Իշխանը:

-Արա՛գ, եկէք արքան հանէ՛նք քարերու արանքէն,- հրամայեց Մայքը:

Ընկերները միահամուռ ուժերով սկսան հանել ու մեկ կողմ նետել քարերը:

-Ես երթամ այն աղբիւրէն ջուր բերեմ,- ըսաւ Մերին ու վազեց դէպի աղբիւրը:

Քիչ ետք քարակոյտը տեղի տուաւ եւ անմիջապէս երեւաց վիրաւոր արքան՝ ամբողջ մարմինը արեամբ պատուած:

-Ո՛վ էք,- խուլ տնքոցով ընկերներուն դիմեց արքան:

-Մենք..., մենք քրիստոնէայ հայեր ենք ու շնորհակալ ենք Ձեզի Ձեր կայացուցած որոշումին համար,- հպարտ ըսաւ Մայքը:

Տրդատ զարմացած հագիւ շշնջաց.

-Քրիստոնէա՛յ, բայց ես դեռ...

-Գիտենք... Դուք շատ շուտով պիտի ընէք ասիկա,- շատ վստահ ըսաւ Աննան՝ ընդհատելով արքայի խօսքը:

Այդ պահուն՝ վազելով անոնց մօտեցաւ Մերին, որ իր փոքրիկ բուռին մէջ եղած ջուրը պարզելով արքային՝ ըսաւ.

-Խմեցէ՛ք, ասիկա սուրբ ջուր է, կը բուժէ Ձեր բոլոր վերքերը:

Տրդատ թագաւոր աղջկայ բուռն խմեց սուրբ ջուրը՝ երանութեամբ գոցելով աչքերը:

Մայքը անհանգիստ նայեցաւ ժամացոյցին ու հայեացքով հասկցուց ընկերներուն՝ բռնել իրարու ձեռքերը: Մի քանի վայրկեան անց Տրդատը բացաւ փակ աչքերը, մեղմ ժպտաց եւ նոյն պահուն ալ ժպիտը փոխակերպուեցաւ զարմանքի. զինք փրկած ընկերները անհետացան:

* * *

Ամբողջին մէջ մուտք էր. միայն այստեղ-այնտեղ վառող մոմերը պատերուն վրայ ստուերներ կը նկարէին: Կրակարանին մէջ կը ճթռտար փայտը: Յանկարծ ամբողջ լուսաւորուեցաւ ու ընկերներուն առջեւ յայտնուեցաւ ծանօթ խորհրդաւոր ծերունին:

-Այսօր դուք դարձեալ ականատես եղաք հրաշալի պատմական իրադարձութեան մը: **Չայոց աշխարհը համայն ազգերու մէջ առաջինն է, որ ընդունած է քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն եւ այդ փաստը ընդունած է ողջ աշխարհը: Տեսա՛ք, թէ հեթանոսութիւնը ինչքա՛ն անզիջում պայքար կը մղէր եւ որքա՛ն դժուար էր նոր կրօնը յարմարցնել, ընդունելի դարձնել ժողովուրդին: Բայց Լուսաւորիչի անասելի չարչարանքները, գաղափարներն ու եռանդուն քարոզները ի վերջոյ տեղ հասան: Չայոց Տրդատ թագաւորը եւս հաւատաց քրիստոնէութեան զօրութեան ու պատգամին եւ սկիզբ դրուեցաւ քրիստոնեայ Չայաստանի ժամանակաշրջանին: Իսկ դո՛ւք, մեր ժողովուրդը այս դասերը ուսումնասիրելով՝ պէ՛տք է աւելի ամո՛ւր պահէք ձեր հաւատքը, մեր բազմաչարչար կրօնը, ու որպէս իսկական բարեպաշտ քրիստոնեայ՝ միշտ առաջնորդուիք աստուածաշնչեան վեհ գաղափարներով եւ պատգամներով: Կրօնը ուժ է՝ միաւորման, համախմբման միջոց, եւ զայն պէտք է օգտագործել ճիշդ եւ նպատակայարմար՝ հիմք ունենալով հաւատքի խոր գիտակցութիւնը: Կրօնը մէկտեղուի հայրենիքի, սիրոյ, վեհ եւ առաքինի մարդկային յատկանիշներու ամբողջութեան մէջ. ասիկա զօրեղ զէնք է, լա՛ւ գիտակցեցէք: Չաւատարի՛ մ եղէք Աստուծոյ տասը պատուիրաններուն եւ ապրեցէ՛ք քրիստոնեավայել:**

Ե. Մաս

Առաւօտ կանուխ հշխանը արդէն անհանգիստ կը քալէր ամրոցին մէջ:

-Իշխան, եկուր այսօր մնանք ամրոցին մէջ ու քիչ մը հանգստանանք,- խնդրեց ժագը՝ հշխանի շարժումներու ձայնէն դժգոհութեամբ բանալով աչքերը:

Միւսները հաստատեցին ժագի խնդրանքը:

-Չըլլար,- կտրուկ պատասխանեց հշխանը,- հանգստանա՛նք... մենք կը հանգստանանք այն ժամանակ, երբ բացայայտենք ու ճանչնանք մեր պատմութիւնը եւ մեր առաքելութիւնը յաջողած համարենք:

Բոլորը մէկ մարդու պէս բարձրացան իրենց տեղերէն. ծնողներու կարօտը կը խեղդէր իւրաքանչիւրը: Անոնք հշխանի ետեւէն գացին կախարդական սենեակ, ուր անոնց կը սպասէր ծիրանափողը:

* * *

...Քիչ ետք ընկերները պտոյտներ գործելով յայտնուեցան եկեղեցիի մը բակին մէջ: Եկեղեցիէն ներս գտնուող տղամարդոց ձայներէն պարզ էր, որ անոնք կը խօսէին շատ կարեւոր հարցի մը մասին: Ընկերները լարուած մօտեցան եկեղեցւոյ դրան ու սկսան ականջ դնել խօսակցութեան:

Տղամարդոցմէ մէկը, վստահ, յայտարարեց.

-Կը խնդրեմ, հաւաքենք երանելի միաբաններու խորհուրդ. Ատիկա շատ կարեւոր է: Պատկառելի դէմքով եկեղեցականը դիմեց քովը կեցած մարդուն.

-Արքայ, գիտե՞ք ասորի Դանիէլ եպիսկոպոսի մասին:

-Այո՛, գիտեմ: Ես հրովարտակ կ'ուղարկեմ Աբել երեցին: Ան ասորի Դանիէլ եպիսկոպոսի մերձաւորն է,- ըսաւ արքան:

Ընկերները անցան եկեղեցւոյ միւս կողմը:

-Ովքե՞ր էին խօսողները, ինչո՞ւ Դանիել եպիսկոպոսի քով մարդ կը դրկեն, եւ վերջապէս՝ ո՞վ է այդ Դանիել եպիսկոպոսը,- իրար ետեւէ հարցեր հնչեցուց ժագը՝ բացատրութիւն ակնկալելով միւսներէն:

-Եւ որո՞նն ուղղուած էր հարցաշարդ,- հարցուց իշխանը ժագին:

Ժագ թոթուեց ուսերը:

-Կարծեմ՝ մեր ազգի համար շատ կարեւոր որոշում պիտի կայացնեն. ես անոնց դէմքերու արտայայտութենէն ատիկա հասկցայ,- եզրակացուց Մայքը:

Ընկերները, ուշադիր նայելով իրենց շուրջը, մօտեցան եկեղեցւոյ պատին փակցուած տախտակին, որուն վրայ թուաբանական գործողութիւն մը կատարուած էր. « $24+29+15+11=79$ »:



-Ասիկա ի՞նչ է,- թիւերուն զարմացած նայելով՝ բացականչեց Աննան:

-Հաւանաբար կը յուշէ այն մասին, թէ ինչ կը կատարուի եկեղեցւոյ պատերէն ներս,-ըսաւ Մայքը ու մտասոյզ նայեցաւ թիւերուն,- ինծի ինչո՞ւ կը թուի, որ ես տեղ մը հանդիպած եմ այս թիւերուն:

Եկեղեցիէն դեռ կը լսուէր թիկունքով դէպի իրենց նստած տղամարդու ձայնը: Ան յուզուած էր ու բաւական բարձր կը խօսէր.

-Ես Գողթն գաւառի մէջ համոզուեցայ, որ այսպէս այլեւս շարունակել հնարաւոր չէ. այս ձեւով մենք չենք կրնար քրիստոնէութիւնը հասցնել ժողովուրդին: Պետք է բան մը մտածենք, արքայ:

-Չեմ հասկնար՝ ի՞նչը կը խանգարէ, որ քրիստոնէութիւնը ժողովուրդին հասցնեն,-շուարած ըսաւ Աննան ու աւելցուց.- արդեօք հիմա ո՞ր դարուն մէջ յայտնուած ենք:

Մերին առաջարկեց.

-Ընկերներ, եկեք հասկնանք՝ ինչ կը նշանակէ 79 թիւը:

Իշխանը աչքերը կկոցելով նայեցաւ գործողութեան՝ ապա, բացականչեց.

-Մենտելեւի աղիւսակին մէջ 79-րդը ոսկի՞ն է:

-Եւ ի՞նչ,- զարմացած իշխանին հարցուց Մերին:

Իշխանը չպատասխանեց ընկերներուն, դարձեալ լսուեցան եկեղեցիէն եկող ձայները.

-Ասիկա պետք է ընենք նաեւ Պարսկաստանի միջեւ մասնատուած հայութիւնը օտար ազդեցութենէն զերծ պահելու եւ ժողովուրդի երկու հատուածներուն ազգային կերտուածքի միասնականութիւնը ապահովելու համար...

Իշխանը առաջարկեց.

-Մէկ վայրկեան, եկեք տեսնենք՝ հայերէնի մէջ ո՞ր տառերը կը համապատասխանեն այս թիւերուն: Ո՞ր տառն է 24-րդը:

-Ո-ն,- ըսաւ Մայքը:

-Ես հասկցա՛յ,- մտքին մէջ արագ հաշուելով՝ ուրախացած ճչաց Աննան ու պարզաբանեց.- այստեղ գրուած է ոսկի. մէկ վայրկեան, այսինքն, «ոսկի» բառի թուային գումարը ($24+29+15+11=79$) կը համապատասխանէ Մենտելեւի քիմիական տարրերու պարբերական աղիւսակին մէջ այդ մետաղի զբաղցուցած թիւ 79 վանդակի կարգաթիւին:

-Այո՛, Աննա՛, եւ անիկա կը յուշէ մեր հայկական այբուբենի աստուածային ծագման մասին,- ըսաւ Իշխանը.- Ես այդ մասին կարդացած էի ամսագրերէն մէկուն մէջ: Կը յիշեմ, որ արճիճ ($1+32+19+11+19=82$), արծաթ, հին ժամանակ՝ արծ ($1+32+14=47$), եւ ուրիշ բառեր կը համընկնին այդ աղիւսակին հետ:

-Այ քեզ հրա՛շք, այսինքն խօսքերը ստեղծելէն առաջ հայերը արդէն նիւթի տարրական կառուցուածքին մասին գիտելիքնե՛ր ունեցած են,- զարմացաւ ու հպարտացաւ Մայքը.- ահա՛ այդ ազգն ենք մենք:

-Աստուա՛ծ իմ, բայց Մենտելեւի աղիւսակը ստեղծուած է 19-րդ դարուն, իսկ Մաշտոցը հայոց տառերը՝ 5-րդ դարուն,- բացականչեց Աննան,- այսինքն, 14 դար առաջ Մաշտոցը արդէն գիտեր, թէ ինչ կը սպասուի մարդկութեան. միթե՛ ատիկա միայն Աստուծոյ յայտնի չէր:

Աննայի խօսքերէն ետք անոնք մէկ պահ հիացած նայեցան իրարու: Յանկարծ Իշխանը ուրախութենէն սկսաւ թռչկոտիլ:

Բոլորը միասին զարմացած նայեցան անոր:

-Ի՞նչ եղաւ քեզի, Իշխա՛ն, լա՛ւ ես,- հարցուց ժազը:

-Ես կ'երթամ զինք գրկելո՛ւ, ես գիտե՛մ ով է ներսի մարդը,- ուրախացած ու վստահ ըսաւ գիտունիկը:

-Ո՞վ է, ըսէ՛ մենք ալ գանք գրկենք,- խնդրեց Մերին:

Իշխանը կտրուկ պատասխանեց.

-Մեսրոպ Մաշտո՛ցն է, միթե՛ պարզ չէ: Ան կը համոզէ Սահակ Պարթեւը, որ պէտք է հայոց գիրեր ստեղծել: Մենք եկած ենք Ե. դա՛ր:

Մերին ուրախութեամբ բացականչեց.

-Իսկ արքան ալ Վռամշապուհին է:

Իշխանը գլխու շարժումով հաստատեց:

Ընկերները երջանիկ ժպիտով նայեցան իրարու, ապա վազելով մտան եկեղեցի. աւանդ, ներսը այլեւս մարդ չկար:

Իշխանը շուարած ու զարմացած փնտռեց Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթեւը.

-Ո՛ր էն. քիչ առաջ այստե՛ղ էին:

-Եկէք փորձենք առջեւ տանիլ ժամանակը,- առաջարկեց Մայքը:

-Պետք է յիշենք, թէ այս գրոյցէն ետք Մեսրոպ Մաշտոց ո՛ր գացած է ու երթանք անոր ետեւէն,- ըսաւ ժագը:

Ընկերները պատասխաններ գտնելու յոյսով կ'երթային, երբ անոնց դիմաց յայտնուեցաւ կենաց ծառը: Ընկերները, յանկարծակիի եկած, նայեցան իրարու:

-Այս ի՞նչ ծառ է,- հիացած նայելով ծառին՝ հարցուց ժագը եւ շարունակեց,- տեսէ՛ք, անոր տերեւներուն վրայ բաներ կան գրուած:

Ժագը փորձեց բարձրանալ ծառը, բայց՝ սայթաքեցաւ:

-Օգնեցէ՛ք բարձրանամ,- խնդրեց ժագը:

-Մինչեւ չհասկնանք, թէ ասիկա ինչ ծառ է, անիկա մեզի թոյլ չի տար բարձրանալ,- եզրակացուց Աննան:

-Սպասեցէ՛ք, ես այս ծառը տեղ մը տեսած եմ,- ծառին մօտենալով ու բունը շոյելով՝ ըսաւ Իշխանը, ապա յիշեց.- յիշեցի՛, Լոնտոնի մէջ լոյս տեսած «Աստուածաշունչ» մատենաի նկարագարդման մէջ կար: Կողքը Նոյեան տապանն էր, Մասիսը... Ասիկա մարդկութեան ծառն է, որ սկիզբ կ'առնէ Զայաստան աշխարհի Արարատ լեռան վրայ գտնուող Նոյեան տապանէն:

Այդ պահուն յանկարծ թեթեւ ու հաճելի քամի բարձրացաւ, որմէ ծառը սկսաւ խշշալ:

Մերին գրկեց Իշխանն ու ըսաւ.

-Ի՞նչ պիտի ընէիք, եթէ դուն մեզի հետ չըլլայիր, իմաստո՞ւն Իշխանս, ապրի՛ս,- ապա դառնալով միւսներուն՝ հարցուց.- ո՞վ կ'ուզէր ծառ բարձրանալ, արագ եկէ՛ք:

Ժագը անմիջապէս ծառ մագլցեցաւ եւ հրճուանքէն ճչաց.

- Նայեցէ՛ք ես այստե՛ղ եմ...

-Տե՛ս՝ ինչ գրուած է տերեւներուն, կարդա՛,- հրահանգեց Մայքը:

Ժագը սկսաւ կարդալ. «Մինչեւ գիրերու գիւտը, ի՞նչ լեզուով կը գրէին ու կը կարդային հայերը»:

- Մինչեւ մերոպ Մաշտոցը, հայերը ստեղծած են հարուստ բանահիւսութիւն, բայց արքունի գրագրութեան մէջ օգտագործած են յունարէն, արամերէն եւ պարսկերէն,- վստահ պատասխանեց Աննան:

Ժագը ծառի ճիւղէն տերեւ մը փրցուց եւ նետեց ընկերներուն. տերեւին վրայ այս նկարն էր:

-Այս ի՞նչ է... ես չեմ հասկնար,- զարմացաւ ցուց Մայքը:

- Ես գիտե՛մ,- իր հերթին վստահ ըսաւ Մերին,- հին ժամանակ գոյութիւն ունեցած են նաեւ նախամետրոպեան գիր եւ գրականութիւն: Սակայն, անոնք կեդրոնացած ըլլալով մեհեաններու մէջ եւ սահմանափակ գործածուելով՝ քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու շրջանին ոչնչացուած են հեթանոսական միւս արժէքներուն հետ:

-Մի՞թէ ա՛յս է հին հայկական այբուբենը. որքան կը յիշեմ, զայն կ'անուանէին «հիքսոսեան», - մտաբերեց Իշխանը եւ ուրախացած դարձաւ Աննային,- Աննա՛, զիս այս նկարին դիմաց կը նկարե՛ս: Աննան ժպտաց ու նկարեց...

-Բան մը ըսեմ՝ չէք հաւատար: Այս եւ մետրոպեան այբուբեններու միջեւ ինկած ժամանակահատուածը շուրջ 20 դար է,- ըսաւ Իշխանը լուսանկարուելէն ետք,- սակայն, ինչպէս կը տեսնենք, ժամանակը չէ կրցած ամբողջութեամբ ջնջել մեր նախնիներուն ստեղծած լաւագոյն այբուբենը, որ հիմք հանդիսացած է հնդկական բրահմի այբուբենին, փիւնիկեան, սեմական, Ասիոյ եւ Ափրիկեան երկիրներու բոլոր այբուբեններու ստեղծման համար:

-Ըսել կ'ուզես, որ մեր հնագոյն այբուբե՛նը հիմք եղած է թուարկածոյ այբուբեններու ստեղծման,- հարցուց Մերին:

-Ես չեմ ըսեր՝ փաստերն ու պատմութիւնը կը վկայեն,- պատասխանեց Իշխան:

-Ահա՛ եւս մէկ հանելուկ,- բացականչեց ժագը ու ծառէն տերեւ մը եւս փրցուց ու նետեց գետին: Մայքը վերցուց զայն ու կարդաց «ԱՍԶ», «ԱՉՏԶ», «ՅԱՅԶ» բառերը:

-Տարօրինակ բառեր են,- կրկին զարմացաւ Մայքը:

-Ժա՛գ,- ձայն տուաւ Իշխանը,- տես այդտեղ կա՛յ տերեւ մը, որուն վրայ մետրոպեան այբուբենը գրուած ըլլայ:

-Կա՛յ,- տերեւը գտնելով՝ ըսաւ ժագը եւ զայն նետեց վար:

Իշխանը վերցուց տերեւը եւ միւսներուն հետ միասին սկսաւ ուշադիր զննել. քիչ անց Իշխանի համար ամէն ինչ պարզ դարձաւ.

-Տես՛ք,- բացատրեց գիտունիկը միւսներուն,- այբուբենի մէջ հաւասարակողմ եռանկիւնաձեւ

դասաւորելու պարագային երեք անկիւններուն կը յայտնուին «Ա,Ս,Բ» տառերը:

Ընկերները սկսան հիմա ալ քառակուսի դասաւորել, որմէ ետք զարմանքէն մնացին քարացած գազաթներուն յայտնուեցան «Ա, Չ, Տ, Բ» տառերը:

Իշխանը հիացած նայեցաւ միւսներուն:

-Իսկ շեղանկիւնաձեւ դասաւորման պարագային՝ գազաթնային տառերուն մէջ կը յայտնուին «Ղ,Ա,Յ,Բ» տառերը,- անելցուց ան:

Ընկերները իրենց յայտնագործութենէն ոգեւորուած՝ սկսան թռչկոտիլ:

Յանկարծ զօրաւոր քամի բարձրացաւ եւ անոնք պահ մը յայտնուելով քամիին գիրկը՝ սկսան ճախրել երկնքի մէջ: Ընկերները հիացումով կը նայէին իրենց շուրջը, եւ ամպերուն մէջ, անոնց աչքերուն առջեւ բացուեցան այն ճանապարհները, ուրկէ քալած էր Մեսրոպ Մաշտոց:

-Ասոնք Ասորիքի Ամիտ, Եդեսիա եւ Սամոսատ քաղաքներն են... ահա՛ մեծ Վարպետը իր աշակերտներուն հետ,- ուրախ բացականչեց Մայքը:

-Տեսէ՞ք, այն մարդը կը տանի Դանիէլեան հայկական գիրերը,- մատնացոյց ըրաւ Մերին եւ պատմեց,- Վռամշապուհ արքայի օգնութեամբ անոնք բերել տուած էին զայն եւ համոզուած էին, որ անոնք չեն համապատասխաներ հայերէնի հնչիւնական համակարգին:

-Ո՞ր քաղաքին մէջ Մաշտոց ստեղծած է հայոց գիրերը,- հարցուց Ժագը.- կարծեմ՝ մենք հասանք այդ քաղաքը. վարպետի դէմքին խանդավառութիւն կայ... տեսէ՞ք՝ ճակատը ինչպէ՛ս կը փայլի:

-Գիրերը Եդեսիա քաղաքին մէջ ստեղծած է,- պատասխանեց Իշխանը ու չհաւատալով տեսածին՝ ըսաւ,- չէ՛, ես աչքերուս չեմ հաւատար. մենք կը տեսնենք, թէ ինչպէս այս պահուն Մաշտոց կը փորձէ գիրերու պիտանելիութիւնը:

-Պա՛հ է, այստեղ սառեցայ,- ըսաւ Աննան ու հարցուց Մայքին,- Մայք, ովքե՞ր են Մաշտոցի կողքին գտնուող այն երկու մարդիկ:

-Իր աշակերտներն են, Աննա՛, Յովսէփ Պաղնացին ու Յովհան Եկեղեցացին,-պատասխանեց Մայքը ու շարունակեց,- անոնց հետ միասին Մաշտոցը այս պահուն Աստուածաշունչը կը թարգմանէ՝ սկսելով «Սողոմոնի առակներէն»:

-Եկէ՛ք բոլորս միասին ըսենք այն առաջին նախադասութիւնը, այն սրբագան պատգամը, որ ան հիմա կը գրէ,- առաջարկեց Մերին:

Բոլորը բռնեցին իրարու ձեռք եւ որքան ուժ ունէին, ուրախութեամբ գոչեցին.

-Ճանաչե՛լ զիմաստութիւն եւ զխրատ, իմանա՛լ զբանս հանճարոյ...



* * *

Հիւրանոցին մէջ անոնք տնքոցով կը փորձէին ուղղել իրենց մէջքը.

-Եւս այսպիսի մի քանի վայրէջք, եւ մեզմէ բան չի մնար,- դժգոհեցաւ ժագը,- աաա՛խ, ոսկորնե՛րս...

-Մեկ վայրկեան...հէ՛յ, այդ ի՞նչ էր, ստուեր մը անցաւ այնտեղէն,- վախցած դիմացի պատին կողմը ցոյց տուաւ իշխանը:

-Յոգնութենէն արդէն աչքիդ ստուերներ կ'երեւին, գիտունի՛կ,- հեզնեց ժագը,- ամէն պարագայի՛ զգո՛յշ եղիր:

-Ժագ, բայց իրապէս ստուեր տեսայ,- ըսաւ իշխան:

-Լռէ՛,- պռռացին բոլորը մեկ:

Այդ ընթացին, լսուեցաւ ամբողջ տիրակալ ծերունիին ձայնը,- Երեխանէ՛ր, այսօր ձեզի հասու դարձաւ մեր պատմութեան ոսկեդարեան ժամանակաշրջանը՝ գիրերու գիւտը, որ ամենանշանաւոր իրադարձութիւնն է մեր ազգի կեանքին մէջ: Դուք ականատես եղաք, թէ ինչպէս մեր **Մաշտոցը ծանր, տքնաջան աշխատանքի ու բազմաթիւ պրպտումներու արդիւնքՈՎ ստեղծեց հայկական գիրերը՝ մեր ոսկեղէնիկ հայերէնը, ու աւանդեց իր յետնորդներուն՝ մե՛զի, եւ մենք ալ պիտի փոխանցենք մե՛ր յաջորդ սերունդներուն, եւ այդպէս մէկս միւսիս փոխանցելով՝ աչքի լոյսի պէս պէտք է պահենք մեր լեզուն, մեր գիրը, մեր մշակոյթը: Դուք տեսաք, թէ ինչպէս շատ ազգեր մեզմէ փոխ առին մեր գիրը, յարմարցուցին իրենց լեզուին՝ ստեղծելով իրենց այբուբենը: Այնպէս որ, մեր Մաշտոցի շնորհիւ՝ հայ ազգը կը համարուի առաջնակարգ ազգերէն մէկը, որ ունեցաւ իր սեփական գիրը, ուրոյն այբուբենն ու անոր շուրջ կառուցուած մշակութային արժէքները: Եւ այստեղ հարց կը ծագի. ըլլալով աշխարհի մէջ առաջիններէն մէկը, որ ունեցած է այբուբեն, գիր ու գրականութիւն, ինչո՞ւ մեր օրերուն կը փորձենք վերցնել ուրիշինը, օտարինը, այն, ինչ մերը չէ եւ յարմար ալ չէ մեր ազգային մտածելակերպին, ինչո՞ւ մեր բառապաշարը կը լեցուի օտար բառերով, որոնք բոլորովին կապ չունին մեր ազգի, մեր լեզուի ու մեր սրբագոյն այբուբենի հետ, եւ ինչո՞ւ այդպէս կ'ուրախանանք օտարի այբուբենը իւրացնելով՝ մոռնալով մեր այբուբենը. դեռ ուրիշները պէտք է վերցնեն մերը, ընդօրինակէ՛ն, ինչպէս եղած է հեռո՞ւ, հեռաւոր անցեալին...**

Սիրեցէ՛ք ձեր լեզուն՝ մեր քաղցր ու անուշ մայրենին, պահեցէք ամո՛ւր, խօսեցէ՛ք ճիշտ ու մաքրամաքուր հայերէն, խօսեցէ՛ք այն լեզուով, որ մերն է, եւ յիշեցէ՛ք, որ լեզուի ու կրօնի զօրութիւնը ամուր պահելով՝ կը պահէք ե՛ւ հայկեան ոգին, ե՛ւ ազգային միտքն ու դիմագիծը, ե՛ւ սեփական ինքնութիւնն ու հայրենիքը. լեզուն եւ հաւատքը ազգի գոյապահպանութեան հիմքն են...

Ընկերները հպարտութեամբ կը լսէին իմաստուն ծերունիին ըսածները:

2.մաս

Դժուար ու ցուրտ գիշերէ մը ետք՝ ընկերներու ոսկորները պաղէն ու խոնաւութենէն կը ցաւէին: Անոնք բացած էին իրենց աչքերը եւ կը սպասէին ծիրանափողի ձայնին, որ չուշացաւ:

...Կրկին անծանօթ ու շատ անսովոր վայր մըն էր: Անոնք կեցած էին գետի ափին եւ սարսափած աջ ու ձախ կը նայէին: Ամէն տեղէ դոփիւն, զէնքերու շառաչ, օտար հնչիւններ կը լսուէին: Ընկերները վախցան:

-Այս ի՞նչ ձայներ են, երկրաշա՞րժ է,- տազնապած նայելով շուրջը՝ ըսաւ Մայքը:

-Այնպիսի տպաւորութիւն է, կարծես հարիւրաւոր գազաններ այս կողմ կը վազեն,- ժազը մատնացոյց ընելով գետը՝ հարցուց,- այս գետը ինչո՞ւ այսքան աղտոտ է:

-Աղտոտ չէ, տիղմով պատուած է,- ըսաւ Իշխան:

-Ես կը վախնամ,- ըսաւ Աննան:

-Ինչո՞ւ մեր շուրջը գիւղ մը կամ քաղաք մը չկայ. մենք միևնա՞կ ենք այս դաշտավայրին մէջ,- հարցուց Մերին:

-Եկէք երթանք հասկանք, թէ ինչ կը կատարուի այստեղ,- առաջարկեց Իշխանը եւ յառաջացաւ:

Քալելէն որոշ ժամանակ ետք, յանկարծ կանգ առին՝ ցնցուած նայելով իրենց դիմաց բացուած տեսարանին. գետի ափին մեծաքանակ զօրք շարուած էր ուղղանկիւն, գրեթէ քառակուսի ձեւով, եւ կը հսկէր դաշտին բոլոր կողմերը: Չինուորներու ձեռքին մեծ ու վիթխարի վահաններ կային:

-Կարծեմ ասիկա մեր վերջին ճանապարհորդութիւնն է պատմութեան քառուղիներով, ես արդէն կը սարսափիմ,- ըսաւ ժազը:

-Բայց ինչո՞ւ այսպէս կեցած են, ի՞նչ կը նշանակէ ասիկա, ինչո՞ւ զօրքը քառակուսի դիրքով շարուած է,- հարցականներու շարքը բարձրաձայնեց Մայքը:

-Ասիկա հին դասական կառուցուածքն է, երբ ապահովութեան համար ամբողջ զօրքը կը շարուի ուղղանկիւն՝ գրեթէ քառակուսի կառոյցով, եւ կը պաշտպանուի մեծ վահաններով,- ըսաւ Իշխանը: Մայքը, կասկածելով Իշխանի ըսածին, հարցուց.

-Բայց պատերազմին հեծելազօր պէտք է ըլլայ. ո՞ւր է:

-Կարծեմ՝ քառակուսիի մէջ է, եւ անհրաժեշտ պարագային դուրս կ'ելլէ, որ ետ մղէ թշնամին: Իսկ երբ սպառնն անոնց նետերը, տեգերն ու մնացած զէնքերը, հեծելազօրը դարձեալ ներս կը մտնէ այս բնական պարիսպէն՝ նոր պաշարներ վերցնելու համար,- պատասխանեց Իշխանը:

Ընկերները ապշած նայեցան իրարու եւ նոյն պահուն ալ սկսան աղաղակելով այս ու այն կողմ փախչիլ:

Այն տարածքին մէջ, ուր անոնք կը գտնուէին՝ նետերու սլացքէն յանկարծ երկինքը սեւցաւ. երկու

կողմերեն կը լսուէր աղմուկ, վահաններու, սուրերու խելայեղ շառագ:

-Աստուա՛ծ իմ, այս ո՞ր եկած ենք, եկէք փախչի՛նք այստեղէն,- ճչաց Աննան:

-Մինչեւ չհասկնանք ուր ենք, չենք կրնար հեռանալ,- ըսաւ Իշխան ու փորձեց պատսպարուիլ նետերու տարափէն:

Քառակուսի կեցած զօրքը վստահ յառաջացաւ:

Լուսեցաւ հրամանատարին ձայնը.

- Մահ Չիմացեալ Մա՛հ Է, Մահ Իմացեալ՝ Անմահութի՛ւն: Առաաա՛ջ, ի՛մ քաջեր:

-Անոնք հայերէն կը խօսին, ոգեւորուած գոչեց Մերին ու շուրջը նայելով՝ հարցուց,- հիմա տարուայ ո՞ր եղանակն է:

-Գլուխները վա՛ւար, այս ի՞նչ կը կատարուի,- պոռաց ժազը:

Բոլորը վախցած պառկեցան գետին: Ժազը, նայելով կանաչաւուն դաշտին, բարձրաձայն ըսաւ.

-Տես՛ք, դաշտը լի է ծաղիկներով, ծառերու ծաղիկները արդէն թափած են, այսինքն գարունն է, կ'երեւի Մայիս ամիսն ենք:

-Աստուա՛ծ իմ, այնտե՛ղ նայեցէք, փիղե՛ր են,- բացականչեց Իշխանը:

Ընկերները իրենց թաքստոցներէն սարսափած նայեցան:

-Թշնամիի զօրքը մի քանի անգամ կը գերազանցէ մեր զօրքը,- ըսաւ Աննան եւ հարցուց միւսներուն,- ի՞նչ ընենք, ինչո՞վ օգնենք մերիներուն:

-Այդ գետը տիղմի մէջ էր, չէ՞,- բան մը կռահելով՝ հարցուց Իշխանը:

Ընկերները գլուխով դրական պատասխան տուին:

-Ես կարծես կը հասկնամ՝ մենք ուր կը գտնուինք,- խորհրդաւոր ձայնով ըսաւ Իշխանը,- գետը Տղմուտն է, գարունն է, ամիսը Մայիս. թշնամին յարձակած է մեծաքանակ զօրքով, նաեւ՝ փիղերով.

գորքի այսպիսի քառակուսի դիրքը Յոռմի մէջ կ'օգտագործէին, իսկ հայ գորավարներէն նման բան ըրած է նաեւ Վարդան Մամիկոնեանը:

-Մենք Աւարայրի՞ դաշտի մէջ ենք,- վախցած ու խաչակնքուելով՝ հարցուց ժագը:

-Փաստօրէն ասիկա Ե. դարն է՝ 451 թուականի Մայիս 26,- պարզաբանեց Մայքը եւ յանկարծ պառկած դիրքէն թռաւ ու վազեց դէպի մարտադաշտ՝ ընթացքին գոչելով,- ես պէտք է փրկեմ անոր կեանքը:

Ընկերները վախցած պոռագին Մայքի ետեւէն.

-Մա՛յք, ո՞ւր, Մա՛յք, խենթացե՛ր ես, վերադարձի՛ր...

Մայքը, չլսեց անոնց, արագ վազքով հասաւ մարտադաշտի կեդրոնը:

-Անոնք պիտի սպաննեն սպարապետը. ես պետք է զգուշացնեմ զինք,- բարձր գոչեց Մայքը:

-Մա՛յք, սպասե՛, Մա՛յք, անցեալը չե՛ս կրնար փոխել,- բացականչեց Աննան ու վազեց Մայքի ետեւէն:

Մնացած ընկերները պահ մը տարակուսանքով նայեցան իրարու եւ յետոյ իրենք ալ վազեցին Մայքի ու Աննայի ետեւէն:

* * *

Մարտը թեժ էր. Սուրէն ու հուրէն երկկողմանի կ'իյնային մարտիկները, իսկ Մայքը կը վազէր ու կը պոռար ՝ «Սպարապե՛տ, սպարապե՛տ...»:

Բոլորի հետ հաւասար մարտ մղող տղամարդը պահ մը կանգ առաւ ու ետ նայեցաւ: Եւ ինչպիսի՛ պատկառելի տեսք ուներ հայոց սպարապետ Վարդանը՝ Ողական ամրոցի արծիւը՝ հրաշափայլ թուրը ձեռքին եւ ընտիր ձիւնաթոյր նժոյգին նստած: Առաջին բանը, որ Մայք նկատեց, սպարապետի խրոխտ ու հպարտ հայեացքն էր. աչքերը հուր կ'արծակէին եւ այնպե՛ս կը բոցկլտային, որ կը թուէր՝ իր ցոլքերով կը լուսաւորէ, կը հրդեհէ Աւարայրը: Մամիկոնեաններու զինանշանը կրող ամրակուռ սաղաւարտը, որ ցօղուած էր հայրենի Արածանի գետին մէջ ու հիմա կը փայլփլէր արեւի շողերուն ներքոյ՝ շքեղօրէն կը զարդարէր անոր գլուխը. բազուկներուն կը կրէր ոսկեպատ բազպաններ,

իսկ ինք ամբողջովին գրահաւորուած էր եւ բաւական ազդեցիկ էր իր վեհ կեցուածքին մէջ: Մայքը պահ մը քարացած նայեցաւ անոր, ապա անմիջապէս նետուեցաւ սպարապետի գիրկը՝ աղաչելով.
-Կը խնդրե՛մ, պէտք չէ մխրճուիլ թշնամիի շարքերը... դուք այսօր պիտի զոհուիք, սպարապէտ, պէտք չէ, կ'աղաչե՛մ...

Սպարապետը զարմացած նայեցաւ Մայքին ու ըսաւ.

-Իսկ դուն ինչո՞ւ առանց զենքի ես. վերցո՛ւր զենքդ եւ ի մա՛րտ: Զերի՛ք եղաւ, որդի՛ս, հերի՛ք եղաւ, որքան կոտորեցին մեր անմեղ ժողովրդը. մենք պէ՛տք է ապացուցենք, որ կրնանք նուաճել մեր ապրելու իրաւունքը՝ նոյնիսկ իմ մահուան գնով. ասիկա գիտակցուած մահ է:

Այդ ընթացքին մնացած ընկերներն ալ վազելով եկան ու հասան Մայքին:

Սպարապետը արհաբար սուրը ճօճեց օդին մէջ ու պոռաց.

-Դէպի առաաս՛ջ, մա՛հ գրադաշտութեան՝ յանուն հայրենիքի, յանո՛ւն հայ ժողովուրդի, ի մա՛րտ... Չօրքը գոռում-գոչիւններով սլացաւ դէպի գետը, զայն անցնելու եւ պարսկական մեծաթիւ բանակին մէջ մխրճուելու յամառ վճռականութեամբ:

-Չայոց այրուծին գնաց նաեւ բարոյական յաղթանակ տանելու,- շշնջաց Իշխանը եւ նստեցաւ գետին: Սակայն, Մայքը չէր կրնար հանգստանալ.

-Ե՛լ ոտքի, Իշխա՛ն, ի՞նչ է բոլորդ ապշած կը նայիք, ելէ՛ք, մենք ալ երթանք անոնց ետեւէն:

Քիչ մը անդին, իրենց հեծեալները կորսնցուցած, երկու ձի անհանգիստ կը խրխնջային: Ընկերները հեծան ձիերն ու զօրքի ետեւէն անցան Տղմուտ գետը:

* * *

...Կը թուէր՝ աշխարհը ներկուած էր արեամբ, հառաչանքով, վրեժով ու մինչեւ մահ կոռուելու յամառ վճռականութեամբ: Յանկարծ, Չայոց այրուծին՝ որսալով պատեհ պահը, կտրեց ու անցաւ Տղմուտը եւ մխրճուեցաւ թշնամիի մարտական շարքերուն մէջ: Պարսից բանակի որոշ զօրամասեր, չդիմանալով հայերու անօրինակ ճնշման, սկսան նահանջել: Այդ ժամանակ Վարդան Մամիկոնեանը շրջանցեց հակառակորդը եւ հարուածեց ուղիղ պարսից բանակի պահեստագօրին: Պարսիկներու

շարքերուն մէջ խուճապ սկսաւ, եւ պահ մը թուեցաւ, որ հայերը կը յաղթեն: Բայց այդ ճակատագրական պահուն զգացուեցաւ պարսկական զօրքերուն թիւի գերազանցութիւնը: Մուշկան Նիսալաւուրտի հրամանով պարսիկները վերադասաւորեցին իրենց ուժերը. օգնութեան եկաւ Մատեան գունդը: Վերջինս շրջապատեց սպարապետի փոքրաթիւ զօրագունդը եւ սկսաւ աստիճանաբար սեղմել օղակը: Կատաղի ու օրհասական մարտ ծաւալեցաւ:

Մատեան գունդի նօսրացած շարքերը անընդհատ կը համալրուէին նորերով: Ըլլալով մեծագոյն ռազմական գործիչ ու տաղանդաւոր զօրավար՝ Վարդան Մամիկոնեանը կը քաջալերեր, կ'ոգեւորեր իր մարտիկները, որոնք, կարծես գերբնական ուժ ստանալով, կը դիմէին անհաւանական սիրանքներու: Վարդանի սուրը կը շողար յաղթական, եւ հայրենասիրական ոգին թել առած էր Աւարայրի մէջ ու կը ճախրեր...

Սակայն, շուտով վրայ հասաւ դաւադիր ու նենգ թշնամիի ճակատագրական հարուածը. ինկաւ սպարապետը, բայց ոգին մնաց, մնաց մինչեւ վերջ, մնաց անպարտելի... Հայ նախարարները եւ զինուորները կը կռուէին եւ կը գոհուէին՝ ծանր կորուստներ պատճառելով հակառակորդին, ու չէին դադարէր՝ անընդհատ կրկնել իրենց նշանաբանը. **«Զգիտակցուած մահը մահ է, գիտակցուած մահը՝ անմահութիւն»:** Բայց, աւա՛ղ, անոնց շարքերն ալ հետզհետէ նօսրացան...

Մայքը խենթի պէս ամենուր կը փնտռէր սպարապետը, կը փորձէր լսել անոր ձայնը:

Մայրամուտը կ'արծես արեան գոյն ստացած էր: Մահացածներու թիւը հազարներու կը հասներ: Երկու կողմէն յոգնած, ուժասպառ զօրքը այլեւս ի վիճակի չէր շարունակելու մարտը:



-Մարտը աւարտած է,- վիատած ձայնով ըսաւ Իշխանը՝ խոնարհելով գլուխը եւ չկարենալով զսպել արցունքները,- աւա՛ղ, հերոսի մահով ինկան սպարապետ Վարդան Մամիկոնեանը, Վահան Արծրունին, Խորեն Խորխոռունին, Սրուանձտեանցը եւ ուրիշներ...:

Բոլորը լուռ խոնարհեցան՝ ի յիշատակ նահատակուած քաջերուն:

-Աւարայրը մարտահրաւեր էր զրադաշտութեան դէմ,- ըսաւ Մայքը,- եւ հայերը այդ պայքարին բարոյական յաղթանակ տարին:

-Նայեցէ՛ք, հայկական զօրքը կը նահանջէ, բայց պարսիկները չեն փորձեր խանգարել. Կը պատկերացնէ՛ք՝ ի՛նչ աստիճանի ջախջախուած են, որ չեն փորձեր խոչընդոտել,- ըսաւ Ժագը եւ ընկերներու հետ տխուր նայեցաւ հեռացող զօրքի ետեւէն:

-Ըստ Եղիշէի պատմութեան՝ հայերու զոհերուն թիւը կը հասներ 1036 հոգիի:

-Շատ աւելի ծանր կորուստներ կրած են պարսիկները՝ 3544 մարդ. կը յիշեմ պատմութենէն այդ թիւը,- աւելցուց Ժագը:

-Եթէ հայը հայուն չդաւաճանէ, մեզի ոչ ոք կրնայ յաղթել,- կամացուկ շշնջաց Իշխանը:

Երբ ընկերները կը զրուցէին, ապշած ետ նայեցան ու տեսան իրենց ետեւ կանգնած հայոց նախարարներէն մէկը:

-Ո՛վ էք դուք,- զարմացած հարցուց նախարարը:

-Մենք..., մենք... շնորհակալ ենք, որ փրկեցիք մեզ,- կմկմալով ըսաւ Մայքը:

-Շնորհակալութիւն այս մարտի համար,- տխուր ժպտալով ըսաւ Ժագը:

-Դուք քաջե՛ր էք, անպարտելի՛ քաջեր,- աւելցուց Աննան, որմէ ետք ընկերները ամուր իրարու ձեռք բռնեցին:

-Բայց դուք այդպէս ալ չներկայացաք,- նախարարը դիմեց ընկերներուն:

-Մենք ապագային ենք, ու ձեր շնորհիլ է նաեւ, որ կանք,- հասցուց ըսել Մերին:

Նախարարը զարմացած նայեցաւ ու մի քանի քայլ ետ-ետ երթալով՝ տեսաւ, թէ ինչպէս չքացան, ապագային եկած այս զարմանալի ու տարօրինակ հիւրերը:

* * *

Ամրոցին մէջ ոգեշունչ մթնոլորտ էր:

Մայքը խանդավառուած ու յուզուած կը կիսուէր իր տպաւորութիւններով.

-Իսկական հերո՛ս էր մեր Վարդան Մամիկոնեանը: Երբ բռնեցի անոր ձեռքը, զգացի յաղթական, հայրենասէր մարդու ձեռքի ուժը. ան հերոսավայել ալ ինկաւ մարտի դաշտին մէջ:

-Պատահական չէ, որ ան սուրբերու շարքին դասուած է,- շարունակեց Իշխանը:

-Մեր սպարապետը մեծ ռազմական գործիչ էր, որ կրցաւ փոքրաքանակ ուժերով հաւասարազօր ճակատամարտ մղել պարսից գերակշիռ ուժերուն դէմ,- հիացած ըսաւ Աննան:

Ամրոցին մէջ լռութիւն տիրեց:

Լռութիւնը խախտեց ամրոցի ծերունիի հանկարծակի յայտնութիւնն ու ձայնը.

-Ահա եւ աւարտին հասաւ հերթական օրը: Այսօր դուք ապրեցաք 5-րդ դարու ժամանակաշրջանը: **Դուք տեսաք մեր պատմութեան փառահեղ ճակատամարտերէն մէկը՝ Աւարայրի ճակատամարտը, տեսաք մեր քաջն սպարապետ Վարդանի եւ միւս խիզախ հայորդիներու փառահեղ կռիւր: Պէտք է լա՛ւ գիտակցիք, որ, ճիշդ է, մենք լիակատար յաղթանակ չտարինք այս ճակատամարտին, բայց տարինք յաղթանակներէն ամենաանհրաժեշտը՝ բարոյական յաղթանակը, որուն իբրեւ արդիւնք ամուր պահեցինք մեր ինքնութիւնը, մեր հաւատքը, մեր հայ ըլլալու արժանիքը: Համոզուեցա՛ք, որ, եթէ կայ ընդհանուր նպատակ, համախմբում մէկ գաղափարի շուրջ, միասնութիւն եւ մեծ հայրենասիրական ոգի, նոյնիսկ փոքրաքանակ ըլլալով՝ հնարաւոր է յաղթել մի քանի անգամ թիւով քեզ գերազանցող թշնամիին. ասիկա շատ կարեւոր է, լա՛ւ յիշեցէք եւ հետեւութիւննե՛ր ըրէք այս կարեւոր դասէն: Վարդանանց պատերազմը մեր պատմութեան ամենանուիրական էջերէն մէկն է:**

Շարունակեցէ՛ք թերթել մեր հինաւուրց պատմութեան հերոսական էջերը...

...Արեւը նոր ծագած էր, երբ անոնք արագ մտան խորհրդաւոր սենեակը: Ծնողներու հանդէպ կարօտը, ինչպէս նաեւ հայոց պատմութեան հանդէպ անսահման հետաքրքրութիւնը փախցուցած էր անոնց քունը:

-Պատրաստ էք, հայոց քաջէ՛ր,- հարցուց Իշխանը ընկերներուն:

Վերջիններս բարձր պռռացին.

-Այո՛ր, մի՛շտ պատրաստ:

-Ուրեմն դէպի նո՛ր արկածնե՛ր,- գոչեց Իշխանը ու փչեց ծիրանափողը:

Ընկերները սկսան գլորուիլ լանջն ի վար:

Գլորուելու ընթացքին անոնք իրարու ձայն կու տային.

-Ո՛ւր ենք... ի՞նչ կը կատարուի... օգնեցէ՛ք... փրկեցէ՛ք մեզ... հիմա կը գլորուի՛նք ձորը... Սակայն լերան թեքութիւնը այնքան մեծ էր, որ անոնք չէին կրնար կանգ առնել:

Յանկարծ աժդահայ երիտասարդ մը հերթով կեցուց բոլորը: Ընկերները, հաւաքելով իրենց ուժերը, փորձեցին ուշքի գալ՝ վախցած նայելով իրենց դիմաց կեցած հսկայ երիտասարդին:

Շուրջը կը լսուէր գառնուկներու մայուն ու ոչխարներու բառաչ:

-Շնորհակալ ենք, որ մեզի օգնեցիք, բայց դուք ո՞վ էք,- հարցուց ժազը երիտասարդին:

Երիտասարդը զարմացած նայեցաւ անոնց ու առանց բան մը ըսելու՝ արագաքայլ հեռացաւ:

-Ո՞վ է այս տարօրինակ երիտասարդը,- հիացած ըսաւ Աննան.- ի՞նչ ալ մարզուած էր ու գեղեցիկ: Բոլորը իրենց շուրջը նայելով՝ արագ քալեցին դէպի դիմացի քաղաքը:

Շատ չանցած, մտան քաղաք ու զարմանքէն քարացան. այստեղ մեծ իրարանցում էր:

Մի քանի զինուած տղամարդ, որոնց արտաքինէն անմիջապէս կը հասկցուէր, որ հայեր չէին, իրար խառնած էին ողջ քաղաքը: Անոնց հետ եկած զօրքը այս ու այն տունէն կահ-կարասի կը հանէր, բռնութեամբ կիներն ու աղջիկներընը քարշ կու տար, կ'աւերէր ճանապարհին յայտնուած ամէն բան: Ընկերները, այս ամէնը տեսնելով, վախցան:

-Տղա՛ք, գուցէ ձա՛յն հանէք, բա՛ն մը ըսէք՝ ովքե՛ր են այս մարդիկ, ինչո՞ւ այսպէս կը տանջեն հայերը,- հարցուց ժագը:

-Չեմ հասկնար՝ այս քաղաքը տեր չունի՞. քաղաքապետ կամ...,- զարմացաւ Իշխանը:

-Իշխան, եթէ դուն չես հասկնար՝ մենք ինչպե՞ս հասկնանք,- արդարացաւ Աննան:

Յանկարծ Մայքը, լարելով տեսողութիւնը, դարձաւ ընկերներուն.

-Մէկ վայրկեան, ո՞վ է այն մարդը, որ ձայնը գլուխը առած կու գայ: Տեսէ՛ք: Ի՞նչ ալ բարձր ձայն ունի: Տուներէն մէկէն ելած տղամարդը բարձր ձայնով պոռալով մօտեցաւ կողոպտիչներուն.

-Սպասեցէ՛ք, մի՛ սպաննէք, մի՛ կողոպտէք, եկէք խօսի՛նք: Ի՞նչ կ'ուզէք, ի՞նչ պատահած է: Կողոպտիչը, ոտքէն գլուխ նայելով իրեն մօտեցած տղամարդուն, արհամարհանքով ըսաւ.

-Եկա՛ծ եկք մեր եօթը տարուան խարճը տանելու:

Բարձր ձայնով տղամարդու ձեռքին աղ ու հաց կար: Ան դողալով ըսաւ.

-Բարո՞վ եկած էք մեր քաղաք, հիւրասիրուեցէ՛ք:

Իշխանը քաշեց ժագի ձեռքէն.

-Դատելով այս կողոպտիչներու հագ ու կապէն՝ մտքիներ են:

Այդ ընթացքին հայ տղամարդը ծնկաչոք ու արտասուլախառն դեռ կ'աղաչէր կողոպտիչին.

- Ինչ որ կ'ուզես՝ ա՛ռ, տա՛ր, միայն թէ գթա՛ մեր խեղճ ու թշուառ ազգին, մի՛ կոտորէր, մի՛ տանիր մահուան....

Ծուխն ու մուրը, կրակն ու արիւնը խառնուած էին իրարու. մարցի զինուորները անխնայ կը թալանէին հայերու տուններն ու ունեցուածքը:

Ժագը, շուրջը կատարուող սարսափելի տեսարաններուն նայելով, յուսահատ դիմեց Մայքին.

-Մենք չենք կրնար ասոր դէմը առնել, ի՞նչ ընենք:

Յանկարծ անոնց կողքին յայտնուեցաւ հրաշք ձի մը, զոր թամբած էր Իշխանը: Վերջինս ձայնեց.

-Թռէ՛՛ք, տղա՛ք, շուռ՛տ...

Տղաքը անմիջապէս թռան ձիու վրայ: Իշխանը պոռաց.

-Քուռկի՛կ Ջալալի, մեզի հասցո՛ւր Դաւիթի քով:

Հրեղէն ձին սանձահարուեցաւ ու բարձրացաւ երկինք:

-Ըսիր Դաւիթի քո՛վ,- բարձր պոռալով հարցուց Մայքը Իշխանին:

-Այո՛,- նոյնպէս բարձր պատասխանեց Իշխանը

-Ես տեսայ, թէ ինչպէս այդ տղամարդը քիչ առաջ այնպէս բարձր պոռաց, որ սարերը դողդացին:

-Հիմա հասկցա՛յ, ան հաստատ Ձէնով Օհանն է,- ուրախացած ըսաւ Ժագը:

-Այո՛, Ձէնով Օհանն էր, իսկ այն գառնարած տղան ալ... Ես կը փշաքաղուիմ, տղա՛ք, չեմ կրնար հաւատալ... ան մեր Սասունցի Դաւիթն էր՝ մեր դիւցազնավեպի գլխաւոր հերոսը...

Իսկ այդ ընթացքին Քուռկիկ Ջալալին կայծակնային արագութեամբ կը սլանար լեռն ի վեր: Տղաները նայեցան վար, տեսան նախիրը, բայց Դաւիթը չնկատեցին:

-Ո՛ւր է Դաւիթը, չկա՛յ,- անհանգիստ հարցուց Մայքը ու առաջարկեց.- մենք պետք է շուտ զինք գտնենք ու քաղաք տանինք, այլապէս մարցիները Սասունը հուրի իսկ Սասունի բնակիչները սուրի կը մատնեն:

Ձին, մի քանի պտոյտ գործելով, յանկարծ իջաւ լերան վրայ, որ՝ ըստ իշխանի եզրակացութեան՝ Մարութայ լեռն էր:

Տղաները արագ ցատկեցին ձիէն եւ շփոթած ու տագնապած նայեցան իրենց շուրջը. Դաւիթը չկար, իսկ անոր նախիրը հանգիստ կ'արածէր: Այդ նոյն ժամանակ լերան ստորոտին գտնուող գիւղաքաղաքին մէջ արիւն կը հոսէր, հայերը կը կողոպտուէին ու կը կոտորուէին: Տղաները մի քանի անգամ ձայն տուին, կանչեցին Դաւիթը, սակայն ապարդիւն: Յանկարծ իշխանը լարեց լսողութիւնը. քլունգի, մուրճի ձայներ կը լսուէին:

-Կը լսե՞ք, սարի կատարին շինարարութիւն կ'ընեն, եկե՛ք այնտեղ երթանք,- առաջարկեց փոքրիկը:

-Բայց ի՞նչ շինարարութիւն կրնայ ըլլալ սարի վրայ,- զարմացաւ Մայքը,- պէ՛տք չէ ժամանակ կորսնցնենք:

-Ասիկա Մարութայ սարն է, Մայք. չէ՞ որ այս սարի վրայ Դաւիթը վերակառուցած է իր նախնիներուն կառուցած ու մտրցիներու կողմէն ակերուած Տիրամօր վանքը,- պարզաբանեց իշխանը եւ ակեցուց.- Դաւիթը հիմա հաստատ այնտեղ է եւ շինարարներուն հետ միասին լծուած է վանքի աշխատանքներուն:

Տղաները նայեցան իրենց շուրջը: Կանաչ խոտերու մէջ հանգիստ արածող Զուռնիկ Զալալին օգնելու նշաններ ցոյց չէր տար, սակայն անոր թամբէն կախուած Թուր Կեծակին տեսնելով՝ տղաները մէկ անգամէն հասկցան իրենց ընելիքը: Անոնք վերցուցին թուրը, երեքով բռնեցին զայն եւ սրընթաց հասան Մարութայ սարի կատարին:

Այդ ընթացքին քաղաքի մէջ դէպքերը ակելի ողբերգական ընթացք ստացած էին: Լաց ու կոծէն վախցած՝ Աննան ու Մերին փորձեցին իրենց համար ակելի ապահով թաքստոց մը գտնել:

* * *

Տղաները «Դաւիթ, Դաւիթ» պոռալով հասան վանքին քով: Զլունգներու ձայները յանկարծ մէկ անգամէն դադրեցան եւ Դաւիթը եկաւ անոնց ընդառաջ.

-Կարծեմ՝ մենք մէկ անգամ արդէն հանդիպած ենք,- զիրենք յիշելով՝ ըսաւ Դաւիթ ու հարցուց,- ի՞նչ եղած է, ինչո՞ւ կը պոռաք, ո՞վ էք:

Իշխանը, յիշելով Էպոսի տողերը, մեկ շունչով ըսավ.

-«Կը թալանեն բովանդակ Սասուն.
Քառսուն բեռ ոսկի խարաջ կ'ուզին,
Քառսուն կոյս աղջիկ սիրուն, արմաղան,
Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
Քառսուն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Մըսրայ Մելիքին դարաւաշ դառնան»:

Ասիկա լսելուն պէս Դաւիթի աչքերը հուրով ու վրեժով լեցուեցան, ապա՝ մռնչաց.

-Այս ի՞նչ կ'ըսէք. դիմացի՛ր, Մելի՛ք, ես կու գա՛մ արդէն:

Դաւիթը կատաղօրէն վազեց, տղաներն ալ՝ հետեւեցան անոր:

* * *

Կողոպտիչները Ձենով Օհանը անկիւն մը քաշած էին ու անոր տան ոսկիները կը չափէին, որ տանին: Օհանը կը խնդրէր հանգիստ ձգել իր հօրը, իր տոհմի ունեցուածքը, բայց անոնք՝ զէնքի սպառնալիքով՝ ոսկիները ագահաբար կը լեցնէին մեծ պարկերու մէջ: Ու յանկարծ, այդ պահուն, դրան շեմին յայտնուեցաւ Դաւիթը.



- Կորէ՛ք, անզգա՛մ դուք Մըսրայ շունէ՛ր,
Պա չէ՛ք իմացեր դուք Սասնայ ծըռեր,
Մեռա՛ծ կը կարծէք դուք մեզ, թէ՛ շըւաք,
Կ՛ուզէք մեր երկիր դընէք խարջի տա՛կ...

Այս ըսելով՝ Դաւիթը բարկացած, իր գերբնական ուժով ջարդեց կողոպտիչները: Մնացածները սարսափած դուրս վազեցին Օհանի տունէն:

Դաւիթը հետապնդեց զիրենք: Օգնութեան եկած Զուռկիկ Ջալալին իր թամբին առաւ Դաւիթը: Վերջինս, Թուր Կեծակին յաղթականօրէն պարզած, ահ ու սարսափ տարածելով՝ քաղաքէն դուրս հանեց Մըսրայ Մելիքի զօրքը: Ժողովուրդը ցնծութեան մէջ էր՝ ամենուր գովք, փառաբանութիւն, օրհնութիւն:

Դաւիթը Մարութայ սարի կատարէն Թուր Կեծակին ձեռքին ահեղաձայն պոռաց.

-Մելի՛ք, Դաւի՛թ կու գայ՝ Սասունցի Դաւի՛թը...

Սարը առասպելական հերոսի ձայնէն դղրդաց, իսկ վայրկեաններ անց ցնծացող ժողովուրդը լսեց Մելիքի սուկալի ոռնոցը: Սասունցին հանգիստ շունչ քաշեց. Սասունը ազատագրուեցաւ: Տղաները ուրախացած ու ոգեւորուած փաթթուեցան իրարու.

-Ուռաա՛, Սասունը ազատագրուեցա՛ւ, կեցցէ՛ հերոս Դաւիթը՛,- բացականչեցին վերջիններս:
Յանկարծ Իշխանը սթափեցաւ ու դիմեց տղաներուն.

-Տղա՛ք, մեր երթալու ժամանակն է, իսկ ո՞ւր են աղջիկները... արագ շարժեցէ՛ք, թէ ոչ կը մնանք այստեղ:

Տղաները շնչակտուր հասան այնտեղ, ուր վերջին անգամ ձգած էին աղջիկները. սարսափը պատեց վերջիններուն՝ աղջիկները չկային: Տղաները, աղջիկներու անունները կանչելով ինկան իրար կոտորող, հրմշտկող, այս ու այն կողմ վազող մարդոց ու զօրքի մէջ:

-Մենք ընդամենը մի քանի վայրկեան ունինք, եթէ չհասցնենք, կը մնանք է. դարուն մէջ...չէ՛մ ուզեր,- դժգոհեցաւ Իշխանը:

Նոյն պահուն բոլորը ամուր իրարու ձեռք բռնեցին ու թռան:

Ընկերները յոգնած ու տանջուած յայտնուեցան ամրոցի յատակին:

Անոնք ե՛լ յոգնած էին, ե՛լ երջանիկ:

-Բայց ի՛նչ ազդեցիկ էր Սասունցի Դաւիթը՝ մկանո՛ւտ, թիկնե՛ր, գեղեցկադե՛մ իսկական հերոսական կերպար,- ինքզինք կարգի բերելով ըսաւ Աննան.- ես հասցուցի զինք նկարել...

-Մեր Դաւիթը Սարայ Մելիքին լա՛ւ դաս տուաւ. ես հպարտ եմ մեր Դաւիթով,- ըսաւ Մերին:

-Ձեռով Օհանի ձայնը մինչեւ հիմա ականջներուս մէջ է,- ականջները սեղմելով՝ ըսաւ Մայքը:

- Ես կ'երթամ քնանալու,- ըսաւ Մայքը

Մինչ այդ ամրոցի մէջ լսուեցաւ ծերունիին ձայնը.

-Դուք այսօր հանդիպեցաք Սարայ Մելիքին եւ տեսաք, թէ ինչպիսի անմարդկային եւ անօրինակ դաժան արարքներով ան իր զօրքով կ'ահաբեկէր մեր ժողովուրդը: Սակայն, Սասունցի Դաւիթը, մեր առասպելական հայորդին, իր բազկի ուժով, իր քաջութեամբ ազատագրեց մեր երկիրը բիրտ ու դաժան օտարներէն: Սասնայ ծռերը իրենց հայրենասիրութեամբ, անձնուիրութեամբ յաւերժացան, անմահացան մեր պատմութեան էջերուն մէջ, եւ անոնց սիրագործութիւնները հիմք հանդիսացան ու մարմնաւորեցին մեր ժողովուրդն ու պատմութիւնը... Անոնք դարձան երգ, դիւցազներգութիւն, ազգային խորհրդանիշ. եւ ուրեմն, բոլորդ հոգիով եղէ՛ք Սասնայ ծուռ, եղէ՛ք հայրենասէր, եղէ՛ք հայրենանուէր, քա՛ջ ու անվախ, հպարտ ու անպարտ, եւ կը դառնաք նո՛ր Դաւիթներ, նո՛ր Միերներ, հայոց անյաղթ նո՛ր արծիւներ...

Ը. մաս

ՄԵԿ մատ պատուհանէն ներս թափանցած առաւօտեան արեւի ամենակիզիչ շողը ինկաւ ուղիղ Իշխանի ճակատին: Ան նոյն պահուն թռաւ տեղէն եւ մէկ անգամէն ձայնեց ըկերներուն.

-Պատրաստ... դէպի յաջորդ փորձութիւն:

-Ձգէ քիչ մը քնանա՛նք...,- ըսին ընկերները:

- Քնանալ չկա՛յ, արա՛գ,- պոռաց Իշխանը եւ փչեց ծիրանափողը:

Վայրկեաններու ընթացքին, ընկերները՝ խելայեղ շրջապտոյտի մէջ ինալէ ետք՝ յայտնուեցան անսովոր ու տարօրինակ տեղ մը, հին ու փոքր քաղաք յիշեցնող տարածքի մը մէջ: Այնտեղ լարուած ու պայթիւնազտանգ մթնոլորտ կը տիրէր, ամէնուր կը շրջէին զինուած մարդիկ՝ ձիերով, սուրերով, նետ ու աղեղով: Խիստ հայեացքով, լայնաճակատ, պէխ ու մօրուքով զօրավար մը ձին հեծած, թուրը կապած, կը շրջէր զինուորականներու շարքերուն մէջ ու հրամաններ կու տար:

Ընկերները կքած պահուըտեցան մեծ քարի մը ետեւ: Աննան դանդաղօրէն գլուխը հանեց քարին ետեւէն, ապա սարսափահար դարձեալ նստեցաւ տեղը:

-Ի՞նչ եղաւ քեզի,- մտահոգուեցաւ Մայքը:

-Կարծես սատանայ տեսած ըլլաս,- ըսաւ Ժագը:

-Անոնք այս կողմ կու գան,- վախցած ըսաւ Աննան եւ ամուր գոցեց աչքերը:

Յանկարծ, քարին ետեւէն սուր մը ճօճուելով իջաւ Մայքի ուսին: Ընկերները դանդաղ բարձրացան իրենց տեղէն. անոնց դիմաց կանգնած էին մի քանի յաղթանդամ զինուորականներ:

-Ահա՛ թէ ուր էք դուք. մենք ալ գիւղերով ինկած՝ ձեզ կը փնտռենք. յառաջացէ՛ք, ձեր վերջը եկա՛ծ է,- ըսաւ անոնցմէ մէկը,- արագ, գացի՛նք:

-Ո՛ւր, մե՞նք... դուք կը սխալիք...մենք որեւէ բանէ տեղեակ չենք...մենք այստեղէն չենք... հիմա ամէն ինչ կը բացատրենք,- կմկմաց Ժագը:

-Մենք լաւ գիտենք, որ դուք այստեղէն չէք: Յառաջացէ՛ք, քանի թուրով չենք տարած,- հրամայեց զինուորականներէն մէկը:

-Կ'աղաչե՛մ,- արտասուելով ըսաւ Աննան,- ձգեցէ՛ք մեզի:

-Աննա՛, մի՛ լար,- ըսաւ Իշխանը եւ բռնեց Աննայի ձեռքը:

Ժագն ու Մայքը պահ մը իրարու նայեցան:

Ընկերները վախցած ու զլխիկոր սկսան քալել:

-Սպարապէ՛տ, ջեւանշիրներն արդէն մօտ են սահմանին,- ըսաւ զինուորականներէն մէկը:

Ընկերները լարուեցան:

-Սպարապետ,- շնչաց Մայքը ժագի ականջին,- ջեւանշիրները ովքե՞ր են:

-Հին ժամանակ այդպիսի ցեղատեսակ եղած է, որոնք պարբերաբար յարձակած են Սիւնիքի վրայ,- բացատրեց ժագը:

-Ինչո՞ւ կեցաք, քալեցէ՞ք, այս կո՛ղմ եկեք, իսկ հիմա նե՛րս մտեք ու պատմեցէ՛ք ողջ ճշմարտութիւնը,- հրամաններ արձակելով՝ ընկերները կը հրէին խստադեմ զինուորականները:

Անոնց տարին վրանի նմանող տեղ մը, եւ երբ վերջիններս ներս մտան, զարմանքէն քարացան: Ներսը նստած էր տղամարդ մը, որ մտազբաղ հայեացքը յառած էր իր առջեւ փռուած հին քարտեզին:

-Ուրկե՞ կը յիշեմ այս մարդուն դեմքը,- կամացուկ մը ըսաւ Իշխանը՝ կիտելով յօնքերը:

Յանկարծ Աննան սկսաւ բարձրաձայն ու արագ-արագ խօսիլ.

-Մեզի ինչո՞ւ այստեղ բերած էք, դուք գիտե՞ք, թէ մենք ովքեր ենք. ես, օրինակ, Գանատայէն եմ, ինքը Լոս Անճելըսէն, միւսը Աւստրալիայէն, այն մէկը ...

Այդ պահուն զօրավարը բարձրացուց գլուխն ու զննող հայեացքով նայեցաւ ընկերներուն:

Երբ զօրավարի հայեացքը հանդիպեցաւ ժագին, վերջինս լայնաբերան ժպտաց:

-Իսկ հիմա ըսէ՛ք՝ որո՞ւն փոխանցած էք այդ նամակը, զոր պիտի հասցնէիք Վախթանգ Վեցերորդին,- ըսաւ զօրավարը:

-Վրաստանի թագաւորի՞ն... մե՞նք,- զարմացած հարցուց Մերին:

Զօրավարը տարօրինակ հայեացքով նայեցաւ ընկերներուն.

-Ինձի ըսած են, որ սուրհանդակս ճանապարհին սպաննուելէն առաջ այդ նամակը փոխանցած է կողքի գիւղէն հինգ ընկերներու ու բացատրած, թէ ինչպէս պետք է նամակը տեղ հասցնեն:

-Բայց այդ ընկերները մենք չենք,- ժխտեց Մայքը:

-Յետոյ այդ նամակը ինչպե՞ս մեկուն ձեռքը, յայտնուեցաւ դաւաճանի մը քով եւ մեր զօրքերու տեղաբաշխման մասին իմացան ջեւանշիր ցեղի խուժաններն ու հիմա անոնք կու գան դէպի մեր սահմանները: Ես պետք է գիտնամ, թէ ով է այդ դաւաճանը,- ըսաւ զօրավարը:

-Մենք այդ բոլորին հետ կապ չունինք, բայց...,- փորձեց խօսիլ ժագը:

-Լսեցէ՛ք, հերի՛ք է, հասկցէ՛ք՝ ասիկա շատ կարելոր է մեր երկրի անվտանգութեան համար, կը հասկնա՞ք, թէ չէ...

Չօրավարը դեռ չէր հասցուցած աւարտել իր խօսքը, երբ շնչակտուր ներս մտաւ զինուորական մը.

-Բե՛կ... անոնք արդէն մօտեցա՛ծ են...

-Բե՛կ,- զարմացած կրկնեց Իշխանը եւ հիացած նայեցաւ զօրավարի կողմը,- լսեցի՞՞ք՝ ըսաւ Բեկ. ան Դաւիթ Բե՛կն է:

Լուրը ստանալուն պէս Դաւիթ Բեկը արագ դուրս վազեց: Ընկերները եւս վազեցին անոր ետեւէն: Բակին մէջ բազմահազարանոց զօրքն էր, որուն առջեւ յաղթանդամ ու ազդեցիկ զինուորական մը կեցած էր:

-Ես... ես յիշեցի՛, թէ ով է այս մարդը. հաւատա՛լս չի գար, ան Միսիթար Սպարապետն է: Եթէ մեզի հետ գրուցողը Դաւիթ Բեկն էր, ուրեմն բակին մէջն ալ Միսիթար սպարապետն է: Աստուա՛ծ իմ, մենք կը գտնուինք... ասիկա ո՞ր դարն է, գիտունի՛կ,- դիմեց Մերին Իշխանին:

-Կարծեմ՝ տասնութերորդ դարն է, այո՛, եւ հիմա Սիւնիքի մէջ ենք. ասիկա անհաւատալի՛ է,- բացականչեց Իշխանը:

-Ի զէ՛ն, ի մաա՛րտ, քաջե՛ր, առաա՛ջ, դէպի՛ յաղթանակ,- լսուեցաւ Դաւիթ Բեկի խրոխտ ու ոգեւորիչ ձայնը:

Ապա, Բեկը հեծաւ իր ձին ու քամիի արագութեամբ սուրաց, իսկ անոր ետեւէն սուրերը օդին

մէջ ճօճելով, հնչեղ մարտակոչով սլացաւ զօրքը:

Ընկերները զարմացած կը հետեւէին այս տեսարանին, մինչեւ բոլոր զինուորները անցան:

-Եւ ի՞նչ,- հարցուց Մայքը:

-Կարծեմ՝ պէտք է գտնենք այդ նամակն ու դաւաճանը,- առաջարկեց Ժագը:

-Բայց մենք ինչպե՞ս կրնանք գիտնալ, թէ ով է դաւաճանը,- ընկերներուն հարցուց Մերին:

-Մենք չենք կրնար գիտնալ, բայց Իշխանը կը գիտնայ. չէ՞, Իշխան,- դառնալով վերջինին՝ հարցուց Աննան:

-Չէ՛, իսկապէս չեմ գիտեր:

-Ի՞նչ կը նշանակէ՝ չեմ գիտեր,- զայրացած ըսաւ Մայքը.- այսինքն մենք այստե՞ղ պիտի մնանք:

Նոյն պահուն լսուեցաւ Իշխանի գրպանին մէջ գտնուող հեռաձայնին ձայնը:

Իշխանը արագ կարդաց հաղորդագրութիւնը. «Դուք ունիք յուշման ընդամենը մէկ հնարաւորութիւն եւ մի՛ մոռնաք՝ ձեզի մնաց ընդամենը երկու ժամ»:

-Եւ ի՞նչ է այդ հնարաւորութիւնը,- հարցուց Ժագը:



-Կարծեմ՝ համացանցի միջոցով պետք է գիտնանք, թե ով էր այդ ժամանակուայ դաւաճանը,- ըսաւ Իշխանը եւ սկսաւ գրել այդ պահուն հրաշքով յայտնուած համացանցի որոնողական բաժնին մէջ: Բոլորը լարուած կը սպասէին՝ ուշադրութեամբ հետեւելով Իշխանին:

-Չեմ հասկնար,- շփոթած՝ ըսաւ Իշխան,- այստեղ դաւաճաններու մասին բան չկայ:

-Իշխան, հաճիի՛ս, արագ գտիր. ես չեմ ուզեր ամբողջ կեանքս այստեղ մնալ,- աղաչեց Աննան:

-Մենք շատ քիչ ժամանակ ունինք. տո՛ւր այստեղ հեռաձայնդ, ես կը գտնեմ,- զայրացած ըսաւ Մայքը եւ Իշխանի ձեռքէն փորձեց խլել հեռաձայնը: Երբ Իշխանը ետ քաշեց զայն, իսկ Մայքը նորէն փորձեց խլել, յանկարծ հեռաձայնը անոր ձեռքէն գետին ինկաւ ու անջատուեցաւ:

-Ի՞նչ ըրիր,- բարկացած ըսաւ Մերին Մայքին:

-Կոտրուեցա՛մ,- հարցուց ժազը՝ ջղայնացած նայելով Մայքին:

-Բայց ես չէի ուզեր կոտրել,- կմկմալով ըսաւ Մայքը:

-Չէ կոտրուած, բայց անջատուած է. վերջ, կորսնցուցինք մեր միակ հնարաւորութիւնը: Եւ քո՛ւ պատճառովդ, քո՛ւ, քո՛ւ...,- պոռալով ըսաւ Աննան Մայքին:

-Յամաձայն եմ Աննայի հետ՝ մեղաւորը Մայքն է,- ըսաւ ժազը:

-Մելիք Բաղրին...- ընկերներուն խօսակցութիւնը խորհրդաւոր ձայնով ընդհատեց Իշխանը,- ես հասցուցի կարդալ այսպիսի տողեր՝ «Յաւատուրաց Մելիք Բաղր... ամբողջ՝ Տաթեւի մօտ»:

Աննան ուրախացած գրկեց Իշխանը ու սեղմեց կուրծքին՝ գոչելով.

-Ապրի՛ս, ապրի՛ս: Երթանք Տաթեւ:

-Մէկ վայրկեան, նախ մենք չենք գիտեր, թէ ուր ենք հիմա, եւ յետոյ՝ ուր ալ ըլլանք, եթէ խօսքը Տաթեւի վանքի մասին է, ուրեմն այնտեղ հասնելու եւ ետ գալու համար երկու ժամ չէ, այլ մի քանի երկու ժամ պետք է,- ըսաւ Իշխանը:

Միւսները շփոթած նայեցան իրարու:

-Ես հիմա կը գիտնամ, թե մենք ուր կը գտնուինք,- ըսաւ Մերին ու վազելով ներս մտաւ Դաւիթ Բեկի վրանը:

-Մերի՛, չէ՛, պէտք չէ՛, Մերի՛,- անոր տեւէն պոռաց ժագը, բայց արդէն ուշ էր. Մերին ներս մտած էր: Քիչ մը հեռուէն ձայներ լսուեցան: Ընկերները շատ լարուեցան. դէպի Բեկի վրան կ'ուղղուէին երեք զինուած մարդիկ:

-Պահուըտեցէ՛ք, արագ,- կարգադրեց Մայքը:

Ընկերները արագ ենթարկուեցան:

-Հապա Մերի՛ն, անոնք մտան վրանը, Աստուած իմ, ի՞նչ պիտի ըլլայ հիմա,- սարսափահար ըսաւ Աննան:

-Պէտք է ներս մտնել ու փրկել Մերին,- առաջարկեց ժագը:

-Սպասեցէ՛ք, արդէն ո՛ւշ է, չենք կրնար,- յուսահատ ըսաւ Մայքը:

-Ես կ'երթամ,- համարձակ ըսաւ Իշխանը եւ փորձեց դուրս ելլել թաքստոցէն, բայց Մայքը քաշեց զինք եւ Իշխանը երեսնիվար ինկաւ գետին:

Մէյ մըն ալ անսպասելի յայտնուեցաւ Մերին.

-Մենք կը գտնուինք Շինուհայր աւանի մէջ: Այդ մարդիկ կը խօսէին, քարտեզին կը նայէին: Ի դէպ, մեր Դաւիթ Բեկը հիմա լա՛ւ ջարդ կու տայ այդ ջեւանշիրներուն:

-Բայց դուն...,- զարմացած փորձեց խօսիլ ժագը:

-Ես մարդիկ եմ, մի՛ մոռնաք, անոր համար ալ կրցայ աննկատ դուրս փախչիլ,- ըսաւ Մերին:

-Տաթե՛ւ պիտի երթանք: Մայքը լրջանալով հարցուց.

-Շա՛տ հեռու է,- ըսաւ Մերին,- տեղը տեսած եմ քարտեզի վրայ... չենք կրնար, Մայք:

-Մէկ ու կէս ժամ մնաց,- մտահոգ ըսաւ Մայքը.- սրընթաց շոգեկառքի պէտք ունինք կա՛մ օդանաւ, կա՛մ թռչող գորգ, եւ քանի որ այդ ամէնը չկայ....

Սակայն Մայքի խօսքը կիսատ մնաց բերնիկի մեջ, երբ անոնց մեջտեղէն տեղէ մը սուրալով նետ մը եկաւ եւ հողին մէջ խրուեցաւ:

Ընկերները ետ քաշուեցան:

-Մեզ կը նետահարե՞ն: Արագ պահուըտեցէք,- պոռաց ժագը:

-Չէ՛, սպասեցէ՛ք, չեմ կարծեր, որ այդպէս է,- հանդարտեցուց Իշխանը եւ մօտենալով նետին՝ սկսաւ զննել զայն.- ասիկա շատ հին նետ է՝ աւելի հին, քան այն ժամանակները, որ մենք հիմա կը գտնուինք:

-Բայց ինչպե՞ս գիտցար, կամ ատիկա ի՞նչ կապ ունի,- հարցուց Մայքը Իշխանին:

-Մայք, այս նետը մեզի որպէս օգնութիւն դրկուած է,- բացատրեց գիտունիկը՝ դառնալով միւսներուն,- նայեցէ՛ք, անիկա երեք թել ունի, իսկ ծայրն ալ երկաթ է, որմէ ես հասկցայ, թէ ասիկա որո՞ւն նետը կրնայ ըլլալ. կարծեմ՝ իւրաքանչիւր հայ պարտաւոր է ատիկա գիտնալ:

Բոլորը պահ մը նայեցան նետին, ապա նայեցան իրարու եւ ամէն ինչ հասկցած՝ գրեթէ միաձայն՝ բացականչեցին.

-Մեր նախահօր՝ Յայկի նե՛տը, որմով ան խոցեց Բելը:

Ըսելէն ետք ուրախացած ծափահարեցին իրենք իրենց:

Ժագը հողէն հանեց նետը ու ըսաւ.

-Եւ ասով ի՞նչ պիտի ընենք:

-Եթէ այս պահուն անհրաժեշտ է նետի պէս սլանալ Տաթել եւ մեզի ուղարկուած է մեր Նահապետի՝ գերբնական յատկութիւններով օժտուած նետը, կը նշանակէ անիկա պէտք է մեզի տեղ հասցնէ,- իր յայտնագործութենէն ուրախացած՝ ըսաւ Մերին:

-Հապա ինչո՞ւ տեղ չի հասցներ,- անհամբեր հարցուց ժագը:

-Ուրեմն պէտք է բան մը ընենք կամ հասկնանք, որ նետը գործէ,- ըսաւ Իշխանը:

-Եկէ՛ք յիշենք Յայկի ու Բելի մարտը. ի՞նչ իւրայատուկ բան ըրած էր Յայկը,- հարցուց Աննան միւսներուն:

-Անոր նետը ճեղքած է Բելի բոլոր զրահներն ու մարմինը,- ըսաւ Մայքը:

-Ուրի՞շ,- հարցուց Աննան:

-Ես գիտե՛մ, յիշեցի՛,- ըսաւ Ժագը:

-Ըսէ՛, Ժա՛գ, շո՛ւտ, մենք ժամանակ չունի՛նք,- ըսաւ Մերին:

-Խորենացին իր «Յայոց պատմութեան» մէջ կը նկարագրէ, թէ մարտէն առաջ Յայկը ինչպէս դասաւորած է իր բանակը: Ան իր զօրքը կանգնեցուցած է եռանկիւնաձեւ: Չօրաշարքի այս ձեւը հնագոյններէն է համաշխարհային ռազմարուեստի պատմութեան մէջ: Յետագային՝ վաղ միջնադարուն, մարտի ժամանակ զօրքերու դասաւորութեան այդ ձեւը կիրառեցին ֆրանկները եւ մեծ յաջողութիւններու հասան:

-Ապրի՛ս, կեցցե՛ս, Ժա՛գ,- բացականչեց Աննան եւ հրամայեց. -արա՛գ, եռանկիւնաձեւ կեցէ՛ք եւ բռնեցէ՛ք նետը, ամո՛ւր բռնուեցէք:

Աննայի հրամանէն ետք բոլորը կեցան եռանկիւնաձեւ, ամուր բռնեցին նետը եւ սպասման մէջ գոցեցին իրենց աչքերը: Յանկարծ կարծես փոթորիկ բարձրանար: Ընկերները ճչացին եւ յաջորդ վայրկեանին արդէն կը սաւառնէին երկնքի մէջ:

-Աստուա՛ծ իմ, մենք երկնքի մէջ ե՛նք,- երանութեամբ բացականչեց Մերին:

-Մենք կը սլանա՛նք,- երանութեամբ ըսաւ Աննան:

-Աի՛րի... ի՛նչ լաւ է,- ըսաւ Ժագը,- կ'ուզէի՛ միշտ այսպէս սաւառնիլ:

-Իսկ եթէ յանկարծ նետը ձգեմ, ի՞նչ կ'ըլլայ,- հարցուց Մերին:

-Չզէ՛ տեսնենք. Ինձի համար ալ շատ հետաքրքրական է,- ժպտալով ըսաւ Ժագը:

-Չէ՛, չէ՛, խենթացա՛ր, այդպէս բան չընե՛ս,- սաստեց Մայքը:

-Վար նայեց՛ք, ինչպիսի՛ գեղեցկութիւն՝ Տաթե՛ւն է,- հիացած բացականչեց Աննան:

-Կ'իջնե՛նք... զգո՛յ՛ջ, ուշադի՛ր, հիմա կ'իյնանք ծառերու վրայ,- պռռաց Մայքը, վայրէջքի պահուն:

* * *

Ընկերները դանդաղ ու անաղմուկ մտան բերդ, քալեցին դեպի այն սենեակը, ուրկէ թոյլ լոյս մը կ'երեւէր: Հասնելով դռներուն քով՝ անոնք յանկարծ կանգ առին. ներսը լսելի էր երկու հոգիի խօսակցութիւն:

-Դաւիթ Բեկը կ'ուզէ միաւորել հայկական ուժերը. մենք պէ՛տք չէ թոյլ տանք, կը լսե՛ս, Մելիք Բաղը,- կ'ըսէր խռպոտ ձայնով մէկը:

-Գիտեմ, բայց նման բան ընելու համար ան նախ պէտք գրաւէ այս ամրոցը եւ սպաննե՛ գիս: Իսկ ան չի կրնար այդ մէկը ընել, որովհետեւ չի գիտեր իմ մասին: Դաւիթ Բեկն ու Միսիթար Սպարապետը կը կարծեն, որ ես իրենց բարեկամն եմ...,- ըսաւ այն մարդը, զոր զրուցակիցը մելիք Բաղը կոչեց:

-Ափսոսանքո՛վ ըսիր, Մելի՛ք: Անոնք չե՛ն գիտեր, որ դուն հաւատուրաց ես,- Մելիքին հարցուց խռպոտ ձայնով տղամարդը:

-Անոնք նոյնիսկ չեն գիտեր, որ թագաւորին ուղարկուած իրենց նամակը իրականութեան մէջ քովս է,- քմծիծաղով ըսաւ Մելիքը:

Իշխանը դարձաւ դեպի ընկերները.

-Գացի՛նք, արագ. մենք պէտք է այս մասին յայտնենք Դաւիթ Բեկին: Ահա՛, թէ ո՛վ է դաւաճանը: Ընկերները անմիջապէս վազեցին:

-Դրան ետեւէն այս ի՞նչ ձայներ կը լսուին,- պռռաց Մելիքը,- ո՛րը էք, դնապաններ, արագ բռնեց՛ք զիրենք, ամրոցին մէջ օտար մարդի՛կ կան:

Ընկերները կը շարունակէին շնչակտուր վազել, իսկ անոնց ետեւէն կը վազէին Մելիքի զինուած մարդիկ:

-Արագ...Աննա՛, տո՛ւր ձեռքդ, ժա՛գ, դուն Մերիի՛ն օգնէ,- ըսաւ Մայքը:

-Կը հասնի՞րն, վազեցէ՛ք, աւելի արագ, -կը պոռար Իշխանը, -վաաա՛յ, առնէ՛տ...

Յանկարծ Իշխանը սայթաքեցաւ եւ անոր ակնոցը բաւական հեռու ինկաւ: Ուր որ է զինուած մարդիկ պիտի հասնէին Իշխանին: Ընկերները անմիջապէս կանգ առին:

-Պետք է երթանք, փրկենք Իշխանը. հիմա զիկք կը բռնեն,- առաջարկեց Ժազը:

-Բայց եթէ երթանք մեզի ալ կը բռնեն,- ըսաւ Մայքը:

-Ես հիմա բան մը կ'ընեմ. ես շատ արագ կը վազեմ,- ըսաւ Մերին ու սլացաւ դէպի Իշխանը:

Հասնելով Իշխանին՝ Մերին զիկք բարձրացուց գետնէն:

-Ակնո՛ցս, Մերի՛,- տխուր ձայնով ըսաւ Իշխանը,- ես առանց ակնոցի չեմ կրնար:

Մերին բացատրեց իրավիճակը.

-Լսէ՛, անոնք կը հասնին մեր ետեւէն, ակնոցդ թող մնայ:

Իշխանը պնդեց.

-Չէ՛, չեմ կրնար, բան չեմ տեսներ:

Մերին խնդրեց.

-Իշխան, հաճի՛ս, թող ակնոցդ մնայ. անոնք արդէն կը հասնին մեզի:

Եւ իսկապէս, հետապնդողները արդէն մօտեցան.

-Կեցէ՛ք, ովքե՛ր էք... դարձէ՛ք այս կողմ:

Իշխանն ու Մերին սարսափահար ետ նայեցան. անոնց դիմաց կեցած էին սուրերով զինուած բարձրահասակ մարդիկ: Ամրոցի մուտք միջանցքին մէջ տղամարդիկ ա՛լ աւելի զարհուրելի տեսք ունէին:

Չինուած մարդիկ սուրերը պարզեցին դէպի Մերին ու Իշխանը:

-Ովքե՞ր էք, ինչո՞ւ յայտնուած էք այստեղ: Յառաջացէ՛ք, գացի՛նք,- հրամայեց մարդոցմէ մէկը:

-Ո՛չ, հաճի՛ս, մենք պատահաբար յայտնուեցանք, հիմա՛, անմիջապէս կը հեռանանք, - խոստացաւ Մերին:

-Դեպի բանտախո՛ւց, այնտեղ ալ կը պարզենք՝ ով ինչի համար յայտնուած է,- ըսաւ նոյն ազդու ձայնով տղամարդը եւ նշան տուաւ միւս զինեալներուն, որ բռնեն Մերին ու հշխանը:

Երբ կոպտօրէն բռնեցին ընկերներուն ձեռքերէն, նոյն պահուն միջանցքի միւս ծայրէն հեռաձայններու լապտերներու շլացնող լոյսեր ուղղուեցան անոնց աչքերուն:

Վերջիններս յանկարծ իրար խառնուեցան, սկսան ձեռքերով գոցել իրենց աչքերը՝ պոռալով.

-Այս ի՞նչ է, ի՞նչ լոյս է...

-Վազէ՛, հշխան՛, վազէ՛, ես գտած եմ ակնոցդ,- բացականչեց Մերին:

Իշխանն ու Մերին արագ վազեցին դեպի գիրենք փրկած ընկերները:

* * *

-Մեզի ընդամենը մի քանի վայրկեան ժամանակ մնաց,- երկնքէն վար նայելով ըսաւ Աննան,- պէտք է շուտ գտնենք կամ Դաւիթ Բեկը, կամ Մխիթար սպարապետը:

-Ես կը տեսնե՛մ զինք, նայեցէ՛ք, այն կողմ, ինքն է, մեր Բեկը ինչ յոգնած է,- ըսաւ Իշխանը,- ես երջանիկ եմ, որ տեսայ զինք՝ մեր խիզախ ու անվեհեր զօրավարը:

Շատ չանցած՝ ընկերները վայրէջք կատարեցին Դաւիթ Բեկէն ոչ հեռու եւ արագ մօտեցան անոր:

-Դաւիթ Բե՛կ, զօրավա՛ր, մէկ վայրկեան կը տրամադրե՛ք մեզի, մենք շատ կարեւոր բան ունինք ըսելու,- ժազը դիմեց զօրավարին:

Բեկը սպասողական հայեացքով նայեցաւ անոնց ու ըսաւ.

-Ըսէ՞ք, կը լսեմ:

Ժազը անմիջապէս գեկուցեց իմացածը եւ անելուց.

-Անոնք կ'ուզեն խանգարել հայկական ընդհանուր եւ միացեալ բանակ ստեղծելու ձեր ծրագիրը: Իսկ այդ նամակը, որ Դուք ուղարկած էիք վրաց արքային, անոնց քովն է:

-Ես այդպէս ալ կը կասկածեի... Մխիթար սպարապետ, մօտեցէ՞ք, պատրաստեցէ՞ք զինուորները. մենք կ'երթանք դէպի Տաթեւ,- հրամայեց Բեկն ու առանց դառնալու ընկերներուն կողմը՝ հարցուց անոնց,- իսկ դուք ուրկէ՞ գիտցաք այս բոլորին մասին:

Պատասխան չստանալով՝ զօրավարը դարձաւ դէպի ընկերները, բայց անոնք այլեւս այնտեղ չէին: Չօրավարը, զարմացած նայելով շուրջը, ըսաւ.

-Այ քեզ հրաւճե՞ք... Աստուծոյ հրեշտակներն էին, ինչ է...

* * *

-Դաւիթ Բեկն ալ տեսանք: Երբ վերադառնանք ԱՄՆ, անունս պիտի փոխեմ ու դարձնեմ Դաւիթ,- հպարտօրէն ըսաւ Մայքըլ՝ ամբողջ մտնելու ժամանակ:

Յանկարծ լսուեցաւ ծանօթ ծերունիին ձայնը.

«Հայկական ուժերը միաւորելու գործին մեջ կարելոր նշանակութիւն ունեցաւ հաւատուրաց մելիք Բաղրին ենթակայ՝ Տաթեւի մօտ գտնուող ամրոցի գրաւումը:

Այս իրադարձութիւններէն ետք, Տաթեւը դարձաւ Դաւիթ Բեկի նստավայրը»:

-Դաւիթ-Բեկի, Մխիթար սպարապետի, բազում նշանաւոր իշխաններու շնորհիւ, Տասնութերորդ դարը եղաւ ազգային-ազատագրական պայքարի մեր պատմութեան փառահեղ էջերէն մէկը: Տեսա՞ք, թէ ինչպէս թշնամին սարսափեցաւ, դաւաճանութիւնն ու ստորութիւնը ինչպէս տեղի տուին խոհեմութեան, ուժին, հայրենասիրական մղումներուն եւ ձգտումներուն, երբ թշնամին կը տեսնէ մեր միասնական ազգային բռունցքը, կը սարսափի. միասնութիւնը ո՛ւժ է եւ բոլոր յաղթանակներուն գրաւականը...

...Լեռը անօրինակ դողդիւնով կը ցնցուէր. Կարծես ուր որ է մէջտեղէն պիտի ճեղքուի եւ իր ցիրուցան եղած բեկորներով ոչնչացնէ զինք շրջապատող ամէն ինչ. փոշիի ամպը պսակի պէս կախուած էր լեռան գլխուն եւ շուրջը գրեթէ բան չէր երեւեր: Վարէն արձակուած արկերը կը մխրճուէին, կը ծակէին լեռան կուրծքը, որուն հետեւանքով հսկայ լեռը վիրաւոր գազանի նման կը դառնար առաւել կատաղի եւ վիթխարի ժայռաբեկորներ կը նետէր վար:

Լեռան ծոցին ապաստան գտած էին մօտակայ վեց հայկական գիւղերու՝ Զեպուսիէի, Վաքֆի, Խտրպեկի, Եօղունօլուխի, Յաճի Յապապլիի, Պիթիասի տարաբախտ հայերուն մեծ մասը, որոնք ուխտած էին կռուիլ մինչեւ արեան վերջին կաթիլը եւ չյանձնուիլ թշնամիին: Թշնամիի 9000-ի հասնող կանոնաւոր բանակը կը կռուէր շուրջ 600 ռազմիկներու դէմ: Կանայք ու ընկերները տեղակայուած էին վրաններու մէջ եւ ըստ անհրաժեշտութեան կ'օգնէին կռուողներուն:

Թնդանօթներու համազարկերը աստիճանաբար կը սաստկանային, բայց պատասխանը չէր ուշանար. ոմանք կը կրակէին ինքնաշէն զէնքերով, ոմանք քարաբեկորներ կը գլորէին թշնամիի գլխուն... աղմուկ, աղաղակ, արիւն ու կրակ, ուժգին, բարձրագոյ ձայներ, քաջաբար դիմակայելու հրամաններ, վիրաւորներու եւ մահացողներու խուլ տնքոցներ, կանանց ճիչ ու վայնասուն, ընկերներու լաց ու կոծ...

Մեր հերոսները տագնապած ու զարմանքով ականատես կ'ըլլային այս բոլորին:

-Այս ի՞նչ կը կատարուի, Աստուած իմ,- բացականչեց Մերին,- կարծես երկինքն ու երկիրը խառնուած են իրարու. Կարծես աշխարհը կը կործանուի:



Ժազը մատնացոյց ըրաւ լերան վարի հատուածը եւ պոռաց.

-Տես՛ք, վարէն կը կրակեն... ինչքան թնդանօթներ կան այնտեղ:

-Սպասեցէ՛ք... մենք հիմա Մասիսի կատարի՞ն ենք, չեմ հասկնար,- շփոթած հարցուց Մայքը:
Իշխանը իր սովորոյթին համաձայն շուրջը ուսումնասիրեց եւ հեռուն ջրային տարածութիւն մը նկատելով՝ դիմեց ընկերներուն.

-Այն կողմէն ծովը կ'երեւի... Աստուած իմ... Միջերկրական ծո՞վն է. Մէկ վայրկեան... եթէ Միջերկրական ծովն է, ուրեմն մենք այս պահուն հաւանաբար՝ Մուսայ Լերան գագաթին ենք... պետք է պարզել,- կզակը շոյելով՝ ըսաւ Իշխանը:

-1915 թուական, Օգոստոս-Սեպտեմբեր. հերոսամարտը այս թուականին եղած է ու տեւած 40 օր. ես կարդացած եմ անստրիացի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսայ Լերան քառասուն օրը» գիրքը եւ ան ալ ինչպիսի՛ հետաքրքրութեամբ,- կարդացածը կարծես վերյիշելով՝ ըսաւ Աննան:

Սօսակայքէն զինուած ֆետայի մը անցաւ: Իշխանը հարցուց անոր.

-Կը ներեք, ասիկա Մուսայ Լե՞ռն է:

-Մէկ կո՛ղմ քաշուիր, տղայ,- կոպտօրէն պատասխանեց մարդը եւ արագ յառաջացաւ, բայց յանկարծ մէկ անգամէն ետ դարձաւ, գէնքը ուղղելով Իշխանին ու միւսներուն ըսաւ.

-Բոլորիդ ձեռքերը վե՛ր... առջեւէս քալեցէք:

Ընկերները սարսափած ենթարկուեցան վերջինիս կարգադրութեան:

Լերան շուրջը ստեղծուած լարուած իրավիճակը համեմատաբար հանգստացաւ. Մերթ ընդ մերթ կը լսուէին միայն խուկ կրակոցներ:

Ֆետային ընկերները տարաւ փոքրիկ վրան մը, ուր 4-5 զինուորական նստած կը խորհրդակցէին: Անոնք բաւական ազդեցիկ տեսք ունէին իրենց ֆիտայական հագուուստներով:

-Յետախոյզներ բռնած եմ... հարցուփորձ կ'ընէին,- հպարտութեամբ ըսաւ անձանօթ մարդը:

Մեջտեղ նստած տղամարդը ձեռքով նշան ըրաւ եւ զինուած ֆետային իջեցուց գէնքը:

-Բայց մենք... մենք...,- փորձեց խօսիլ Մայքը:

-Լռ՛ւ՛,- պոռագ ներկաներէն մէկը:

-Ասոնց ո՛ւր գտար, Պետրո՛ւս,- հարցուց նստածներէն ուրիշ մը:

-Մեծ քարափի կողմերն էին... կ'երեւի եկած էին տեղը ուսումնասիրելու... այս փոքրիկը հարցուփորձ ըրաւ,- զեկուցեց Պետրոսը՝ մատնացոյց ընելով Իշխանը:

-Բայց ասոնք փոքր են, Պետրո՛ւս... ասոնք չեն կրնար հետախոյզներ ըլլալ,- ըսաւ նստածներէն ուրիշ մը:

-Թշնամին ամէն ինչի ընդունակ է, Տիգրան, եւ հիմա ալ ընկերներու միջոցով կը փորձէ իր նենգ նպատակները իրագործել,- հակադարձեց Պետրոսը եւ խեթ-խեթ նայեցաւ ընկերներուն:

-Մենք հայեր ենք, եկած ենք այստեղ ձեզի օգնելու,- այլեւս չհամբերելով՝ ըսաւ Աննան:

-Ճիշտ կ'ըսէ. մենք հայ ենք...իմ անունս ժագ է:

-Իսկ իմս՝ Մայք,- ետ չմնաց Մայքը:

-Ես ձեզ կը ճանչնամ՝ դուք Մուսայ Լերան փառապանծ հայրորդիներն էք..., օրինակ դուք, որ նստած էք կեդրոնը, դիմադրական շարժման կազմակերպիչ Եսայի Եաղուպեանն էք, ձեզմէ աջ գտնուող մարդը՝ Տիգրան Անդրեասեանն է, իսկ մեզի այստեղ բերողը՝ Ֆետային Պետրոս Տմլաքեանն է, որ չձգեց մէկ բառ անգամ ըսեմ:

Ֆետայիները սկսան տարակուսանքով եւ կասկածով նայիլ ընկերներուն եւ զարմանալ անոնց այնքան բան գիտնալուն:

-Անոնք շատ լաւ հետախուզած են նաեւ մեզ,- ըսաւ Տմլաքեանը:

-Չէ՛, այդպէս չէ, ազնիւ խօսք, մենք կ'ուզենք օգնել ձեզի,- փորձեց բացատրել Մայքը:

Նոյն պահուն հզոր դղրդիւն մը լսուեցաւ վարէն եւ գրեթէ միաժամանակ հնչեց Եաղուպեանի ձայնը.
-Պառկիիիի՛լ...

Բոլորը մէկ անմիջապէս նետուեցան գետին. ժագը տազնապած նետուեցաւ դէպի Մերին եւ իր

մարմնով ծածկեց վերջինս: Մայքն ալ Աննան պաշտպանեց: Յանկարծ վրանը տեղէն ելաւ:

Երբ վտանգը անցաւ, ֆետայիները ոտքի ելան եւ սկսան արագ լիցքաւորել հրացանները:

-Տղա՛ք, առա՛ջ, իմ ետեւէ՛ս... մենք ասոնց պատասխանը պիտի տանք,- պոռագ Եաղուպեանը, որմէ ետք զինակիցները կազմ ու պատրաստ հետեւեցան անոր:

Տղաքը աղջիկները տեղաւորեցին վրաններէն մեկուն մէջ, այնտեղ ուր պատսպարուած էին կանայք ու ընկերները, իսկ իրենք գացին ֆետայիներուն հետ կռուելու:

Անոնք վազելով հասան Եաղուպեանի խումբին:

-Խմբապետ, մենք ալ կ'ուզենք կռուիլ,- դիմեց Մայքը Եաղուպեանին:

-Շուտ գացէ՛ք դեպի վրանները. այստեղ շատ վտանգաւոր է,- սաստեց Եաղուպեանը:

-Յաճի՛ս, զէնք տուր մեզի... մենք կ'ուզենք օգնել ձեզի,- խնդրեց Ժագը:

-Կը մեծնաք, կրակել կը սորվիք, իսկ հիմա գացէք այստեղէն, հոս մնալը վտանգաւոր է ձեզի համար,- բարի ժպիտով յորդորեց Եաղուպեանը:

Այդ պահուն Մայքը տարօրինակ բան սկատեց եւ ճարպիկ շարժումով մը իլեց ֆետայիներէն մեկուն զէնքը՝ կրակեց ժայռաբեկորներէն մեկուն ուղղութեամբ: Կրակելուն պէս՝ մեկը ոռնալով գլորեցաւ վար՝ դեպի անդունդ:

-Շեշտակի կրակոց... բայց ինչպէ՛ս հասցուցիր զինք սկատել,- զարմացած հարցուց Եաղուպեանը Մայքին:

-Ձեզի հետ խօսելու ընթացքին ես հեռուն սեւ բան սկատեցի, յետոյ ուշադիր նայելով հասկցայ, որ անիկա մարդկային զլուխ է, քանի որ սկսաւ զգոյշ շարժիլ, իսկ երբ քիչ մըն ալ յառաջացաւ ու ձեռքը դրաւ ձգանին՝ նշանառելով ձեզ, հասկցայ, որ ան թշնամի է:

-Ապրիս, տղա՛ս, փաստօրէն լաւ ալ դիպուկ կը կրակես, աչքդ ալ սուր է,- ըսաւ Եաղուպեանը Մայքին:

-Չէ՛, դուն իրօք հետախոյզ ես, ճիշտ կռահած էի,- կատակեց Տմլաքեանը, որմէ ետք ներկաները սկսան միաբերան խնդալ:

-Այո՛, Տմլաքեան, իրենք իսկապէս հետախոյզներ են, բայց մէր հետախոյզները. տեսա՞ր, թէ ինչպէս այս տղան իր արծուային սուր աչքերով նկատեց թշնամին,- ըսաւ Եաղուպեանը՝ նայելով Մայքին:

-Ընկերներս նոյնպէս լաւ հրածիգներ են,- ըսաւ Մայքը, որ հիացած կը նայէր Եաղուպեանին: Վերջինս ձեռքը մտերմաբար դրաւ անոր ուսին եւ ըսաւ.

-Տղա՛ս, հակառակ անոր, որ ֆետայիները սովորութիւն չունին իրարու շնորհակալութիւն յայտնելու, բայց ես բացառութիւն կ'ընեմ քեզի համար. շնորհակալ էմ:

Մայքը զգացուեցաւ ֆետայիի այս խօսքերէն եւ ամուր սեղմեց վերջինիս ձեռքը:

-Փաստօրէն թուրքը կրցած էր աննկատ լեռ բարձրանալ,- ըսաւ Անդրեասը:

-Այո՛, եւ արկի կրակոցը, որ մեր վրայ ինկաւ, պատահական չէր. առիթէն օգտուելով՝ դաւադիր լրտեսներ դրկեցին հոս. զգո՛յշ եղէք, իսկ այս տղաներուն զէնքեր բաժնեցէք:

-Տղանէ՛ր. այսօր կ'ըլլայ ձեր մարտական մկրտութեան օրը,- ըսաւ Իսկէնտերեանը՝ զէնքերը բաժնելով:

-Բայց մենք շատ ճակատամարտերու մասնակցած ենք, գիտե՞ք... Տիգրան Մեծի, Վարդան Մամիկոնեանի հետ կռուած ենք,- հպարտանալով ըսաւ Ժագը, որմէ ետք բոլորը չհաւատալով՝ սկսան բարձրաձայն խնդալ:

Վարէն նորէն ձայն լսուեցաւ:

-Զօրքի տեղաշարժ կայ. թուրքերը նոր ուժեր կը կեդրոնացնեն,- մտահոգ ըսաւ Եաղուպեանը:

-Նախ մենք թշնամիի 5000 հոգիէ բաղկացած կանոնաւոր բանակը չախչախեցինք, յետոյ՝ 9000-ի. անոնցմէ հազարաւորները սպանուեցան, իսկ մեր 600-էն՝ քիչերը: Հիմա պետք է շարունակենք նոյն ոգիով ու նոյն քաջութեամբ կռուիլ, մանաւանդ որ արդէն մեզի միացած են եւս երեք քաջեր,- ոգեւորուած ըսաւ Իսկէնտերեանը:

Աղմուկը, մէկ անգամէն, վերածուեցաւ բուռն պատերազմական գործողութեան: Թշնամին սկսաւ

անկանոն կրակ արձակել լերան ուղղութեամբ. արկերը հզօր պայթիւնով կ'ինային լերան տարբեր կողմերը, փամփուշտները այս ու այն կողմ կը սուրային. թշնամին կը փորձեր ճեղքել հայերու պաշտպանութեան գիծը, բայց հզօր դիմադրութեան հանդիպելով եւ տալով մեծաթիւ զոհեր՝ կը նահանջէր:

Կատաղի ու յամառ մարտեր էին: Եաղուպեանը տարբեր խումբերու բաժնած էր իր ռազմիկները, որոնք պետք է կռուէին լերան տարբեր դիրքերէն եւ միաժամանակ ապահովէին անպաշտպան կանանց ու ընկերներուն անվտանգութիւնը: Մարտերը աւելի ու աւելի կը թեժանային: Յանկարծ վարէն արձակուած արկ մը ինկաւ վրաններու եւ հիւղակներու վրայ, այնտեղ ուր ապաստանած էին կանայք ու ընկերները, եւ ուժգին պայթեցաւ՝ աւերելով ողջ շրջակայքը:

Կռուող տղամարդիկ պահ մը քարացան:

-Մեր կանայք, մեր ընկերները՝ կրակի բաժին դարձան,- հագիւ կրցաւ արտաբերել Տիգրանը, որմէ ետք ֆետայիներու խումբ մը սկսաւ խենթի պէս վազել քանդուած վրաններուն կողմը, իսկ միւս խումբը հերոսաբար շարունակեց դիմադրութիւնը: Մայքը կը շարունակէր կռուիլ Եաղուպեանի խումբին հետ, իսկ Իշխանն ու Ժազը միւս խումբին հետ վազելով հասան ամայացած այն տարածքը, ուր քիչ առաջ կանգնեցուած էին վրաններն ու հիւղակները. Տարածքին մէջ կենդանի շունչ չկար: Անոնք յուսահատ հայեացքներով իրարու նայեցան:

Յանկարծ, անոնց առջեւ յայտնուեցան Աննան ու Մերին:

-Մենք ո՛ղջ ենք... չէ՛, աւելի ճիշդը մենք բոլորս ողջ ենք,- աւետեց Աննան:

-Հանգիստ եղէք. ձեր ընտանիքները այնտեղ են՝ լերան միւս կողմը՝ բաւական ապահով տեղ մը,- հանգստացուց Մերին եւ մատով ցոյց տուաւ անոնց գտնուելու վայրը:

Տղամարդիկ վազեցին դէպի նշուած վայրը, իսկ Ժազն ու Իշխանը մնացին աղջիկներուն քով:

-Այդ ինչպե՞ս տեղափոխուեցաք լերան հակառակ կողմը,- հարցուց Ժազը աղջիկներուն:

-Երբ մարտը դարձաւ շատ աւելի կատաղի, իսկ արկերը սկսան վրաններուն քով իյնալ, մենք հասկցանք, որ թշնամին թիրախաւորած է մեզ եւ վտանգը շատ մօտ է, ես ու Մերին արագ կազմակերպեցինք բոլորին տեղափոխութիւնը դէպի լերան անվտանգ կողմը,- պարզաբանեց Աննան:

-Այնպես չէ, որ միայն դուք կրնաք հերոսներ ըլլալ,- ժպտալով ըսաւ Մերին:

-Ապրի՛ք դուք,- ըսաւ Իշխանը աղջիկներուն եւ դարձաւ ժագին,- ժա՛գ, մենք ալ երթանք, իսկ դուք աղջիկներ գացէք միւսներուն քով:

* * *

...Երեք ժամ տեւող ծանր մարտերէն ետք թշնամին հասկցաւ, որ զէնքի ուժով լեռը գրաւելն ու հայերը հպատակեցնելը գրեթէ անհնար է. թշնամին ստիպուած փոխեց մարտավարութիւնը. 15.000 զօրքով շրջափակեց լեռը եւ որոշեց սովի մատնել լեռներուն մէջ ապաստանած հայերը:

Երբ լեռան վրայ յարաբերական անդորր էր, Եաղուպեանը զինակիցներուն հետ նստեցաւ խորհրդակցութեան: Նոյնիսկ յաղթական մարտէն ետք ան բաւական մտախոհ էր ու անտրամադիր: Երկար մտորելէն ետք՝ վերջապէս սկսաւ խօսիլ.

-Թշնամին որոշած է սեղմել օղակը եւ մեզ սովի մատնել. մեր պարէնը գրեթէ կը սպառի, փամփուշտները՝ նոյնպէս. երկար չենք կրնար դիմադրել. պետք է ելք գտնել: Ես երկար մտածեցի եւ որոշեցի մեր ընելիքը. մենք կը շարունակենք դիմադրողական պայքարը եւ անձնատուր չենք ըլլար, իսկ կանայք ու աղջիկները թող սաւաններէն կարմիր խաչերով ճերմակ դրօշակ գործեն ու ամրացնեն լեռան վրայ՝ «Քրիստոնեաները վտանգի մէջ են» գրութեամբ: Այս կողմերէն անցնող նաւերը գուցէ կը նկատեն: Միայն այդ ճանապարհով կրնանք փրկուիլ:

Կանանց յայտնեցին Եաղուպեանի յանձնարարականը, անոնք արագ անցան գործի: Պետք էր տեսնել, թէ Աննան ու Մերին ինչպիսի՛ եռանդով կ'օգնէին անոնց: Կարճ ժամանակ անց դրօշակը պատրաստ էր եւ տղամարդոց ուժերով ամրացուեցաւ լեռան վրայ՝ նաւերուն համար տեսանելի վայր մը:

Մեր հերոսներն ալ իրենց հերթին նստեցան խորհրդակցութեան:

-Այսպէս սպասելով բանի մը չենք հասնիր. իսկ եթէ նաւերը ուշանան, խեղճ ժողովուրդը կը կոտորուի. պետք է բան մը ընել,- ըսաւ Մայքը:

-Զմոռնանք նաեւ մեր ժամանակին մասին. շուտով կը սպառի,- յիշեցուց Մերին:

-Կարծեմ՝ պետք է ծով հասնինք, նաև գտնենք եւ արագ ուղղորդենք այստեղ. Կարծեմ այդ է մեր առաքելութիւնը,- ըսաւ Իշխանը:

-Բայց ինչպէ՛ս,- ըսաւ Ժագը:

Իշխանը յանկարծ վազեց, միւսներն ալ հետեւեցան անոր: Յետոյ բոլորով բան մը որոշեցին եւ սկսան կամաց, գաղտագողի լեռնէն իջնել՝ դէպի թշնամիի ճամբարը: Երբ բաւական մօտեցած էին ճամբարին, Իշխանը առանձնացաւ խումբէն եւ սողետող մօտեցաւ հրանօթներէն մէկուն, իսկ միւսները թուփերու մէջ պատսպարուած կը հետեւէին անոր: Յանկարծ Իշխանը ծոցէն սրուակ մը հանեց եւ վայրկենապէս մտաւ հրանօթի փողին մէջ: Մի քանի ակնթարթ ետք՝ ան ձեռքով նշան ըրաւ ընկերներուն, որոնք արագ մօտեցան Իշխանին եւ անոր օրինակով բարձրացան ու մտան փողին մէջ:

-Իշխան, հաստա՛տ անվտանգ ենք,- տագնապած հարցուց Աննան:

-Չաստատ... ես Մշոյ դաշտի մանանայ լեցուցած եմ արկին վրայ. մանանան՝ քաղցրահամ նիւթ է եւ աստուածային կերակուր կը համարուի: Ժողովուրդը զայն անուանած է «Սուրբ Կարապետի հալուա»՝ անոր զօրաւոր յատկութիւններ վերագրելով, հետեւաբար մեր անմահական մանանան պիտի չէզոքացնէ արկի վտանգը եւ արկը մեզի համար միայն փոխադրամիջոց պիտի ըլլայ,- ընկերները հանգստացնելով ըսաւ Իշխանը,- հիմա սպասենք, որ կրակեն:

-Յէ՛յ, դեռ ինչքա՛ն պիտի սպասենք,- դժգոհեցաւ Ժագը:

-Անկանոն ձայներ հանէ՛, Ժա՛գ. պետք է արագ շարժիւք,- յորդորեց Իշխանը:

Վերջինս փողի մէջէն սկսաւ տարօրինակ ձայներ հանել՝ թուրքերու ուշադրութիւնը գրաւելու:

-Սօտակայքին կեաւուրներ կան, փաշա՛,- լսուեցաւ թուրք զինուորներէն մէկուն ձայնը:

-Ապր՛ւշ... գնա՛ ու շո՛ւտ ոչնչացուր զիրենք... կրա՛կ,- պոռաց փաշան, որմէ ետք զինուորը եկաւ այն հրանօթին քով, որուն փողին մէջ տեղաւորուած էին մեր հերոսները, եւ կրակեց: Փողէն բոցեր արձակելով եւ ուժգին թափով դուրս թռաւ արկը՝ վրան նստած մեր հինգ հերոսներով:

Արկը անվտանգ էր, պայթուցիկ մասը՝ քայքայուած: Արձակուած արկը սկսաւ մեծ արագութեամբ սլանալ օդին մէջ:

-Կեցցե՛ք Իշխանը,- պոռագին ընկերները:

-Կապեցե՛ք ամրագօտիները՛, մենք կը թռչի՛նք,- կատակեց ժազը:

Ընկերները բացած էին իրենց թեւերը եւ հաճելիօրէն կը ճախրէին օդին մէջ՝ արկի վրայ նստած: Իսկ արկը ուժգնութեամբ անցաւ նաեւ լերան վրայէն եւ յայտնուեցաւ բաց ծովուն վրայ՝ սլանալով քամիի արագութեամբ: Այդ բոլորը այնքան հաճելի ճանապարհորդութիւն էր՝ ծովու եւ երկնքի միջեւ, որ մեր հերոսները չէին ուզեր աւարտի: Ողջ Միջերկրական ծովը թռչունի բարձրութենէն փռուած էր ընկերներուն առջեւ: Յանկարծ Աննան մատը պարզեց ու պոռաց.

-Նա՛ւ, նա՛ւ կը տեսնեմ... այնտե՛ղ է:

-Ասիկա «Գիշե՛նն» է՝ ֆրանսացիներուն նաւը,- նաւը ճանչնալով՝ ըսաւ Իշխանը,- պատրաստուեցե՛ք վայրէջքի:

Երբ գրեթէ նաւուն վրայ կը գտնուէին, ընկերները իրարու ձեռք բռնեցին եւ բաժնուելով արկէն՝ անոր վրայէն ուղիղ թռան նաւի տախտակամածին վրայ:



Երբ ընկերները ինկած տեղերէն ոտքի կեցան, անոնց մօտեցաւ օտար հագուկապով տղամարդ մը, հաւանաբար նաւապետը, եւ սկսաւ ֆրանսերէն բաներ հարցնել: Ընկերները չհասկցան, փորձեցին անգլերէն հաղորդակցիլ, բայց այս անգամ ալ նաւապետը չհասկցաւ: Բազում փորձութիւններ անցած մեր հերոսները արագ կողմնորոշուեցան: Անոնք անկանոն նետուեցան իրարու վրայ՝ ստեղծելով փոքրիկ բլուրի տպաւորութիւն, իսկ Մերին իր հագուստէն փոքրիկ ճերմակ երիզ կտրեց, թռաւ կազմուած «բլուրին» վրայ եւ երիզը ձեռքին սկսաւ թափահարել՝ նաւապետին հասկցնելով իրենց նպատակը: Նաւապետը գոհունակ ժպտաց եւ բուրձ մատով հաւանութեան նշան ըրաւ:

Յանկարծ նաւը, կարծես գերբնական ուժ ստացած, արագ ալիքները ճեղքելով՝ սկսաւ սուրայ: Մի քանի վայրկեանէն նաւապետը անձամբ իր աչքերով տեսաւ լերան վրայ ամրացուած ճերմակ դրօշակը:

-Նաւը՛, նաւը՛,- երջանկութենէն կը պոռային լերան բնակիչները: Մարդիկ, ընկերներու արարքէն անտեղեակ, այս ու այն կողմ վազելով կը փորձէին գրաւել նաւուն ուշադրութիւնը. շուտով նաւը մօտեցաւ լերան եւ խարիսխ նետեց մօտակայքը գտնուող ցամաքին:

Այս ընթացքին թուրքերը եւս մի քանի փորձ կատարեցին բռնի ուժով լեռը գրաւելու, բայց չյաջողեցան: Հայու ոգին անկոտորում էր: Խմբապետ Եաղուպեանը քայլերը ուղղեց դէպի նաւը: Ընկերները նաւէն իջան եւ վազելով գացին, միացան ժողովուրդին՝ համեստօրէն լռելով իրենց գործած սխրագործութեան մասին:

Կանայք, ընկերները, ռազմիկները եւ անոնց հետ մեր հերոսները անհամբեր կը սպասէին նաւէն վերադարձող Եաղուպեանին, որ գացած էր բանակցելու նաւու հրամանատարութեան հետ, թէ արդեօք իրենք պատրա՞ստ են տեղափոխելու լերան բնակիչները:

-Հրամանատար, բան մը ըսէք,- անհանգիստ ըսաւ Մերին այն պահուն, երբ Եաղուպեանը նոր մօտեցած էր իրենց:

-Համաձայնեցան... մենք իրենց հետ պիտի երթանք. Եգիպտոս կ'երթան՝ Փոր-Սայիտի կողմերը,- երջանկութենէն փայլող աչքերով գոչեց Եաղուպեանը, իսկ անոր խօսքերէն ետք երջանկութիւնը տիրեց բոլորին:

Մարդիկ լալով կ'ողջագուրուէին.

-Մենք փրկուա՛ծ ենք, կը բացականչէին բոլորը...

-Նախ կանայք ու ընկերները թող բարձրանան նաև,- հրահանգեց Եաղուպեանը,- յետոյ տղամարդիկ:

Շուտով եւս մի քանի նաւեր եկան կանգ առին «Գիշենի» կողքը եւ իրենք ալ պատրաստակամութիւն յայտնեցին ընդունելու փախստականները:

Ինչպէս ըսաւ Եաղուպեանը, նախ նաւ բարձրացան կանայք ու ընկերները: Մի քանի վայրկեանէն բոլորը արդէն տախտակամածին վրայ էին: Մեր հերոսները եւս բացառութիւն չէին: Նաւը բարձրացուց առագաստները եւ սկսաւ քամիին համընթաց դանդաղօրէն շարժիլ՝ հեռանալով ափէն: Մուսայ Լերան նայելով՝ Եաղուպեանը սկսաւ խօսիլ լերան հետ:

-Մնաս բարո՛վ, պապենական Կ'իլիկիա՛, մնաս բարո՛վ մեր Մուսայ Լեռ: Դուն մեր պաշտպանութեան վահանը եղար ու փրկեցիր մեզ. ամբողջ Արեւմտեան Հայստանի մեջ 1,5 միլիոն հայեր զոհուեցան, իսկ մենք փրկուեցանք...

-Ապրիլ 24-ին մեր մտաւորականները տարին Տեր-Չօրի անապատներ ու ջարդեցին... Վարուժանը՛, Սիամանթո՛ն, Ռուբէն Սեւակը՛ եւ անոնց պէս բազո՛ւմ-բազո՛ւմ հանճարներ, իսկ Կոմիտասը վիշտէն խելագարեցաւ. հայերը կոտորուեցան՝ Մուշի՛, Վանի՛, Սասունի՛, Ատանայի՛, ո՛րջ Կիլիկիոյ մեջ. բոլոր հայաբնակ վայրերը դարձան լուռ գերեզմաններ: Մեր վանքերը պղծուեցան, գիւղերն ու քաղաքները քանդեցին, ողջ երկիրը ամայացաւ. եղան նաեւ հերոսական դիմադրութիւններ, յիշե՛նք Չէյթունի եւ Սասունի գոյամարտերը, եղաւ ըմբոստ ազգային-ազատագրական պայքար՝ զօրեղ ու քաջարի ֆետայիներու գլխաւորութեամբ, բայց թշնամիի գերակշիռ ուժը ի վերջոյ յաղթանակեց. Օսմանեան Թուրքիոյ կողմէ որդեգրած հայաթափման ու հայերու բնաջնջման քաղաքականութիւնը կեանքի կոչուեցաւ: Թշնամիի գնդակէն, հուրէն ու սուրէն մազապուրծ եղած արեւմտահայերու բեկորները այսպէս սփռուեցան աշխարհով մէկ... մենք նոյնպէս այդ վերջին բեկորներէն ենք:

-Դուք բոլորդ հերոսներ էք, բոլորդ... ըսաւ Եագուպեանը

-Ընկերներ, մենք ժամանակ չունինք... բռնեցէ՛ք իրարու ձեռք, շո՛ւտ, շո՛ւտ, թռա՛նք,- ըսաւ Աննան:

Բոլորը արագօրէն ենթարկուեցան եւ անմիջապէս յայտնուեցան օդին մեջ:

-Յէ՛՛յ, այդ ո՞ւր,- անոնց ետեւէն կանչեց Տմլաքեանը:

-Մենք պետք է այդ թուրքերուն լա՛ւ դաս տանք,- լսուեցաւ ժագին ձայնը:

-Մնաց բարո՛վ, ձեզ բարի ճանապարհ,- պոռագին մեր հերոսները երկինքեն եւ անմիջապես անհետացան երկնային տարածութեան մէջ:

Նաւուն անձնակազմը ձեռքով յաջողութեան նշան ըրաւ անոնց:

-Այս ի՞նչ հրաշամանուկներ էին,- ըսաւ Տմլաքեանը:

-Հաւանաբար անոնք մեր պահապան հրեշտակներն էին եւ երկինքեն ուղարկուած էին, որ օգնեն մեզի,- եզրակացուց Եագուպեանը:

* * *

-Ընկերներ, հերոսական երա՛զ տեսայ,- փայլող աչքերով բացականչեց Ժազը ու շարունակեց,- իբր Նեմրուժ լեռան վրայ կատաղի կը կռուէի Աղբիւր Սերոբի ու Սօսէ մայրիկի կողքին, զօրավար Անդրանիկի 25-27 հոգիւնոց խումբի հետ յանկարծ յայտնուեցայ Մշոյ Սուրբ Առաքելոց վանքին մէջ, որ պաշարուած էր թուրք Ֆերիկ Ալի փաշայի զօրախումբին կողմէն: Բայց զօրավարի փայլուն գաղափարին շնորհիւ մենք յանկարծ գիշերով աննկատ, սպիտակ սաւաններով քողարկուած՝ ճեղքեցինք թշնամիի պաշարումը եւ հեռացանք...1901 թուականն էր... ի՞նչ երագ էր...

Աննան այդ պահուն եւս յիշեց իր երագը.

-Ընկերներ, ես նոյնպէս հերոսական երագ տեսայ. Գեորգ Չառւշը տեսայ, թէ ինչպէս իր խումբով քաջաբար կը կռուէր Սուլուխի կամուրջին մօտ՝ 1904 թուական էր, Մայիս 27: Մշոյ դաշտին ու Սասունի մէջ կռուող մեր միւս փառապանձ ֆետայիները թուրքերուն դէմ ջախջախիչ յաղթանակներ կը տանէին. Երագիս մէջ, առաջին հայդուկապետ Արաբոն էր, Մախլութօ զօրավարը, Սեբաստացի Սուրատը, Հրայր Դժոխքը, Նիկոլ Դումանը, Զեռին ու անթիւ-անհամար հերոս ֆետայիներ:

Մերին շնչակտուր միջամտեց.

-Ե՛ս ալ, ե՛ս ալ հայրենասիրական երագ տեսայ. սպարապետ Նժդեհը տեսայ, անոր մղած կռիւները թրքական գերակշիռ ուժերուն դէմ եւ, թէ ինչպէս ան 1919-1921 թուականներուն իր իսկ հռչակած Լեռնահայաստան-Սիւնիքի, Չանգեզուրի մէջ կը մարտնչէր խորհրդային կարմիր բանակին դէմ: Չմոռնանք, որ Նժդեհի շնորհիւ է, որ Սիւնիքը այսօր մեր հայրենիքին մաս կը կազմէ:

Մայքը զարմացած նայեցաւ ընկերներուն.

-Չէք հաւատար: Ես էլ Դրաստամատ Կանայեանը՝ մեր զօրավար Դրոն տեսայ: Երագիս մէջ Բաշ-Ապարանի հերոսամարտն էր, որ մղուած է 1918 թուականի Մայիս 23-27: Մեր ժողովուրդին համար՝ այդ օրհասական պահուն՝ Դրոն կրցաւ ջախջախել թշնամիի դէպի Երեւան ուղղուող 13 հազարանոց զօրքը:

Բոլորը զարմացած էին իրենց տեսած հերոսական դրուագներով լի երագներէն:

Իշխանը լսեց բոլորին ըսածները եւ հիացած բացականչեց.

-Աշխատեցա՛ւ:

-Ի՞նչը,- զարմացած Իշխանին հարցուցին ընկերները:

-Ծրագիրս,- ըսաւ փոքրիկ գիտունիկը ու ամէն ինչ պատմեց,- ես ձեր բարձերուն տակ ազգային, հայրենասիրական բովանդակութեամբ գիրքեր դրած եմ, որ դուք նոյնիսկ քնացած ժամանակ, երագի մէջ, շարունակէք տեսնել, ծանօթանալ մեր պատմութեան հերոսական դրուագներուն:

Ընկերները զարմացած իրարու նայեցան, ապա անմիջապէս բարձրացուցին իրենց բարձերը, որոնց տակ գտան «Ռանչպարներու կանչը», «Խոտետան», «Անդրանիկ», «Սպարապետ Նժդէհ», «Դրօ» հայրենասիրական գիրքերը, որոնց էջերուն մէջ կային անուշաբոյր ծաղիկներու թերթիկներ:

Ապա ամրոցը լուսաւորուեցաւ, եւ երեւեցաւ ծանօթ ծերունիին կերպարանքը:

-Մուսայ Լերան հերոսամարտը հայ ինքնապաշտպանական ռազմարուեստի փառահեղ օրինակ է: Գտնուելով շրջափակման, դժուարին ու անելանելի կացութեան մէջ, մուսալեռցիները կը կռուէին միասնական, միահամուռ, հերոսաբար եւ երդուած էին ջանձնուիլ թշնամիին: Անոնք ուխտած էին ապրիլ, որպէսզի անոնց ձայնը լսելի ըլլար ողջ աշխարհին, որպէսզի անոնք բոլորին պատմէին այն սոսկալի տառապանքներու, տանջանքներու եւ հալածանքներու, արքորի ու սպանդի մասին, որոնց ենթարկուած էին իրենց եղբայրներն ու քոյրերը, ծնողներն ու ընկերները, ականատեսի աչքերով պատմէին թուրքերու կողմէն իրագործուած սարսափելի ցեղասպանութեան մասին: Կը կռուէին վրէժը սրտին եւ առ Աստուած ունեցած հաւատքով... եւ ի վերջոյ, նաեւ ձեր օգնութեամբ, փրկուեցան:

Այսպես, մուսալեռացիներու օրինակով, Արեւմտեան Հայաստանի գիւղերէն ու քաղաքներէն մեծաթիւ հայրենակիչներ հարկադրուած գաղթեցին եւ բնակութիւն հաստատեցին աշխարհի ամենատարբեր վայրերու մէջ՝ հիմնելով հայկական գաղթօճախներ, մուսալեռացիները Լիբանանի մէջ հիմնեցին Այնճար հայաւանը:

Ձեր նախնիները եւս այդ ճանապարհը անցած են եւ ճակատագրի բերումով դուք ծնած էք օտար հողի մէջ՝ հայրենիքէն դուրս: Իսկ օտար միջավայրի մէջ հայ մնալն ու հայապահպանութիւնը կարելորագոյն խնդիր է: Հայ մնալու համար պետք է նախ լաւ գիտնաք ու ճանչնաք հայոց պատմութիւնը, մեր ծագումն ու մեր նախնիներու անցած ճանապարհը, խօսիք ու գրէք հայերէն, պահէք մեր ավանդոյթներն ու սովորոյթները, մեր ազգային առանձնայատկութիւնները, յաճախ այցի եկէք Հայաստան եւ ծանօթացէք մեր ժողովուրդի մշակոյթին:

Ես կը հաւատամ, որ մօտ ապագային աշխարհասփիւռ հայերը պիտի վերադառնան Հայաստան եւ գեղեցիկ օր մըն ալ մեր երկիրը դարձեալ ծովէ ծով պիտի դառնայ...

Ծերունին վայրկենապէս անհետացաւ:

Ժ. Մաս

Իշխանը ծիրանափողի հնչիւններով սթափեցուց ընկերները.

-Կ'ուշանանք... դէպի նոր արկածներ...

Իսկ Աննան միայն հասցուց ըսել.

-Ա՛խ, ի՛նչ լաւ էր, ի՛նչ լաւ քնացած էի ծաղիկներու անուշաբուրութեան մէջ... կարծես հեքիաթի մէջ ըլլայի...

Մութ ու մռայլ երկաթուղիի կայարանը յանկարծ աշխուժացաւ: Մարդիկ վախցած, խուճապահար սկսան այստեղ-այնտեղ փախչիլ. կը լսուէին գոռում-գոչիւններ, սարսափահար ճիչեր, տազնապալից ձայներ:

Մեր հերոսները արագ մտան մօտակայքը գտնուող շոգեկառքերէն մէկը եւ սրտի խլացնող զարկերու ներքոյ՝ փորձեցին հասկնալ, թէ ուր ինկած են եւ ինչ կը կատարուի այդտեղ:

Թրքերէն խօսող զինուած մարդիկ ուրախ գոչիւններով, բարձր վանկարկումներով գրաւեցին կայարանը:

-Թուրքերն են, պետք է այստեղէն փախչինք,- առաջարկեց Աննան:

-Շոգեկառքէն դուրս չելլե՛ք,- հրամայեց Մայքը:

Նոյն պահուն շոգեկառքը տեղէն առանձնացաւ եւ սկսաւ մեծ արագութեամբ սլանալ:

Թուրքերը սկսան կրակել հեռացող շոգեկառքին ետեւէն:

-Յիմա կը հասնի՛ն, Տէ՛ր Աստուած, ես կը վախնամ,- ըսաւ Մերին ու ձեռքերով պահեց գլուխը:

-Արաքս,- տեղ մը գրուածը կարդալով՝ շշնջաց ժագը,- այս կայարանին անունը Արաքս է:

-Արա՛քս,- շուրջը նայելով՝ մտքերու մէջ ինկաւ Իշխանը,- այս անունը կը յուշէ, որ ասիկա Ալեքսանդրապոլ-Երեւան երկաթուղին է ու մենք կը գտնուինք Արարատեան դաշտին մէջ:

Յանկարծ շոգեկառքը վերածուեցաւ ժամանակակից մեքենայի ու քանի մը վայրկեան անց՝ անոնք յայտնուեցան եկեղեցիի մը բակին մէջ:

Ընկերները դանդաղ մօտեցան եկեղեցւոյ դրան ու քարացան. այնտեղէն կարելոր խօսակցութիւն մը կը լսուէր:

Չօրավարի ուսադիրներով տղամարդը իր կողքը կեցած ուրիշ տղամարդու մը հետ կը փորձեր համոզել կաթողիկոսը, որ ան տեղափոխուի Սեւանայ լիճի շրջան.

-Կը խնդրե՛նք, ձեր ու ողջ ազգի անվտանգութեան համար պէտք է տեղափոխուի՛ք այնտեղ:

-Ո՛չ,- կտրուկ մերժեց կաթողիկոսը,- եթէ հայկական ուժերը ի վիճակի չեն պաշտպանելու այս սրբազան վայրը, ուրեմն ե՛ս կը պաշտպանեմ եւ հո՛գ չէ, թէ կը գոհուիմ հազարամեայ տաճարի շէմին: Ես քեզմէ նման առաջարկ չէի սպասեր, զօրավար Սիլիկեան:

-Սիլիկեա՞ն,- զարմացաւ Իշխանը ու հիացումով լայն բացաւ աչքերը եւ ընկերներուն ըսաւ,- այն մարդը զօրավար Սիլիկեա՞նն է:

-Ե՛՛ւ, մենք հիմա ո՞ւր ենք,- հարցուց Աննան:

-Կարծեմ՝ Էջմիածին,- պատասխանեց Իշխանը:

-Եթէ այն մարդը Սիլիկեանն է, ուրեմն կաթողիկոսն ալ Գեորգ Է-ն է,- նկատեց Ժազը:

-Եթէ հասկցանք ովքեր են, ուրեմն եկէք փակենք այս Էջը ու երթանք,- առաջարկեց Մայքը:

-Այս Էջը այսքան դիւրին փակել չ'ըլլար,- խորհրդաւոր շշնջաց Իշխանը,- մէկ վայրկեան, այս ի՞նչ կը կատարուի:

Յանկարծ միաժամանակ սկսան հնչել բոլոր եկեղեցիներուն զանգերը, որոնք ահագանգի ազդանշանի պէս տարածուեցան Զայաստան աշխարհով մէկ:

* * *

Ամէն տեղէ մարդիկ եկան, հաւաքուեցան եկեղեցւոյ բակին մէջ: Բոլորի դէմքերուն տազնապ ու մտահոգութիւն կար: Յանկարծ հաւաքուածներուն ներկայացաւ կաթողիկոսը եւ սկսաւ բարձրաձայն աղօթել: Մարդիկ եւս միացան կաթողիկոսի աղօթքին:

Աղօթքը աւարտելէն ետք՝ կաթողիկոսը դիմեց հաւաքուածներուն.

-Իմ սիրելի՛ ժողովուրդ, ես ձեր ու Աստուծոյ առջեւ կ'երդուիմ համընդհանուր նահանջի պարագային անգամ մնա՛լ Էջմիածինի մէջ ու անձա՛մբ պաշտպանել Մայր Աթոռը:

Կաթողիկոսի այս սրտառուչ ուղերձն ենք՝ հաւաքուածները բարձրաձայն ողջունեցին զինք՝ վանկարկելով.

-Մենք Ձեր կողքին ենք, Վեհափառ...

-Ի՞նչ կը կատարուի, մէկը կը բացատրէ՞,- հարցուց Աննան՝ շփոթած նայելով շուրջը:

-Ասիկա բացառիկ իրողութիւն է հայոց պատմութեան մէջ,- շնչաց իշխանը,- կը սիրեմ, երբ մեր ազգը այսպէս համախմբուած կ'ըլլայ:

-Այո՛. մենք միայն համախմբուածութեան արդիւնքով յաղթանակներու կը հասնինք,- աւելցուց Մայքը եւ առաջարկեց,- կարծեմ մենք պետք է միանանք այնտեղ կեցած զինուած մարդոց:

-Ես կը վախնամ,- հրաժարեցաւ Մերին:

-Մենք քեզի հետ ենք, Մերի՛, դուն վախնալու պատճառ չունիս,- հանգստացուց ժազը եւ ցոյց տուաւ մկանները,- մկաններո՛ւս նայիր՝ ի՞նչ զօրաւոր են:

Մերին ժազի խօսքերէն գօտեպնդուած՝ հանգստացաւ:



- Ժագին ըսածը ճիշդ է. պետք է երթանք անոնց հետ ու փորձենք հասկնալ, թե ուր ենք եւ ինչ կը կատարուի,- ըսաւ Մայքը:

Երբ Մայքը աւարտեց խօսքը, բոլորը սկսան վազել դէպի մարտի դաշտ ուղղուող զինուած մարդոց կողմը:

* * *

Առաւօտեան արեւ էր՝ ջերմ ու շոյող, բայց մէկ անգամէն քամի բարձրացաւ ու գաղթականներու շարքերը տակն ու վրայ ըրաւ:

-1500-է աւելի մարդ կայ այստեղ,- ըսաւ Ժագը,- արդեօք ո՞ր կը տանին զիրենք:

-Կարծեմ ասոնք գաղթականներ են. տեսէ՞ք, հագիւ կը քալեն, ուժասպառ ու յուսահատ են,- ըսաւ Մայքը:

Յանկարծ վազելով անոնց մօտեցաւ Իշխանը՝ յուզումէն շունչը կտրուած:

-Ետեւես եկէ՞ք, եկէ՞ք... չէք պատկերացներ, թե ով է այնտեղ,- շնչակտուր ըսաւ իր ընկերներուն:

Անոնք հետեւեցան Իշխանին: Վերջինս զիրենք բերաւ փոքրիկ բացատ մը, ուր հայկական զօրքն էր. մէկը վրան կը լարեր, միւսը կրակ կը վառեր, մէկը ճաշի պատրաստութիւն կը տեսներ:

-Մօտեցէք այն վրանին,- ըսաւ Իշխանը:

Անոնք բաւական մօտեցան ու քարացան:

Հաստ պէխերով, պատմութեան դասագիրքերէն ծանօթ դիմագիծերով տղամարդը կը խօսեր այլ, ոչ պակաս ծանօթ սպայի մը հետ:

-Ասիկա մեր հայրենիքն է՝ ամէն ինչէն կարելոր է... Հայրենիքը միշտ կ'ապրի նուիրեալներու շնորհիւ: Պատրաստուեցէ՞ք,- հրահանգեց թաւ պէխերով տղամարդը:

-Աչքերուս չե՛մ հաւատար,- շշնջաց Աննան:

Չօրավար Անդրանիկն է,- հիացած ըսաւ Իշխանը եւ կարծես իրականութենէն վերացած՝ քալեց անոր կողմը: Վերջին պահուն ժազը բռնեց իշխանի ուսէն եւ ետ պահեց գինք:

-Ո՛ր:

Բաւական մեծ եղաւ ընկերներուն զարմանքը, երբ տեսան մօտեցող Ակսել Բակունցը:

-Գառնիկ Յակոբեանը ըսաւ, որ կ'ուզէ տեսնել, թէ թուրքերու ուսապարկին մէջ ինչ կայ: Բացինք՝ աղացած ձաւար էր, 300 գլանակ լաւ ծխախոտ, իսկ հրացանին մէջ կար չորս փամփուշտ: Ձգեցինք ուսապարկը եւ յառաջացանք,- գեկուցեց Բակունցը:

-Լաւ, պարզ է... իսկ Թումանեանը ի՞նչ կ'ընէ. ճի՞շդ է ինծի հասած տեղեկութիւնը,-հարցուց սպան Բակունցին:

-Այո՛, Բաղրամեան,- հաստատեց Բակունցը,- ճերմակ դրօշակը ձեռքին՝ կ'անցնի գիւղէ գիւղ. չի վախնար գնդակներէն եւ խաղաղութիւն ու բարեկամութիւն կը քարոզէ:

Յանկարծ, նոյն պահուն, քամի սկսաւ: Խեղդող փոշին բարձրացաւ երկինք ու պահ մը ամէն ինչ ծածկուեցաւ փոշիի անթափանց ամպով: Մեր հերոսները երեսնիվայր պառկեցան գետին եւ ձեռքերով ծածկեցին իրենց դէմքերը. մի քանի վայրկեան անց՝ ամէն ինչ խաղաղեցաւ. շուրջը քար լռութիւն էր: Մեր հերոսները բարձրացան գետնէն. Տեսան, որ միայնակ են այդ տարածքին մէջ:

-Ի՞նչ կը կատարուի, ո՛ր եւ այն մարդիկ,- վախցած հարցուց Աննան,- ո՛ր եւ Բաղրամեանը, Անդրանիկը, Ակսել Բակունցը, զօրքը, գաղթականները...

Մայքը գետնէն վերցուց հնաոճ հրացան մը, ժազն ալ իր կողքին թուր յայտնաբերեց, ինչպէս նաեւ հին դրօշակ մը, իսկ Մերին գտաւ գետին ինկած թուղթ մը, ուր ընդամենը մի քանի բառ գրուած էր:

-Կարծեմ՝ մենք պետք է հասկնանք, թէ ինչ կը յուշեն մեզ այս իրերը, եւ ըստ այնմ ալ կը յայտնուինք պայքարի կիզակետին,- եզրակացուց Իշխանը:

-Այս թուղթին վրայ գրուած է «Մեր հայրենիք», բայց պատռուած է. չեմ կրնար կարդալ,- ըսաւ Մերին:

-Մէկ վայրկեան,- ըսաւ Մայքը՝ հրացանը ձեռքին,- ես տեղ մը կարդացած եմ Յմայեակ Խաչատուրեանի յուշերը, ուր ան կը նշէր. «...Մեր ձեռքի հրացանները կը կոչուէին «Մոսին»: Յեծեալները թուրեր, դաշոյն ունէին: Շատ հետաքրքրական, հայրենասիրական երգեր կ'երգէին: Անոնցմէ էր «Մեր հայրենիք»-ը:

Այս տեղեկություններն ենք ընկերները նայեցան իրենց գտած իրերուն եւ նոյն պահուն ալ միասին բռնեցին թուրն ու սլացան դէպի երկինք:

Քամին մեծ արագութեամբ զիրենք հասցուց վայր մը, ուր ռազմական գործողութիւններ սկսած էին:
-Թրքական հետեւակներ,- գոչեց Մայքը,- հեծեալ գո՛ւնդ... տեսէ՛ք, տեսէ՛ք, յիսունէ ավելի հրանօթներ բերած են...

-Այստեղ շտապող հայերն են,- բացականչեց Աննան,- հիմա բախումը կը սկի...

Կը թուէր, որ թրքական բանակը իր մեծաթիւ զօրքով շուտով պիտի ոչնչացներ ամենավերջին հայ զինուորը:

Ձիերու դոփիւններ, աղաղակներ, թեժացող կատաղի մարտ: Ընկերները երեսնիվայր փռուեցան գետին ` ձեռքերու մէջ պահելով զլուխները:

-Մենք հիմա Սարդարապատի մէջ ենք, ընկերներ,- պարզաբանեց Իշխանը,-Սիլիկեանը, Անդրանիկը... յիշեցէք... Մենք հասած ենք 20-րդ դար` 1918 թուականի Մայիս 22-29...

-Եթէ Սարդարապատի մէջ ենք, ուրեմն ո՞ւր է Քաջազնունին,- հարցուց Մերին:

-Ես երկնքէն զօրախումբ մը նկատեցի. Կարծեմ անոնք ճանապարհէն շեղուած են: Բռնեցէ՛ք թուրը, արագ:

Մեր հերոսները անմիջապէս թուրը բռնեցին ու բարձրացան երկինք:

Այնտեղէն կ'երեւէր Սարդարապատ գիւղին մէջ տեղի ունեցող արիւնալի մարտի ողջ տեսարանը: Մեր հերոսները աչքերը չորս բացած կը նայէին իրենց շուրջը, երբ յանկարծ նկատեցին Քաջազնունիի գունդը, որ կարծես չէր գիտեր, որ ուղղութեամբ յառաջանար: Մեր հերոսները անմիջապէս իջան ու կռուի դաշտին կողմը պարզելով իրենց ձեռքերը` գոչեցին.

-Քաջազնունիի՛, մարտերը ասո՛յդ ուղղութեամբ են:

Քաջազնունին պահ մը զարմացած նայեցաւ վեր, ապա` ասպատակելով ձին` հրամայեց.

-Քաջեն՛ր, իմ ետեւէ՛ս... առաա՛ջ...

Քաջազնունիի` հայոց առաջին վարչապետի գունդը, կատաղի սլացաւ դէպի մարտադաշտ:

Եւ այդ պահուն հնչեցին ժամանակի աւարտի մասին նախագգուշացնող զարկերը:

-Ո՛չ, ես կ'ուզեմ տեսնել այդ յաղթանակը. անիկա մեր ազգի ամենամե՛ծ յաղթանակներէն մէկն էր,-
հիացած բացականչեց Իշխանը, տեսե՛ք Արամ Մանուկեանըըը:

-Սարդարապատի ճակատամարտը աւարտին հասաւ Մայիս 26-ին՝ թրքական գերակշիռ ուժերուն
դեմ տարած լիակատար յաղթանակով: Իր ոգեշնչող խօսքը ըսելէն ետք՝ Իշխանը յանկարծ ձգեց
սուրը՝ երկինքէն գահավիժելով ուղիղ մարտադաշտ:

Ժամանակի սպառման մասին յուշող զարկերը երթալով կը սաստկանային, իսկ այդ ժամանակ
Իշխանը խենդի պէս կը վազեր դէպի Քաջազնունին, Մայքն ու Ժագն ալ՝ անոր ետեւէն:

-Ո՛ւր, ե՛տ դարձեք... մենք կը մնանք այստե՛ղ... մեզի մնաց ընդամենը մի քանի վայրկեան,-
տազնապած գոչեց Աննան:

Յանկարծ Իշխանը վազելով հասաւ մարտնչող Քաջազնունիին եւ ողջ ուժով գրկեց անոր ոտքերը:
Քաջազնունին պահ մը զարմացած նայեցաւ Իշխանին, ապա գրկեց զինք ու սեղմեց կուրծքին:

-Հայ ազգը մի՛շտ պիտի հպարտանա՛յ ձեզմով, ի՛մ զօրավար,- յուզուած գոչեց Իշխանը:

Այդ պահուն մնացած ընկերները արագ հաւաքուեցան, բռնեցին իրարու ձեռքերը, ապա իրենց
կողմը քաշեցին Իշխանը:

-Կը ներեք, զօրավար, մենք պետք է երթանք... մենք բոլորս հպարտ ենք ձեզմով, կեցցե՛ք,- ոչ
պակաս յուզուած՝ ըսաւ Մայքը զօրավարին, եւ նոյն վայրկեանին մեր հերոսները անսպասելիօրէն
անհետացան:

Քաջազնունին զարմացած նայեցաւ շուրջը, բայց անմիջապէս սթափեցաւ զօրավար Սիլիկեանի
ձայնէն.

-Մենք զիրենք ջախջախեցի՛նք, զօրավար... մենք յաղթեցի՛նք...

Ամբողջը այսօր լի էր կարօտի զգացումով.

-Կարօտը կոկորդա կը խեղդէ,- ըսաւ Աննան:

- Երբեք ծնողներէս այսքան հեռու չեմ մնացած,- տխուր ձայնով ըսաւ Մերին:

- Մեր այստեղ ըլլալն ալ փորձութիւն մըն է, ընկերներ, որ աւելի արժեւորենք ու կարելորենք մեր ծնողները, մեր հարազատները, բայց պէտք է քիչ մըն ալ դիմանանք, յաղթահարենք այս փորձութիւնները, ծանօթանանք մեր հնամենի պատմութեան,- ըսաւ Մայքը:

Ամբողջին մէջ յանկարծ յայտնուած լոյսը ինկաւ մեր հերոսերու աչքերուն.

- Ե՛ս եմ՝ ձեր ընկերը,- լսուեցաւ առեղծուածային ծերունիին ձայնը,- եկած եմ աւանդական պատգամս տալու:

...Յայ ժողովուրդին բաժին հասած հերթական փորձութիւնը մենք յաղթահարեցինք միասնութեամբ: Մեր մայիսեան հերոսամարտերը՝ Սարդարապատի /Մայիս 21-29/, Բաշ-Ապարանի /Մայիս 23-29/ եւ Ղարաքիլիսայի /Մայիս 24-28/ ճակատամարտերը հերոսաբար մղեցինք:

1918թ. Մայիս 28-ին, մենք ունեցանք Յայաստանի առաջին Յանրապետութիւնը, որ ներկայ Յայաստանի հիմքն է, այն ժամանակ մենք ունեցանք մեր զինանշանը, Յայոց Եռագոյն դրօշակը, «Մեր Յայրենիք» քայլերգը եւ հայերէն լեզուն օրէնքով հաստատուեցաւ, որպէս պետական լեզու: Յայաստանի Յանրապետութիւնը հռչակուեցաւ «Յայկական ազգային խորհուրդի» կողմէն՝ 1918 թուականի Մայիս 28-ին, Թիֆլիսի մէջ, Երեւանի մէջ Ազգային խորհուրդը կը գլխաւորէր Արամ Մանուկեանը, որ Սարդարապատի եւ Բաշ-Ապարանի մարտերուն ժամանակ՝ իրականացուց կազմակերպչական մեծ աշխատանք, անոր վրայ դրուած էր հայկական բանակի թիկունքին ապահովումը: Յայաստանի Յանրապետութեան հռչակումէն ետք, Արամ Մանուկեան ղեկավարեց երկիրը մինչեւ նոր կառավարութեան կազմուիլը, ուր ան նշանակուեցաւ ներքին գործոց նախարար եւ այդ պաշտօնը վարեց մինչեւ իր մահը (Յունուար 29-1919):

Արեւմտեան Յայաստանը բռնագրաւելէն ետք՝ թշնամին նպատակ դրած էր տիրանալու նաեւ Արեւելեան Յայաստանին: Սակայն, հայերը միացեալ ուժերով, հերոսական պայքարով կանգնեցուցին թշնամիի յառաջխաղացումը եւ ձախողցուցին հայերը ի սպառ բնաջնջելու

երիտթրքական ծրագիրը: Թշնամին հերթական անգամ համոզուեցաւ, որ հայու ոգին անկոտորում է, անոր զօրութիւնը՝ հաւաքական ուժի մէջ:

Մայիսեան համազգային յաղթանակէն ետք, 1918 թուականի Մայիս 28-ին, ստեղծուեցաւ Հայաստանի առաջին հանրապետութիւնը՝ Երեւան մայրաքաղաքով. 543 տարի անց հայոց պետականութիւնը վերականգնուեցաւ...

-Ես գիտեմ, որ մեր առաջին հանրապետութիւնը գոյութիւն ունեցած է ընդամենը 2,5 տարի՝ մինչեւ 1920 թուականի Դեկտեմբեր 2-ը, որմէ ետք Հայաստանի մէջ հաստատուած են խորհրդային կարգեր,- ծերունիին ըսածը ամբողջացուց Իշխանը,- 1920 թուականի Նոյեմբեր 29-ին, իսկ պաշտօնապէս՝ Դեկտեմբեր 2-ին, ստեղծուած է Հայաստանի երկրորդ հանրապետութիւնը՝ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնը, որ գոյատեւած է աւելի քան 70 տարի՝ 1990-91 թթ.:

- Իսկ Հայաստանի երրորդ հանրապետութիւնն ալ ստեղծուած է ԽՍՀՄ փլուզումէն ետք՝ բաւական ծանր պայմաններու մէջ, երբ սկսած էր 1988 թուականի Արցախեան շարժումը եւ նոյն թուականին ալ տեղի ունեցած էր Սպիտակի աւերիչ երկրաշարժը,- իր գիտելիքները հաղորդեց նաեւ Մերին:

Ընկերները, որոնք տարուած էին իրենց գիտելիքներու հաղորդմամբ, չնկատեցին, թէ ինչպէս անհետացաւ ծերունին:

ԺԱ. Մաս

...Օդի մէջ վառօդի սուր հոտ կար:

...Ընկերները ինկած տեղէն բարձրացուցին գլուխները եւ տարօրինակ հայեացքներով նայեցան իրենց շուրջը:

-Նորէն պատերազմ է,- քիթը բռնելով՝ ըսաւ Մերին:

-Արդեօք հիմա՞ ուր շարտուած ենք,- փոշին վրայէն թօթուելով՝ ըսաւ Ժագը:

Իշխանը՝ իր սովորոյթին համաձայն՝ սկսաւ մտածել. աչքերը այս ու այն կողմ տարաւ, ցուցամատը վեր վար ըրաւ, ապա սկսաւ հետազօտել, մանրակրկիտ զննել գետին թափփփած քարերը:

-Այսպիսի սպիտակափայլ քարակոյտերը կը յուշեն, որ այս հատուածը կը տարբերի մեր պատմական հայրենիքի մնացած հատուածէն,- եզրակացուց Իշխանը:

-Տես՛ք, ի՞նչ գեղեցիկ ծառեր կան ամենուր,- հիացած գոչեց Մերին:

-Երբ այս նորափթիթ ծառերը տեսնէր դարաբաղցի տատիկս՝ այս պուրակին մասին պիտի ըսէր «շոշոտ», - ըսաւ Աննան ու սկսաւ ծիծաղիլ:

-Ինչ ըսի՞ր,- կտրուկ արձագանգեց Իշխանը:

-Վա՛յ, Իշխա՛ն, քե՛զի ինչ եղաւ. տատիկիս խօսքերը յիշեցի,- քիչ մը նեղացած ըսաւ Աննան:

-Ու շատ ալ ճիշդ ըրիր, որ յիշեցիր. այո՛, ես կարծես կը համոզուիմ, թէ ուր ենք մենք. «շոշ»՝ երիտասարդ ծառ...դարաբաղցիներու բարբառով կայ նաեւ «սուշու», «շուշու» տարբերակները, իսկ եթէ ասոր գումարենք տեղի սպիտակաուռն քարաշերտերը, կը ստանանք....- իր գիւտէն ուրախացած՝ արագ-արագ արտաբերեց Իշխանը:



-Վա՛յ, Իշխա՛ն, քե՛զի ինչ եղաւ. տատիկիս խօսքերը յիշեցի,- քիչ մը նեղացած ըսաւ Աննան:

-Ու շատ ալ ճի՛շդ ըրիր, որ յիշեցիր. այո՛, ես կարծես կը համոզուիմ, թէ ուր ենք մենք. «շոշ»՝ երիտասարդ ծառ... դարաբաղցիներու բարբառով կայ նաեւ «սուշու», «շուշու» տարբերակները, իսկ եթէ ասոր գումարենք տեղի սպիտակաւուն քարաշերտերը, կը ստանանք....- իր գիւտէն ուրախացած՝ արագ-արագ արտաբերեց Իշխանը:

- Այդ քու «շուշու», Իշխա՛ն, շատ նման է Շուշիին,- կարծես բան մը կռահած՝ ըսաւ Ժագը:

-Ոչ թէ նման է, այլ Շուշիին է,- հաստատակամօրէն ըսաւ Իշխանը եւ ընկերներուն մատով ցոյց տուաւ քիչ մը հեռուն ինկած սեւ կէտ մը,- այնտեղ ալ՝ ժայռի գագաթին, կը գտնուէր բերդաքաղաքը, որ կարծես կը յիշեցնէ փոքրիկ սարաւանդ:

-Ուռա՛, ուռա՛.... մենք Արցախի՛ մէջ ենք... ես կը պաշտե՛մ Արցախը,- ուրախ թռչկոտելով՝ բացականչեց Մերին:

-Տես՛ք, քաղաքի վրայ կարծես բան մը նետեցին, բոցերը կը տեսնե՛ք,- անհանգիստ ցոյց տուաւ Մայքը,- պէտք է արագ այնտեղ երթանք. բնակիչները մեր օգնութեան կարիքը ունին:

-Քաղաքը կարծես կը մբակոծեն... ուրեմն մենք դարաբաղեան պատերազմի ժամանակաշրջանն ենք՝ 90-ական թուականներ, եւ դատելով ծառերու սաղարթներէն՝ հիմա ալ Մայիս ամիսն է... Մայիս, Շուշի... արագ շարժեցէք,- ըսաւ Իշխանը:

Յանկարծ Մայքը վերցուց գետին թափթփած քարերէն մէկը, շփեց ձեռքերով եւ նետեց՝ իբր ցոյց տալով, որ պէտք է քարի պէս սլանալ, սակայն քարը սլացաւ երիտասարդ ծառերէն մէկու ուղղութեամբ եւ դպաւ ուղիղ ծառի բունին. Շուշուայ դեռափթիթ «գաւակը»՝ շոշը, հարուածէն, ցաւէն, վտանգէն հապճեպ ձեւափոխուեցաւ, իր՝ բնութենէն ժառանգած յատկութիւնները փոխանցեց կողքի ծառին, ապա իր դալար ճիւղերով փաթթուեցաւ «կողակից գեղեցկուհի»-ին, իսկ ինքը տեղէն ելաւ եւ անմիջապէս յայտնուեցաւ մեր հերոսներու ոտքերուն տակ: Ընկերները արագ թռան ծառի վրայ: Ծառը քսուեցաւ հողին, սրբազան հողէն զօրութիւն առաւ, ինքն ալ զօրացաւ, մատղաշ արմատները թափահարեց ու թռաւ երկինք:

Իր սլացքին մէջ ծառը յանկարծ երկինքէն կախուեցաւ գեղատեսիլ գետակի մը վրայ, իջաւ, բողբոջները քսեց գետակի ջուրերուն ու դարձեալ թեւ առաւ, թռաւ երկինք. բողբոջները ջուրի մոզական զօրութենէն վերածուեցան փամփուշտներու:

-Յրա՛շք է եւ զօրաւոր Արցախի հողն ու ջուրը,- հիացած գոչեց ժագը:

-Ճիշդ իր բնակիչներուն պէս,- շեշտեց Մայքը,- ու այսպէս ալ կ'ապրին՝ իրարու փարուած, գգուած, զիրար սիրելով ու անբաժան:

- Յովանցները...տեսէ՛ք, այդ կիրճին մէջ ի՛նչ գեղեցիկ հովանցներ կան... ի՛նչ հրաշք բնութիւն է,- բացականչեց Մերին:

- Յիշեցի,- ըսաւ Իշխանը,- հովանցներու այս չափի գոյութիւնը յատուկ է Յունոտի կիրճին. այն փոքրիկ ջրվեժը պէտք է Մամոռոտ քար ջրվեժը ըլլայ, որ նաեւ «Յովանցներու ջրվեժ» կը կոչուի, իսկ գետակն ալ հաստատ Կարկառն է... մենք արցախեան գողտրիկ բնութեան հրա՛շք վայրի մը մէջ ենք, ընկերներ... հրաշալի՛ տեսարան է...

Այդ ընթացքին սուրացող ծառը՝ կարծես տագնապ մը զգալով՝ Շուշիի փոխարէն ուղղուեցաւ դէպի Գետաշէն-Մարտունաշէնի կողմերը, ուր նկատելով հաւաքուած մարդիկ՝ սրընթաց իջաւ անոնց քով:

Ընկերները զարմացած մօտեցան մարդոց. ֆետայիներ էին, հանած էին գլխարկները եւ ծունկի իջած՝ իրենց մէջտեղ գետին պառկած զոհուած ֆիտայիի մը առջեւ, հեկեկալով կու լային նահատակի կուրծքին...

-Աստուա՛րծ իմ, Թաթուկ Կրպէյեանն է,- ընկերներուն շնչաց Իշխանը՝ բացատրելով,- ուրեմն, ազերիները արդէն իրականացուցած են այդ չարաբաստիկ «Օղակ» գործողութիւնը, որուն ժամանակ ալ զոհուած է քաջ Թաթուկը:

-Թաթուկն ու ընկերները կռուած են խիզախաբար, բայց, ցաւօ՛ք, ազերիները Մեծ Շէնի, Յին Շէնի, Կամոյի, Ազատի բնակիչները տեղահանեցին, իսկ ոմանց՝ անխնայ կոտորեցին,- յիշեց Մերին կարդացածը...

-Իսկ ես գիտեմ, որ Գետաշէն-Մարտունաշէնի ազատագրման կռուին հերոսի մահով զոհուած են նաեւ Արթուր Կարապետեանը, «Արաբօ» ջոկատի հրամանատար Սիմոն Աչիկկեօզեանը, «Յրագդան» ջոկատի հրամանատար Յրաչ Դանիելեանը եւ բազմաթիւ այլ քաջեր,- Մերին ըսածը ամբողջացուց Աննան:

Մի քանի վայրկեան անց ֆետայիները խրոխտ ոտքի ելան եւ սկսան բռնն համազարկով երկինք կրակել՝ յարգելով Թաթուկի յիշատակն ու ուխտեցին՝ նոր ուժով, եռանդով ու վճռականութեամբ շարունակել պայքարը:

Իսկ մեր հերոսները այդ պահուն ծառ բարձրացան՝ ճշդելու Շուշիի ուղղութիւնը:

Մի քանի վայրկեան անց ծառը արդէն կը գտնուէր ուղիղ Շուշիի բերդի երկնքին: Վարէն օտարահունչ ձայներ կը լսուէին:

-Ազերիներն են,- ըսաւ Մայքը:

-Տես՛ք, Շուշին թշնամիի ձեռքն է՝,- տագնապալից գոչեց Իշխանը:

Յանկարծ ծառը, որ այդ միջոցին տեւական դադար առած էր բերդապարիսպի երկնքին, սկսաւ իր փամփուշտներով կրակել վար՝ դէպի բերդ, ուր կը գտնուէր թշնամին: Քաղաքի բոցը՝ վիշապային երախէն դուրս թռած կրակի պէս՝ երկինք թռաւ. սկսաւ խուճապ, իրարանցում, անկանոն կրակահերթեր:

-Պէտք է իջնենք ու գտնենք Քոմանտոսը,- առաջարկեց ժագը,- հիմա հաստատ զօրավարի ռազմական խորհուրդը խելացի յարձակման ծրագիր կը կազմէ:

Ընկերները համաձայնեցան: Անոնք կախուեցան մոգական հովանոցներէն ու անմիջապէս երկնքէն իջան: Իսկ «հայրենանուէր» ծառը շարունակեց թշնամական ուժերը ռմբակոծելով յառաջանալ՝ հանդիսանալով՝ յանուն սրբազան հողի ազատագրութեան համար կռուող հայ ժողովուրդի մարմնացումը:

Շուշուայ բերդը կը պատրաստուէր խոր պաշտպանութեան: Ազրպէյճանական «ՕՄՕՆ»-ականները (վարձկան կռուողներ) ուղղաթիռներով մեծաթիւ զէնք ու զինամթերք կը տեղափոխէին քաղաք՝ զայն դարձնելով ռազմական հզօր յենակետ: Միաժամանակ, նենգ թշնամին գործի դրած էր «Գրադ» կայանքները եւ իր արկերով կը հրետակոծէր Ստեփանակերտը՝ մեծաթիւ կորուստներ պատճառելով տեղի ու շրջակայքի հայ բնակչութեան:

-Պէտք է ամէն գնով գտնենք Քոմանտոսը եւ միւս քաջերը ու անոնց յայտնենք, որ թշնամին մեծաթիւ ուժեր կը կեդրոնացնէ բերդին մէջ եւ կը պատրաստուի ամուր պաշտպանութեան՝ ռմբակոծելով նաեւ Ստեփանակերտը,- ըսաւ ժագը:

Ընկերները ամուր բռնեցին երկու հովանոցները եւ երկինք բարձրանալով՝ սկսան շրջիլ Արցախի վրայ:

Արցախը վերածուած էր ռազմադաշտի: Ամէնուր կրակոցներ, գոռում-գոչիւններ. ռումբերը կը

սուրային նետերու պէս՝ խոցելով կռուողները, արիւնը գետի նման կը հոսեր: Կը կռուէր ողջ հայրութիւնը՝ որպէս մէկ միասնական բռունցք, կը կռուէին տեղի բնակիչները, Զայաստանէն ու Սփիւռքէն ժամանած բազմաթիւ կամաւորներ, ֆետայական անթիւ ջոկատներ...

Ընկերները կ'անցնէին պատերազմի թեժ կետերու վրայէն: Կը կռուէր Մարտունի՛ն, Ասկերա՛նը, Զատրո՛ւկը, Մարտակէ՛րտը, Շահումեա՛նը իր գիւղերով. կը կռուէին կի՛ն ու տղամա՛րդ, ծե՛ր ու մանո՛ւկ: Ազգային-ազատագրական զօրեղ պայքարը թեւ առած կը ճախրէր:

-Տեսէ՛ք, Մարտունիի մէջ հերոս Մոնթէն կը կռուի իր փառապանծ ջոկատով,- հիացած գոչեց Աննան,- Մոնթէն, նոյն ինքը ԱԼՕՆ, առասպել է՝ մեր սրբազան պատերազմի շարժիչ ուժն ու ոգին: Կը լսուին Մոնթէի խրոխտ, հայրենասիրական ոգեւորիչ կոչերը իր քաջերուն:

-Ի՛մ քաջե՛ր... եթէ կորսնցնենք Արցախը, մենք կը շրջենք հայ ժողովուրդի պատմութեան վերջին էջը...

Ապա ընկերները Մարտունիէն արագ սլացան դէպի Զատրուկ, Շահումեան:

-Կրկժան, Շահումեան շրջանի մէջ Աշոտ Դուլեանն է՝ քաջարի Բեկորը՛,- անյազ հպարտութեամբ ըսաւ Մայքը:

Զայ գինուորներէն մէկը նռնակը ձեռքին նետուեցաւ թշնամիի հրասայլին առջեւ եւ իրնքզինք պայթեցուց հրասայլին հետ՝ փրկելով գիւղերէն մէկուն անպաշտպան բնակչութիւնը. մինչեւ վերջին շունչը կռուող ֆետային չէր լքեր իր խրամատը եւ մի քանի տեղէ վիրաւորուելէ ետք ալ կը շարունակէր խիզախօրէն կռուիլ ...

Արագ-արագ ակնթարթի պէս փոխուելով՝ այս տեսարանները կը յաջորդէին իրարու, կ'անցնէին ընկերներուն առջեւէն, իսկ անոնք հովանոցներէն կառչած՝ կը փորձէին իրենց ընթացքին մէջ գտնել Զոմանտոսը եւ յայտնել Շուշիի մէջ տեղի ունեցող վտանգաւոր իրադարձութիւններուն մասին:

Վայրկեաններ անց անոնք յայտնուեցան Զատրուկի մէջ:

Յովանոցները ակամայ վայրէջք կատարեցին:

Մեր հերոսները այստեղ ականատես եղան շատ ոգեւորիչ տեսարանի: Մարդիկ զուարթ ռազմապար կը պարէին, հայրենասիրական խրոխտ, ռազմաշունչ երգեր կ'երգէին եւ գաւաթներով գինի կը խմէին:

-Ի՞նչ կը կատարուի հոս,- զարմացած հարցուց Մերին,- ամէն տեղ կը կռուին, իսկ այստեղ քէֆ ուրախութիւն է:

Ընկերները հարցական հայեացքով նայեցան իրարու:

Յանկարծ աղմուկը սաստկացաւ. մարդիկ շրջապատեցին կեդրոնին կեցած հսկայ տղամարդը, եւ զինք բարձրացնելով իրենց ուսերուն ` գոչեցին.

...Տող գիւղն ազատագրուած է... ուռած, ուռած...

Բացականչելէն ետք բոլորով սկսան երգել.

-Չարկա՛ւ ճակտին,
Փռե՛ց գետին,
Գինի լիի՛ց,
Ընկե՛ր ջան, գինի լիի՛ց,
Խմողաց անուշ-անուշ,
Խմողաց անու՛շ...

Երգը աւարտելուն պէս բոլորը գինիի գաւաթները ուժգին զարկին իրարու եւ խմեցին:

-Յիմա ամէն ինչ պարզ է. Քոմանտոսի հրամանատարութեամբ Յատրուի Տող գիւղը ազատագրուած է,- բացատրեց Մայքը:

Ընկերները վազեցին եւ անմիջապէս շրջապատեցին Քոմանտոսը:

-Քոմանտո՛ս, Քոմանտո՛ս, թշնամին մեծ ուժեր կը կեդրոնացնէ Շուշիի մէջ... դեռ աւելին, սկսած են ռմբակոծել Ստեփանակերտը,- տագնապալից ըսաւ Մայքը:

Յանկարծ այդ միջոցին արձագանգեց կապ ընդունիչը.

-Արծիւ՛՝ Բազէին, Արծիւ՛... Ստեփանակերտը վտանգի մէջ է... Շուշուայ բերդը կը ռմբակոծուի...

-Յասկցայ,- պատասխանեց Քոմանտոսը,- ընդունած եմ... անցնինք «Յարսանիք լեռներում» գործողութեան... պատրաստուի՛լ...

-Ի՞նչ կ'ընէք, Քոմանտո՛ւս,- հարցուց ռազմիկներէն մէկը:

-Դէպի Շուշի՛,- վստահ ըսաւ Քոմանտոսը եւ ծոցէն հանեց «Չարսանիք լեռներում» գործողութեան հրամանը,- պէտք է քաղաք մտնել տարբեր ուղղութիւններով: Ես նշանակած եմ այդ ուղղութիւններով քաղաք մտնող զօրախումբերու հրամանատարները. անհրաժեշտ է իրենց տեղեակ պահել այս բոլորին մասին:

Քոմանտոսը ձեռքը առաւ կապ ընդունիչը, ուզեց կապուիլ հրամանատարներուն հետ, բայց կապը խափանուած էր:

-Թշնամին խափանած է կապ ընդունիչը. լսեցէ՛ք, պէտք է չորս քաջ սուրհանդակ՝ հրամանատարներուն հասցնելու յարձակման հրամանները:

-Մենք պատրաստ ենք, հրամանատար՛ր,- հպարտ գոչեց Ժագը,- մենք տեղ կը հասցնենք:

-Դո՛ւք,- զարմացաւ Քոմանտոսը:

-Վստահեցէ՛ք մեզի եւ ամէն ինչ կ'ըլլայ ձեր ըսածին պէս,- հաստատեց Մայքը:

-Դուք արդէն ապացուցած էք, որ վստահելի էք,- մեր հերոսներուն փաթթուելով՝ ըսաւ Քոմանտոսը,- վերցուցէք այս չորս հրամանները եւ տարէք հասցեատերերուն:

Ապա յանկարծ՝ գոչեց.

-Սպասեցէ՛ք, սպասեցէ՛ք, մէկ վայրկեան... ընկերներուն մէկական գաւաթ նուռի հիւթ լեցուցէք. Արցախի նուռը զօրաւոր, պաշտպանիչ ուժ ունի:

Երբ հիւթը լեցուցին, Քոմանտոսը անձամբ գաւաթները պարզեց անոնց, անոնք արագ խմեցին եւ կազմ ու պատրաստ սպասեցին հրամանին:

-Իսկ հիմա աճապարեցէ՛ք, ի՛մ քաջեր, Աստուած ձեր հետ. կը հանդիպինք Շուշիի մէջ:

Մեր հերոսները հրամանները ստացան եւ սլացան տարբեր ուղղութիւններով:

-Դուն սպասէ՛, փոքրի՛կ,- ըսաւ Քոմանտոսը ու գրկեց Մերին,- դուն քովս մնա՛, մենք միասին պիտի ղեկավարենք այս կարեւոր գործողութիւնը. համաձայն ես...

Մերին չկրցաւ նոյնիսկ բառ մը ըսել եւ հիացումով կը նայէր Քոմանտոսին:

Երբ ընկերները անցան Տեղ գիւղի բլուրի ետեւէն եւ արդէն պիտի բաժնուէին իրարմէ, որպէսզի ամէն մէկը երթար իր ուղղութեամբ, յանկարծ անոնց դիմաց յայտնուեցաւ թշնամիի յարձակողական տասնհինգ հոգինց խումբ մը:

-Էրմենի կէսաւուրլաա՛ր...,- գոչեց ազերիներու խումբին հրամանատարը:

Ընկերները սարսափած իրարու նայեցան. ցաւօք, պաշտպանուելու համար բան մը չունէին: Անոնք իրարու ձեռք բռնեցին՝ միասնութեան ուժը զգալու:

Ազերի հրամանատարը ձեռքով կրակելու նշան տուաւ իր խումբին, հրամանին ենթարկուելով սկսան կրակել: Սակայն, ո՛վ հրաշք, փամփուշտները ոչ միայն չէին վնասեր մեր հերոսները, այլեւ կը դառնային կրակող ազերիներուն ուղղութեամբ...

-Սա ի՛նչ հրաշք է, Աստուած իմ,- իր տեսածին ու կատարուածին չհաւատալով եւ խօսելու կարողութիւնը հազիւ վերականգնելով՝ բացականչեց Աննան:

-Մահաբեր փամփուշտները մեզ չվնասեցին,- զարմանքով ըսաւ Ժագը:

-Կարծեմ՝ Արցախի նուռի հիւրը մեր պաշտպանն ու վահանը դարձաւ,- ըսաւ Մայքը:

-Այո՛,- հաստատեց Իշխանը:

-Ընկերներ, կ'ուշանանք... մեզմէ շա՛տ մեծ բան կախուած է. պէտք է աճապարե՛լ:

Ընկերները համաձայնեցան եւ ամէն մէկը գնաց իրեն յանձնարարուած ուղղութեամբ:

* * *

1992 թուականի Մայիս 8-ին բերդաքաղաք մտան մեր հերոսները հայկական «S-72» հրասայլով...

1992 թուականի Մայիս 8-ի առաջին ժամերուն՝ 2:30-ին, հայկական զօրամիաւորումները, Քոմանտոսի (Արկադի Տէր Թաթեւոսեան) ղեկավարութեամբ, անցան «Չարսանիք լեռներում» գործողութեան իրագործման: Տարբեր ուղղութիւններէ գրոհելով՝ հայկական ստորաբաժանումները յաջողեցան արքանի մէջ առնելով՝ ճգմել բերդաքաղաքին մէջ ամրացուած ագրպէյճանական զօրքերը:

Հայերու անակնկալ յարձակման յաջորդեց թշնամիի խուճապահար գործողութիւնները, որմէ ետք հայերը ծունկի բերին թշնամին եւ քաղաքը մաքրեցին ազրպէյճանցիներէն. Շուշին ազատագրուած էր:

Շուշիի ազատագրումը հմտօրէն կազմակերպուած, յստակ ծրագրուած եւ առանց մեծաթիւ զոհեր տալու փայլուն գործողութիւն մըն էր ողջ ռազմարուեստի պատմութեան մէջ. 57 զոհ՝ թշնամիի 250-300 սպաննուածի ու 600-700 վիրաւորի դիմաց:

Շուշիի եւ ողջ Արցախի, Հայաստանի եւ Սփիւռքի մէջ ազգային համընդհանուր տօնախմբութիւն էր: Բնակիչները կ'ողջագուրուէին, կը շնորհակալուէին իրարու արցունքոտ աչքերով եւ կը խաչակնքուէին:

Ֆետայիներէն մէկը բարձրացաւ կիսաւեր Սուրբ Ղազանչեցոց եկեղեցւոյ վրայ եւ փլած գմբէթին տեղը զանգ մը ամրացուց ու ճօճեց, քաղցրահունչ դօղանջը ազդարարեց քրիստոնէական եկեղեցւոյ եւ հայ ժողովուրդի փրկութեան լուրը ողջ աշխարհին:

-Ընկեր՛ր, կ'ուշանանք,- խիստ մտահոգուած ըսաւ Իշխանը, եւ բոլորը տարբեր տեղերէ, իսկ Մերին՝ Զոմանտոսի գիրկէն, թռաւ, եւ մի քանի վայրկեան անց անոնք իրարու ձեռքերը բռնելով յայտնուեցան օդին մէջ՝ պռռալով.

-Ձեզ մեծամեծ յաղթանակներ, հայր՛ց քաջեր...



Ֆետայիները, քաղաքի բնակիչները զարմացած նայեցան թռչող ընկերներուն: Ապշած էր նաեւ Զումանտոսը:

Ընկերները կը սաւառնէին օդային անեզր տարածութեան մէջ: Իշխանը ըսաւ.

-Շուշիի ազատագրումը արցախեան հերոսամարտի կարեւորագոյն յաղթանակն էր:

Յանկարծ ամէն ինչ սկսաւ շատ արագ շարժիլ. ամպերը տեղերը փոխեցին. մէկ ակընթարթէն երկինքը մթնցաւ ու լուսաւորուեցաւ, աստղերը շողացին ու հալեցան, արեւը ծագեցաւ ու մայր մտաւ. օրերը, տարիները թռան, անցան մէկ ակընթարթի պէս: Ու յետոյ ամէն ինչ խաղաղեցաւ, պարզուեցաւ:

Ընկերները Արցախ աշխարհէն անյայտանալու վրայ էին, երբ վարը տարօրինակ բան մը շողաց ու գրաւեց անոնց ուշադրութիւնը, եւ բոլորը միասին պոռացին.

-Ծաւառը...

Մեզի ծանօթ ծառը գրաւած էր իր նախկին տեղը՝ միւսներուն կողքին... ամուր արմատներով կառչած էր հողին: Ծառերուն վրայ ծլարծակած էին անթիւ-անհամար բողբոջներ, որոնք սկսան աստիճանաբար բացուիլ եւ իրենց թերթիկներուն գրուած տողերը ցոյց տալ մեր հերոսներուն.

«1992 թուականի Մայիս 8-9. ազատագրուեցաւ Շուշին»:

«1993 թուականին հայ ազատագրական ուժերը յաղթանակներ տարին Ասկերանի, Շահումեանի, Զատրութի, Մարտակերտի, Մարտունիի շրջաններուն մէջ»:

«1993 թուականի Փետրուարէն Մարտակերտի ռազմաճակատին Արցախի ինքնապաշտպանական ուժերը ձեռնարկեցին լայնածաւալ յարձակում եւ իրականացուեցաւ Զորադիզի, Սանասարի, Ջրականի, Վարանդայի եւ Կովսականի վերջնական ազատագրումը»:

«1994 թուականին տեղի ունեցաւ թշնամական զօրքերու լայնածաւալ յարձակման կասեցումը, հայերու վերջնական յաղթանակի ամրագրումը ագրայէճանական բանակին նկատմամբ եւ արցախա-ագրայէճանական ռազմական գօտիին զինադադարի կնքումը՝ 1994 թուական, Մայիս 12»:

Ընկերները աստիճանաբար անհետացան երկնային անափ տարածութեան մէջ...

Ամբողջը յանկարծ լուսաւորուեցաւ եւ բոլորը միասին շրջապատեցին լոյսի մէջ գտնուող մոզական ծերունին:

-Սիրելիներս,- ըսաւ ծերունին,- դուք այսօր մասնակցեցաք արցախեան ազատամարտին եւ անձամբ տեսաք, թէ ինչպէս հայ ժողովուրդը միահամուռ կը կռուէր իր սրբազան հողին պաշտպանութեան համար, որ ի վերջոյ, աւարտեցաւ մեր յաղթանակով:

Արցախի ազգային-ազատագրական արդար պայքարը Ազրպէյճանի դէմ առաւել ցայտուն դարձաւ խորհրդային իշխանութեան վերջին տարիներուն՝ 80-ականներուն վերջերը: Սակայն արցախահայութեան պայքարը, որ մայր հայրենիքի հետ վերամիաւորուելու ձգտումն էր, թոյլ չտալու համար՝ ազրպէյճանական սադրիչները 1988 թուականի Փետրուար 27-29-ին կազմակերպեցին Պաքուի ու Սումգայիթի սարսափելի ջարդերը:

Դեպքերուն ընթացքը ստիպեց, որ 1989 թուականի Դեկտեմբեր 1-ին ԶԽՍՀ ԳԽ եւ ԼՂ Ազգային Խորհուրդը ընդունին համատեղ որոշում Լեռնային Ղարաբաղի եւ Զայկական Խորհրդային Սոցիալիստական Զանրապետութեան վերամիաւորման մասին: Ազրպէյճանը 1991 թուականի Ապրիլէն խորհրդային բանակի զօրքերուն հետ ձեռնարկեց Արցախի հայաթափման եւ անոր տարածքին տէր կանգնելու ծայրայեղ գործողութիւնը, որ առաւել յայտնի է «Օղակ» գործողութիւնն անունով:

1991 թուականի Սեպտեմբեր 2-ին ԼՂԻՄ-ի եւ դեռ չհայաթափած Շահումեանի շրջանի ժողովրդական պատգամաւորներու մասնակցութեամբ տեղի ունեցած նստաշրջանը ընդունեց «Լեռնային Ղարաբաղի Զանրապետութեան հռչակման մասին» հռչակագիրը, իսկ 1991 թուականի Դեկտեմբեր 10-ին Արցախի բնակչութիւնը զայն ամրագրեց իր հանրաքուէով: Ազրպէյճանը չհաշտուեցաւ այս բոլորին հետ եւ սկսաւ արդէն բացայայտ պատերազմական գործողութիւններ վարել Զայաստանի դէմ, որ արդէն դուք անձամբ տեսաք, թէ ինչպէս աւարտեցաւ:

Լա՛ւ եղէք,- եզրափակեց ծերունին իր պատմութիւնը եւ մէկ անգամէն չքացաւ:

-Զիմա եկէք երթանք յաջորդ փորձութեան ետեւէն,- ըսաւ Իշխանը, փչեց ծիրանափողը եւ մեր հերոսները նոյնպէս չքացան ամբողջէն:

-Տեսէ՞ք, այն կողմը բնակավայր մը կայ, իսկ ա՛յդ տունէն ուրախ կանացի ձայներ կը լսուին: Եկէք երթանք այնտեղ եւ պարզենք, թէ ուր ենք եւ ինչ կը կատարուի այնտեղ,- բնակավայրին կողմը ցոյց տալով ընկերներուն՝ առաջարկեց Իշխանը:

- Գացինք,- համաձայնեցաւ Մայքը եւ յառաջանալով՝ առաջնորդեց միւսները:

Վայրկեաններ անց ընկերները մօտեցան այն տան, ուրկէ աղմուկ կը լսուեր, եւ նայեցան տան պատուհանէն ներս.

Այնտեղ քանի մը կին՝ աշխուժօրէն, բարձր տրամադրութեամբ, արագ եւ ճարպիկ շարժումներով բան մը կը պատրաստէին: Անոնց առջեւ գտնուող փայտեայ սեղանին վրայ դրուած էին խմորէ գունդեր եւ կանաչեղէնի տարբեր տեսակներ: Զիչ ետք, կիներէն ոմանք սկսան աստիճանաբար խմորագունդերը գրտնակով բանալ եւ այդ բացուած խմորէ բարակ շերտերուն վրայ դնել կանաչեղէնի տեսակներ եւ համեմունքներ: Անոնց կողքին կար վառարանը, որուն վրայ պիտի եփէին այդ «տարօրինակ ուտեստը»:

-Աստուա՛ծ իմ, ես հասկցա՛յ... այս կանայք ժենկեալով հաց կը պատրաստեն,- ըսաւ Մերին ու բացատրեց,- գիտէ՞ք, այս հացը Արցախի յայտնի ուտեստն է. ժենկեալով հաց, այսինքն՝ բանջարեղէններով լեցուած հաց:

-Ես լսած եմ այս հացին մասին արցախցի տատիկէս,- ըսաւ Աննան:

Մեր հերոսները ներս մտան եւ ուրախ դիմեցին կանանց.

-Մենք եկած ենք ձեզի օգնելու...

-Դուք հրեշտակներ՞ր էք,- հարցուց կիներէն մէկը:

-Հրեշտակ չենք, բայց պակաս ալ չենք... Երկար պատմութիւն է,- ըսաւ ժազը եւ սուր դանակ մը առնելով՝ սկսաւ կանաչեղէնները արագ-արագ կտրտել:

Կեսգիշերն անց էր. Հատրութի վրայ կախուած էր կեռ լուսինը, բայց այսօր, լուսնի լոյսին մէջ անգամ թախիժ կար...

Մերին ու Աննան միևս կիներուն հետ արագօրէն սկսան խմորը գնդել, իսկ Իշխանը թեժացուց վառարանը: Կարճ ժամանակ ետք՝ ժենկեալով հացերը պատրաստ էին, մեր հերոսները մեծ ախորժակով վայելեցին այդ անուշաբոյր հացը:

-Աշխարհի լաւագոյն համը,- գնահատեց Աննան, իսկ միւսները բուրբ մատով հաւանութեան նշան ըրին:

Ընդհանուր աղմուկը, խինդ-ծիծաղն ու բարձր տրամադրութիւնը յանկարծ սառեցաւ օդին մէջ, երբ լուեցաւ հզօր պայթիւն մը. արկի ուժգին պայթիւն էր, բոլորը դուրս թռան:

-Պատերա՛զմ է...,- բառը անցաւ բերնէ բերան, լուեցաւ այս ու այն կողմէն, մարդիկ խուճապի մէջ էին, ճիչեր ու գոռոցներ, լաց ու կոծ: Կրակոցները բաւական մօտ էին եւ անոնց ձայնը արդէն ականջ կը ծակէր:

Ամբողջ Արցախը ոտքի ելաւ: Ամենուր սահման շտապող մարդիկ, աղօթք, պատրաստակամութիւն, հրասայլերու դղրդիւն, ուղղաթիռներու սլացք...

Պատերազմի ծակող, տհաճ հոտը հետզհետէ մտահոգիչ էր: Բոլորին նպատակը մէկն էր՝ վայրկեան առաջ հասնիլ դիրքեր եւ միանալ զինուորներուն:

-Պէտք է արագ դիրքեր հասնիլ, պէտք է տեսնել՝ ինչ կը կատարուի այնտեղ,- յորդորեց Մայքը:

-Ապրիլեան քառօրեայ պատերազմը սկսած է... ուրեմն, 2016 թուականն է՝ Ապրիլ 1-ի լոյս 2-ի գիշերը,- կռահեց Իշխանը,- ամբողջ ազգը բռունցքուած իր հայրենիքը կը պաշտպանէ...

-Չայրենիքը վտանգի մէջ է,- գոչեցինմեր հերոսները եւ նոյն վայրկեանին թռան իրենց կողքէն անցնող զրահամեքենային վրայ. մեքենան կարծես գերբնական ուժ ստացաւ եւ սլացաւ քամիի արագութեամբ:

Այդ միջոցին Չատրութի եւ Ջրականի (Ճապրայի) դիրքերուն սոսկալի արիւնահեղութիւն եղած էր:

-Թշնամին՝ իր վաղեմի սովորոյթին համաձայն՝ անակնկալյարձակած է մեր դիրքերուն ուղղութեամբ,- բարկացած ըսաւ Մայքը՝ արիւնահեղութեան հետեւանքները տեսնելով,- բայց մեր քաջ զինուորները իրենց կեանքին գնով պաշտպանած են դիրքերը եւ չեն յանձնած թշնամիին:

Ընկերները հասկցան, որ կատաղի մարտեր տեղի ունեցած են եւ հայ զինուորները կրցած են ետ

շարտել նենգ թշնամին:

Յետգիտտե կը լուսնար: Ողջ առաջնագիծին կրակը չեր դադրեր: Թշնամին կը փորձեր հրթիռահրետանային միջոցներու գործադրմամբ ճեղքել հայերու պաշտպանութիւնը եւ իր պիղծ ոտքը դնել մեր սուրբ հողին:

Չրահամեքենան գրեթէ թռչելով Յատրութեն հասաւ Թալիշ:

Օտարահունչ ձայներէն կը հասկցուէր, որ Թալիշը գրաւուած է ազերիներուն կողմէ:

Գիւղի բնակչութիւնը տարհանուած էր: Չինուորական խորհուրդը գիւղը վերագրաւելու ծրագիր կը մշակէր:

Չինուորները նստած էին կողք կողքի:

-Պէտք չէ ժամանակ կորսնցնել, տղա՛ք. արագ պէտք է ազատագրել կորսուած տարածքները,- կարգադրեց տեղի զօրամասերէն մէկուն հրամանատարը, ապա՝ դառնալով սպաներէն մէկուն՝ ըսաւ

-Մեծ պատասխանատուութիւն կը դնեմ ուսերուդ. ամէն գնով պէտք է պահես Մարտակերտի ուղղութեամբ տեղակայուած դիրքը:

-Կը ծառայեմ Յայաստանի եւ Արցախի Յանրապետութիւններո՛ւն,- այնպիսի խրոխտութեամբ ըսաւ սպան, որ ներկաները փշաքաղուեցան:

Չինուորները ձեռքերը պարզեցին դէպի զէնքերը:

Մի քանի վայրկեան անց աղջիկները Յատրութեն բերած ժենկէալով հացերը դրին զինուորներուն առջեւ:

-Բարո՛վ վայելէք, եղբայրներ,- ըսաւ Աննան:

Յացը մոզական ուժ ունի. հացը ապրելու, արարելու, գոյատեւելու եւ իրարդար պահանջատիրութեան, մաքրութեան ու ազնիւ խղճի կանչն ունի, ալիւրը իր՝ ճերմակ պարզութիւնը: Ճաշակեց հայ զինուորը, լիացաւ, բազուկները լեցուեցան, զօրացաւ եւ վազեց կռուի դաշտ:

Չինուորները ուղղուեցան Թալիշի դիրքեր:

Կատաղի մարտը վերսկսաւ նոր ուժով: Ժամերը սկսան անցնիլ վայրկեաններու պէս: Մեր հերոսները միացան կռուին. գործի դրուեցաւ հզօր, մոգական գրահամեքենան, որուն կրակոցները ստիպեցին թշնամին լքել Թալիշն ու փախչիլ: Տարածքները, որոնց ժամանակաւորապէս տիրացած էին ազերիները, կարճ ժամանակ անց ազատագրուեցան:

-Չայ զինուորը կը գծէ հայրենիքի սահմանագիծը. պատահական չէ ըսուած,- ըսաւ Մերին հպարտութեամբ,- ապրի՛ն մեր տղաքը, կեցցե՛ն մեր անպա՛րտ արծիւները:

-Ընկերներ, երբ Թալիշը արդէն մեր ձեռքն է, պէտք է արագ ուղղուիլ Մարտակերտի դիրքեր, ուր հիմա՝ այս պահուն, անհաւասար կռիւ կը մղուի. պէտք է օգնե՛լ անոնց,- ընկերներուն դիմելով ըսաւ Մայքը:

Եւ անոր այդ յորդորին վրայ գրահամեքենան տեղէն թռաւ եւ կայծակնային արագութեամբ հասաւ Մարտակերտի կողմերը:

Ազրպէյճանական շուրջ 300 հոգիէ բաղկացած խումբերը՝ հրասայլերու օգնութեամբ՝ կը փորձէին գրաւել հայկական դիրքերը: Թշնամին անցած էր լայնածաւալ յարձակման:

Օրհասական կռիւը ծաւալած էր:

-Պէտք է օգնե՛լ մեր քաջերուն,- ըսաւ Մայքը եւ նոյն վայրկեանին գրահամեքենայի փողէն դուրս թռան հազարաւոր կործանիչ արկեր, որոնք բազմաթիւ աւերածութիւններ ու կորուստներ պատճառեցին թշնամիին:

Յանկարծ, այդ պահուն, թշնամին ուժգին հրետակոծութիւն սկսաւ հայկական դիրքին ուղղութեամբ: Տղաները՝ Մայքն ու Ժագը, նետուեցան օգնելու հայ ազատամարտիկներուն, իսկ աղջիկները սկսան գրահամեքենայէն զէնք հասցնել կռուողներուն: Մայքը կը կրակեր ինչպէս միշտ շեշտակի եւ դիպուկ, փորձառու դարձած էր նաեւ Ժագը, իսկ Իշխանը կ'օգներ հնարաւորինս ճիշդ պաշտպանուիլ: Թշնամիին շարքերը յաճախ կը նօսրանային, բայց շատ չանցած՝ համալրուիլ սկսան նորանոր ուժերով, տարատեսակ վարձկան զօրախումբերով:

-Փամփուշտները կը վերջանան, տղա՛ք... պէտք է մարտը շարունակե՛լ...,- պռռաց ընդհանուր աղմուկի, խժոժութեան մէջ հայ հերոսը, որմէ ետք կռուողներէն ոմանք, նաեւ Իշխանը, գացին զինամթերք բերելու:

Մայքն ու Ժագը տեղ գրաւած էին հայոց դիրքերուն վրայ, ուրկէ կրակահերթեր արձակելով՝ կը

փորձելն ամեն կերպ շեղել թշնամիին ուշադրութիւնը հայոց դիրքէն:

Մայքն ու Ժագը, հայ հերոսներէն ոգեշնչուած, իրենց ունեցած նռնակները նետեցին թշնամիին ուղղութեամբ. շատերը մահացան, իսկ կենդանի մնացածները լեղապատառ դիմեցին փախուստի: Պահ մը ռազմաճակատի բոլոր կողմերէն ամեն ինչ լռեց, խաղաղեցաւ: Ընկերները անձամբ տեսան տասնիննամեայ խիզախ զինուորներուն անօրինակ անձնագոհութիւնը...

-Յերոսներ,- գոչեցին միաձայն իշխանն ու ընկերները,- փա՛ռք ձեզ, մեր քաջարի՛ հերոսներ... մեր հայրենիքի բոլոր նահատակներուն հազար փառք...

* * *

Կռիւը մոլեգնեց նոր թափով:

Ռազմաճակատի ողջ երկայնքով հայ զինուորները, սպաները, մարտական ուղի անցած ազատամարտիկները, մեր հայրենիքի տարբեր մասերէն եկած կամաւորներն ու պարզապէս ժողովուրդ՝ որպէս մէկ մարմին, մէկ ամբողջութիւն, հերոսական կռիւ կը մղէին: Օդին մէջ կը բախուէին անհաշիւ անօդաչու սարքեր, երկնքի մէջ սաւառնող ուղղաթիռներ, կը խոցուէին հրասայլեր, կ'ոչնչացուէին թշնամիի կենդանի ուժեր. այս բոլորին զուգահեռ կը փորուէին նաեւ պաշտպանիչ խրամատներ:

Ողջ ժողովուրդը կարծես կանգնած էր առաջնագիծին եւ ամուր, անխորտակ պարիսպի, ամրակուռ պատնէշի պէս կը պաշտպանէր հայրենի հողը:

Դէպի Արցախ կ'ուղեւորուէին բեռնատարներու շարասիւնները, որոնք տարատեսակ օգնութիւն կը բերէին կռուողներուն՝ Հայաստանէն, Սփիւռքէն, նաեւ դպրոցական աշակերտներու նամակներ ուղղուած զինուոր եղբայրներուն՝ «Մենք քեզ հե՛տ եկք, հա՛յ զինուոր», «Եղբայր, հա՛յր, մեր պահապան» գրութիւններով:

Պատերազմի տեսարանները կը յաջորդէին իրարու. արկերը կը պայթէին աջ ու ձախ, փամփուշտները՝ կը սուրային նետերու պէս: Մատաղիսի մօտակայքը՝ դեռատի տասնվեց-տասնեօթ տարեկան աղջնակ մը մերթ սայթաքելով, մերթ սողալով, մերթ վազելագ, մերթ կրակոցներէն պաշտպանուելով՝ արկերու սոսկալի պայթիւններուն ներքոյ՝ կապոցով հաց կը տանէր դիրքեր իր զինուոր եղբայրներուն, եւ կը թուէր, թէ տեղ չի հասնիր, սակայն արկերը չէին վնասեր քաջ աղջկան եւ ան խիզախօրէն կը յառաջանար պոռալով. «Ձեր արկերու ինկած տեղը մեր այգիները պիտի ծաղկին»...

Մեր հերոսները ականատես եղան այս ողջ տեսարաններուն՝ արագ-արագ անցնելով անոնց կողքէն: Անոնք պահ մը իջած էին զրահամեքենայէն եւ կը քալէին: Երբ կ'անցնէին կիսաամայի դաշտէ մը, յանկարծ Մայքը պոռաց.

-Աննա՛, զգու՛ղջ...

Պոռալէն ետք Մայքը նետուեցաւ դէպի աղջիկը եւ գրկելով զինք՝ սկսաւ միասին մի քանի մեթր հեռու գլորուիլ: Յանկարծ կաղ շուն մը զինք հագիւ քարշ տալով եկաւ եւ անցաւ այն տեղէն, ուրկէ պէտք է անցնէր Աննան, եւ արկի պայթիւնէն ցրիւ-ցրիւ եղաւ:

Աննան վախցած հարցուց Մայքին.

-Ուրկէ՞ գիտցար, որ այդտեղ ռումբ կայ:

-Տէ՛ս, այդ կողմը զգուշացնող ցուցանակ կայ,- մատով դէպի հեռուն երեւցող ցուցանակը ցոյց տուաւ Մայքը,- իսկ դուն մեր ճամբայէն շեղած էիր՝ չնկատելով ցուցանակը:

-Շնորհակալ եմ Մայք,- ըսաւ Աննան:

Այդ պահուն, յանկարծ յայտնուեցան մարտական ուղղաթիռներ:

-Թշնամիիին... պէտք է պատսպարուի՛լ,- հրահանգեց Մայքը եւ սկսաւ պատսպարուելու թաքստոց գտնել: Խուճապ յառաջացաւ, զոր ընդհատեց ծանօթ ձայնը:

Բոլորը պահ մը հայեացքները յառեցին վեր եւ տեսան, որ մէկը անկարգելով ցատկեց ուղղաթիռէն՝ բարձր պոռալով եւ օդին մէջ ձեռքով նշան ըրաւ մեր հերոսներուն:

-Մեր ժագն է,- բացականչեց Մայքը:

Մի քանի վայրկեան անց ժագը կեցած էր իրենց կողքին:

-Ուղղաթիռով լա՛ւ մը պտտեցայ ողջ մարտական դիրքերը. մեր պաշտպանական բանակը ամեն տեղ իր կամքը կը թելադրէ, իսկ թշնամին բոլոր ճակատներուն վրայ սկսած է պարտուութիւն կրել ու անկանոն նահանջել,- հպարտօրէն իր ընկերներուն ըսաւ ժագը:

-Ուռաաա՛յ... ուրեմն յաղթանակը մօժ՛տ է...,- գոչեցին ընկերները:

Ապրիլ 5-ին զինադադարը հաստատուեցաւ. թշնամին հաշտուեցաւ իր պարտութեան մտքին հետ. ռազմական գործողութիւնները դադրեցան:

-Ապրելու Ապրիլ, եւ հետաքրքրականը այն է, որ Ապրիլ 24 տեսած մեր ազգը Ապրիլին յաղթեց ու ապացուցեց իր հերոսական ոգին զօրութիւնը, ցոյց տուաւ յաղթողի իր կեցուածքը,- հիացած ըսաւ Մերին:

-Մենք դարձեալ ապացուցեցինք, որ անընկճելի ենք եւ ձախողուցինք թշնամին յանկարծակի յարձակումով մեր տարածքները գրաւելու ծրագիրը: Այս քառօրեայ պատերազմին թշնամին ունեցաւ հազարաւոր զոհեր ու վիրաւորներ: Յաւօք, մենք կորսնցուցինք մեր հարիւր քաջերը,- տխրութեամբ ըսաւ Իշխանը:

Այնտեղ ի՞նչ կ'երեւի... տեսէ՛ք.... բարձունքին կը փողփողայ Արցախի դրօշակը. ի՞նչ գեղեցիկ է, ի՞նչ խրոխտ ու յաղթանակած,- տեսարանով երջանկացած՝ ընկերներուն ըսաւ Մայքը՝ ցոյց տալով Մռաւ լեռան գագաթին ուղղութիւնը:

...Յանկարծ լսելի դարձան ժամանակի աւարտը ազդարարող զարկերուն ձայները:

-Ընկերներ, արագ...,- մէկ անգամէն պոռաց Մերին եւ ընկերները անմիջապէս իրարու ձեռք բռնած՝ թռան երկինք՝ Իւրաքանչիւրը իր հոգին մէջ պահած կտոր մը Արցախ, որպէսզի այդ կտորով ալ լեցուին ու ապրին հայօրէն:

Երեկոյ Էր, ընկերները նստած էին փայտէ վառարանին շուրջ ու լուռ էին: Իւրաքանչիւրը տարուած իր մտքերով. քառօրեայ պատերազմի ընթացքին տեսածն ու ապրածը խոր հետք ձգած էր անոնց վրայ: Լռութիւնը խախտեց Մայքը.

- Երբ մեծնամ, անձամբ պիտի գամ հայրենիքիս ծառայելու:

-Ես ալ,- վճռական գոչեց Իշխանը:

-Պատերազմի ողջ ընթացքին գլխուս մեջ ալ այդ միտքն էր: Մենք ոչ ոք ենք, եթէ չունինք պատմական հայրենիք,- ակեցուց ժազը:

-Իսկ ես գիրք պիտի գրեմ ապրիլեան պատերազմի մասին,- յուզուած ըսաւ Մերին:

-Ես ալ որոշած եմ, որ երբ այս ամենը ակարտի, ծնողներուս հետ ամառը անցնել Արցախի մէջ, լուսանկարել ամեն սար, ամեն քար ու Արցախի մասին պատմել ամբողջ աշխարհին,- ըսաւ Աննան: Յանկարծ սենեակը լուսաւորուեցաւ ու յայտնուեցաւ մեզի ծանօթ իմաստուն ծերունին: Ընկերները յուզուած նայեցան անոր:

-Ես գիտեմ հիմա ինչ կը կատարուի ձեր հոգիներուն մէջ: Կ'ուզեմ ըսել, որ **Նահատակներու հոգիները Աստուծոյ քով են՝ երկնքի մէջ, ու հիմա ալ այնտեղէն կը հսկեն մեր երկրին անդորրը: Ապրիլեան այս քառօրեան մէկ անգամ եւս ապացուցեց, որ հայը կոտորել հնարաւոր չէ, երբ ան կը համախմբուի: Ասիկա լուրջ յաղթանակ էր:**

Կարծես պատահականութիւն չէ, որ Հայաստանը շրջապատուած է թշնամական երկիրներով, հաւանաբար ատիկա անոր համար է, որ հայը միշտ միասնական ըլլայ, երբեք չպառակտուի ու կանգուն մնայ իր սեգ լեռներուն պէս:



Ծերունին նայեցաւ հերոսներուն եւ յուզուեցաւ. բոլորին աչքերը լեցուած էին հպարտութեան արցունքներով:

* * *

Մեր հերոսները ամրոցի դռները չհասած՝ կանգ առին: Անոնց սրտերը սկսան արագ բաբախիլ: Ներսէն կը լսուէին ուրախ ձայներ, աղմուկ, երաժշտութիւն: Շուրջբոլորը տարածուած էր հայկական տոլմայի ախորժաբեր հոտը:

Ընկերները միասին վազեցին ներս ու քարացած կանգ առին. Ամրոցին մէջ աշխոյժ եռուզեռ էր: Անիկա իրենց գիտցած աւերակ ամրոցը չէր. Նոյն ամրոցը կարծես կախարդանքով մը վերածուած էր փոքրիկ հիւրանոցի: Դահլիճներէն մէկուն մէջ՝ մեծ սեղանի շուրջ՝ նստած էին իրենց ծնողները: Սեղանին հայկական համով ուտեստներ էին, ընտիր կարմիր գինի: Ամէնուր ազգային խորհրդանիշներ կային՝ զէնքեր, կահ-կարասի, պատերուն՝ մեր զօրավարներու, պատմիչներու, արուեստի գործիչներու լուսանկարներ:

Մերին արցունքներով նետուեցաւ մօր գիրկը ու ամուր-ամուր գրկեց զինք:

-Մա՛մ, մամա՛ , ո՞ւր էիր, ես կարօտցայ քեզի, գիշերները քեզի երագիս մէջ կը տեսնէի...

Աննան մօտեցաւ հօրը, գրկախառնուեցան...

- Մեր հերոսները հաւաքուեցան հիւրանոցին մէկ անկիւնը:

-Ես կարծես բան մը յիշեցի,- շշնջաց Իշխանը,- այս ընթրիքի պահուն ներս մտած էր թաւ մօրուքով մարդ մը ու առաջարկած մեզի արշաւի տանիլ դէպի այս հինաւուրց ամրոցի պատմական խորքերը: Ըսաւ՝ դարերը պիտի թռին վայրկեանի արագութեամբ: Մեր ծնողները համաձայնեցան ու մենք զացինք այդ մարդուն ետեւէն:

-Մէկ վայրկեան... փաստօրէն այն ինչ կը կատարուէր մեզի հետ, ընդամենը տեղի ունեցած է մէկ երեկոյի ընթացքին,- Մայքը չէր հաւատար իր կատարած յայտնագործութեան:

-Այնտե՛ղ նայեցէք,- Մերին զարմանքէն լայն բացած աչքերով մատնացոյց ըրաւ պատին կախուած նկարը,- այս մարդը չէ՞ր, այսինքն, այս մարդու որդին էր կարծես, չեմ գիտեր, որ մեզի առաջարկեց այդ արշաւը:

-Այո, շատ նման է,- հաստատեց Ժագը:

Անոնց քովէն անցնող մատուցողը՝ տեսելով ընկերներուն հայեացքները ուղղուած նկարին, ըսաւ.

-Մովսէս Խորենացիի հայոց մեծ պատմիչի նկարն է:

Մեր հերոսները ապշահար նայեցան իրարու, բայց քանի որ շատ կարօտցած էին ծնողները, որոնց «21 դար» արդէն չէին տեսած, վազեցին սեղանին քով:

Ընկերները անմիջապէս միացան կերուխումին, զրոյցներուն ու տօնակատարութեան, սակայն իրենք այլեւս ուրիշ մարդիկ էին՝ հզօրացած սեփական պատմութեամբ ու հպարտ իրենց կայացուցած որոշումով...

...Այդ օրը Արագածի փէշին տեղակայուած ամրոց-հիւրանոցին մէջ տեղի կ'ունենար պատմական իրադարձութիւն. աշխարհի տարբեր կողմեր ապրող խումբ մը ընկերներու հոգիին մէջ ստեղծուած էր սրբազան ՅԱՅՐԵՆԻՔ մը, զոր սիրեցին վեհօրէն եւ ընդմիշտ:

